ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ

Համմիկ Շափաղաթյան

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հասմիկ Շափաղաթյան

Քաղաքական սոցիալականացում

Դասախոսությունների ժողովածու

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2016

ՀՏԴ 32.001:316(042.4)
ԳՄԴ 66.0+60.5g7
Շ 120

Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհուրդը

Շափաղաթյան Հասմիկ Նապոլեոնի
Շ 120 **Քաղաքական սոցիալականացում:** Դասախոսությունների ժողովածու: Եր., ԵՊՀ հրատ., 2016, 130 էջ:

Ժողովածուն նվիրված է քաղաքագիտության արդիական հնչեղություն ունեցող հիմնախնդրի, այն է՝ քաղաքական սոցիալականացման հասկացութային ապարատի վերլուծությանը, սոցիալականացման հետ անմիջական առնչություն ունեցող քաղաքական մասնակցության երևույթի համալիր հետազոտմանը, այդ թվում՝ ձևերի, նրա վրա ազդող գործոնների, դրդապատճառների վերհանմանը, ինչպես նաև այդ համատեքստում հարակից ուրիշ հարցերի պարզաբանմանը:

Ժողովածուն կարող է օժանդակել ուսանողներին «Քաղաքական սոցիալականացում» դասընթացի տեսական քաղաքական պրակտիկայում և կյանքում, ինչպես նաև հետագա հետազոտական աշխատանքներում կիրառելու համար:

ՀՏԴ 32.001:316(042.4)
ԳՄԴ 66.0+60.5g7

ISBN 978-5-8084-2086-1

© ԵՊՀ հրատ., 2016
© Շափաղաթյան Հ., 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան.....5

Դասախոսություն 1
Անհատը որպես քաղաքականության առանցքային դերակատար.....6

Դասախոսություն 2
Անհատի դերի արժևորման հիմնական մոտեցումները քաղաքագիտության մեջ 12

Դասախոսություն 3
Քաղաքական սոցիալականացման հասկացութային բնույթը 28

Դասախոսություն 4
Քաղաքական սոցիալականացման գործակալների դերն անհատի քաղաքական կողմնորոշումների ձևավորման գործում.....46

Դասախոսություն 5
Ընտանիքը որպես սոցիալականացման առաջնային գործակալ. Քաղաքական սոցիալականացման հիմնախնդիրները դեռահասային տարիքում.....53

Դասախոսություն 6
ՁԼՄ-ը որպես անհատի քաղաքական սոցիալականացման հզոր գործակալ 60

Դասախոսություն 7
Մասնակցային գործընթացները և անհատականացման հիմնախնդիրները 73

Դասախոսություն 8
Քաղաքական մասնակցության չափումները.....89

Դասախոսություն 9
Ընտրություններն իբրև զանգվածային մասնակցության ձև 97

Դասախոսություն 10
Քաղաքական մասնակցության դրդապատճառային հիմքերը..... 111

Դասախոսություն 11
Քաղաքական մասնակցության վրա ազդող գործոնները 117

Դասախոսություն 12
Քաղաքական մասնակցությունը՝ արդի ժողովրդավարության հրամայական.....124

Առաջաբան

Անհատի և քաղաքականության փոխհարաբերության, ինչպես նաև քաղաքականության մեջ անհատի դերի հիմնահարցերը միշտ էլ համարվել են արդիական և ոչ բավարար ուսումնասիրված: Սա, թերևս, պայմանավորված է այն անհերքելի ճշմարտությամբ, որ քաղաքականությունը և մարդը փոխկապակցված են. մարդուց դուրս և մարդուց անկախ չկա քաղաքականություն և քաղաքական հարաբերություններ:

Քաղաքականության մեջ մարդկային հիմնախնդիրը ներառում է մարդու սոցիալ-քաղաքական իրավունքները և դրանց երաշխավորվածության խնդիրները լայն իմաստով: Հայաստանի Հանրապետությունում, ինչպես ետխորհրդային մյուս երկրներում, դեռ շատ անելիքներ կան պետական դաստիարակության, իրավունքների և պարտականությունների երաշխավորման, ժողովրդավարական ընտրություններ ապահովելու ուղղությամբ:

Ժողովածուում արծարծվել են առավելապես այս հիմնահարցերը, քանի որ շարժընթացի մեջ գտնվող քաղաքական իրականությունը նոր խնդիրների և նոր մարտահրավերների առջև է կանգնեցնում շարքային քաղաքացիներին: Նոր հորիզոններ ու հնարավորություններ են բացվում հատկապես նրանց համար, ովքեր ցանկանում են ակտիվորեն ներգրավվել իրենց երկրի, համայնքի հասարակական-քաղաքական գործընթացներում: Այս տեսանկյունից տակավին հետազոտման և ուսումնասիրության կարիք ունեն քաղաքական սոցիալականացման, քաղաքական մասնակցության, քաղաքական վարքի և հոգեբանության հետ կապված հիմնահարցերը, այսինքն այն բոլոր գործընթացների և երևույթների համալիր ամբողջությունը, որը ապահովում է անհատի և քաղաքականության հետադարձ կապը:

Դասախոսություն 1

Անհատը որպես քաղաքականության առանցքային դերակատար

Կուսակցությունների, քաղաքական ընտրախավի, հասարակական և այլ կազմակերպությունների քաղաքական սուբյեկտը անհատն է: Այն սկզբնական սուբյեկտ է, որովհետև անհատներից են կազմված քաղաքական ընտրախավերը, խմբակցությունները, շարժումները, դասակարգերը, ազգերը և, վերջապես, անհատները պետության քաղաքացիներ են, ուստի և համագործակցում են իշխանության հետ: Արիստոտելը մարդու էությունը սահմանելիս նրան անվանել է «քաղաքական կենդանի»: Ըստ նրա՝ «Բոլոր կենդանի էակներից միայն մարդն է, որ օժտված է խոսելու կարողությամբ: Մարդկանց այս առանձնահատկությունը, որն առանձնացնում է նրանց մյուս բոլոր արարածներից, բնորոշվում է նրանով, որ մարդն ընդունակ է տարբերել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ արդարությունը և անարդարությունը, չարն ու բարին և նման մի շարք երևույթներ: Այս ամենի արդյունքում ստեղծվում է ընտանիքն ու պետությունը»:

Նոր սերնդի մուտքը քաղաքական բարդ աշխարհ ենթադրում է քաղաքական նպատակների և արժեքների նկատմամբ որոշակի վերաբերմունքի ձևավորում, որոնք նա ձեռք է բերում որոշակի միջավայրում:

Ըստ Լենինի՝ անկիրթ մարդը քաղաքականությունից դուրս է: Նրան պետք է նախ այբուբենը սովորեցնել, առանց որի քաղաքականություն չկա, գոյություն ունեն միայն լուրեր, բամբասանքներ, բայց ոչ քաղաքականություն:

Քաղաքականության մեջ անհատականության հիմնախնդիրը ներառում է մարդու սոցիալ-քաղաքական իրավունքների և դրանց երաշխավորվածության մեխանիզմները լայն իմաստով: Հայաստանի Հանրապետությունում, ինչպես ետխորհրդային մյուս երկրներում, դեռ շատ անելիքներ կան պետական դաստիարակության, իրավունքների և պարտականությունների երաշխավորման, ժողովրդավարական ընտրությունների ապահովման ուղղությամբ: Մատնանշելով այս խնդիրները՝ միաժամանակ հասկանում ենք, որ դրանք միշտ էլ համարվում են երկրորդական, երբ երկրում դեռևս չկան քաղաքա-

կիրթ աշխարհին բնորոշ նվազագույն կենսապայմաններ:

Համաշխարհային քաղաքականության անհատական չափումները մշտապես գտնվել են հետազոտողների ուշադրության կենտրոնում, սակայն ուսումնասիրվել է առավելապես քաղաքականություն կերտող անհատների, այն է՝ լիդերների գործունեությունը: Եթե պետությունը, միջազգային կազմակերպությունները դիտարկվում էին որպես իշխանության կենտրոններ, ապա այժմ նկատվում է իշխանության հեռացում ավանդական կենտրոնից, որը մատնանշվում է Թոֆլերի, Դրուվերի, Ռոզենբաումի կողմից: Ըստ Թոֆլերի, զարգանում է ամբողջ համաշխարհային իշխանության համակարգը, փոփոխվում է իշխանության իրականացման հերթականությունը, և ձևափոխվում է հենց իշխանության բնույթը: Այս ամենը նոր պայմաններ է ստեղծում համաշխարհային հարթությունում, որտեղ ոչ միայն փոփոխվում են ավանդական սուբյեկտների դերը և նշանակությունը, այլև առաջանում են նոր հնարավորություններ ոչ պետական դերակատարների և հատկապես անհատի բացահայտման համար: Նկատվում է նաև անհատի «վերադարձ» միջազգային հարաբերությունների ոլորտ, որի մասին նշում են արևմտյան տեսաբանները:

Այս բազմակենտրոն աշխարհում ինքնուրույնություն ունեցող սուբյեկտների շարքում հատուկ դեր ունի անհատը: Մակրոմակարդակում տեղի ունեցող փոփոխությունները լուրջ ազդեցություն են գործում միկրոմակարդակի վրա, և որպես դրանց հետևանք, արդեն գործ ունենք նոր տիպի անհատի հետ, ով քաղաքականապես ձեռնահաս է, ակտիվ ու կրթված: Այս ամենը հանգեցնում է ներքին ինքնագնահատականի և ինքնանույնականացման փոփոխության, այսինքն անհատն ընկալում է համակարգի կողմից պահանջվող նոր արժեքները, որոնք ուղղված են համակարգի զարգացմանը և ինքնապահպանմանը:

Մեծապես կարևորվում է անհատի հետադարձ կապի մեխանիզմը այն հասարակության հետ, որտեղ նա անցնում է նույնականացման գործընթացներով: Այսինքն, քաղաքական կյանքի փոփոխություններն էականորեն ազդում են անհատի, քաղաքացու բարոյա-հոգեբանական արժեհամակարգի վրա: Այս հիմնահարցը մեզանում նույնպես շատ կարևոր է, քանի դեռ հաղթահարված չեն խորհրդային անցյալի շատ կարծրատիպեր:

Անհատի և քաղաքականության փոխհարաբերության ուսումնասիրությունը կարևորվում է նաև գլոբալացման տեսանկյունից: Գլո-

բալացումը, որպես ժամանակակից աշխարհի փոխկապվածությունների աճի գործընթաց, անցում զարգացման տարածաշրջանային ձևից գլոբալի, մի կողմից հանգեցնում է նրան, որ համաշխարհային քաղաքականության զարգացման խնդիրները չեն կարող լուծվել միայն ազգային պետության սահմաններում, մյուս կողմից՝ արդի ժամանակաշրջանում կարևորագույն խնդիրները հակված են մարդաբանական չափումների: Տեղին է նշել Շեստոպալի այն միտքը, որ գլոբալ խնդիրների ուսումնասիրությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ դրանք դիտարկվում են որպես համամարդկային:

Անհատը, գիտակցելով գլոբալ խնդիրները և դրանց լուծման մեթոդները, դրանով իսկ որոշում է իր մասնակցության աստիճանն այդ որոշումների ընդունմանը: Իհարկե, անհատի մասնակցության աստիճանը տարբերվում է հասարակությունից հասարակություն, սակայն, կապված գլոբալացման գործընթացի հետ, ակնհայտ է մի էական փոփոխություն: Եթե նախկինում անհատը բացառապես ազգային պետության սահմաններում էր, ապա ժամանակակից անհատն արդեն հնարավորություն է ստացել դուրս գալ միջազգային ասպարեզ՝ իր ծրագրերը, նպատակները ուրվագծելու, ինչպես նաև դրանց հասնելու մարտավարությունը մշակելու համար:

Ժողովրդավարությունը կարող է կայանալ և ամրապնդվել միայն այն դեպքում, երբ ժողովրդավարական արժեքները և նորմերը դառնում են հասարակության մեծ մասի դիրքորոշումները: Բառի բուն իմաստով ժողովրդավարական դառնալու համար մարդը պետք է հասունանա և սոցիալականացվի ժողովրդավարության համապատասխան սոցիալական, քաղաքական և մշակութային պայմաններում: Ինչպիսի հասարակությունում էլ ապրի մարդը, նա, անկասկած, ձևավորում է իր արժեքային կողմնորոշումները՝ աստիճանաբար յուրացնելով հասարակության մեջ գերիշխող մշակութային նորմերը և քաղաքական կյանքի ստանդարտները: Այս գործընթացը, որը փաստում է հասարակության մեջ ձևավորված քաղաքական մշակույթի նորմատիվ-արժեքային համակարգի աստիճանական յուրացումը, կոչվում է *քաղաքական սոցիալականացում*:

«Սոցիալականացում» տերմինը գիտական շրջանառության մեջ է դրվել XIXդ.-ի վերջին ամերիկացի սոցիոլոգ Գիդդինգի և ֆրանսիացի հոգեբան Տարդի կողմից, ովքեր սոցիալականացում ասելով հասկանում էին մարդու սոցիալական բնույթի զարգացումը և անհատի ձևավորումը սոցիալական միջավայրի ազդեցությամբ: Իսկ *քաղա-*

քական սոցիալականացում տերմինը քաղաքական գիտության մեջ առաջին անգամ շրջանառվեց 1959 թ.-ին, երբ Հերբերտ Հյումանը հրատարակեց իր «Քաղաքական սոցիալականացում» աշխատությունը: Նա տերմինը մեկնաբանեց որպես սոցիալական կառուցվածքների ուսուցում՝ միջնորդավորված սոցիալականացման գործակալներով: Հետազոտողներից Ռենշոնը նշում է, որ 1960-ական թթ.-ին քաղաքական սոցիալականացման հիմնախնդիրների նկատմամբ ուշադրությունը հատկապես մեծ էր վարքաբանական տեսություններում: Համաձայն Դալի՝ վարքաբանությունը քաղաքական գործընթացների ուսումնասիրության ժամանակ ընդգծեցին մի քանի դրույթներ, որոնք ընկած են քաղաքական սոցիալականացման հիմքում, որոնցից ամենահիմնականը հանգում է նրան, որ անհատը քաղաքական գործընթացների և ինստիտուտների գործառնության գլխավոր առանցքն է, և պետք է զարգացնել ընդհանրական տեսություն անհատի քաղաքական վարքի և դրա դրդապատճառների վերաբերյալ:

Ելնելով նրանից, որ քաղաքական սոցիալականացումն ընդգրկում է ողջ չափահասության ժամանակաշրջանը՝ սոցիալականացման տեսաբաններն առանձնացնում են երկու մակարդակ. ***մակրոմակարդակում*** քաղաքական սոցիալականացումը դիտարկվում է որպես քաղաքական մշակույթի կարևորագույն մեխանիզմ, որը հնարավոր է դարձնում ժողովրդավարական ինստիտուտների և գործընթացների գործառությունը (Ալմոնդ և Վերբա) կամ քաղաքական համակարգին աջակցությունը (Իստոն): Այսինքն, ինչպես է ընթանում անձի մուտքը քաղաքականություն քաղաքական համակարգերի շրջանակներում, ինչպիսի գործոնների ազդեցությամբ է ընթանում քաղաքական վարքի և գիտակցության ձևերի ստեղծումը, ինչպես են տարբեր նորաստեղծ կուսակցություններ, մտնելով այս կամ այն երկրի քաղաքական համակարգի մեջ, անդամագրում նոր անդամներ, ինչպես է ձևավորվում քաղաքական գիտակցությունը գաղափարախոսության ազդեցությամբ և այլն: ***Միկրոմակարդակում*** դիտարկվում են անձի ներգրավման գործընթացները որևէ կոնկրետ քաղաքական կազմակերպության մեջ, նրա կողմից որոշակի դերերի, վարքի կաղապարների յուրացումը:

Քաղաքական սոցիալականացում ասելով ի սկզբանե հասկանում էին քաղաքական գիտելիքների, արժեքների, նորմերի յուրացում, քաղաքական փորձի փոխանցում և ձեռքբերում, որոնք կուտակվել են

նախորդ սերունդների կողմից և թույլ են տալիս անհատին դառնալ հասարակական-քաղաքական կյանքի լիիրավ մասնակից, կողմնորոշվել բարդ քաղաքական իրականության մեջ: Սոցիալականացման արդյունքում անհատի մոտ ձևավորվում են այնպիսի հատկանիշներ, ունակություններ, որոնք հնարավորություն են տալիս նրան հարմարվել կոնկրետ քաղաքական համակարգին և դրա սահմաններում իրականացնել որոշակի գործառույթներ: Քաղաքական արժեքները, ավանդույթները, վարքաձևերը և քաղաքական մշակույթի այլ տարրեր մարդու կողմից յուրացվում են անընդհատ, և այս գործընթացը շարունակվում է այնքան ժամանակ, քանի դեռ մարդն ապրում է: Յուրացնելով գաղափարներ, հմտություններ՝ մարդը միաժամանակ կարող է ընտրել իր համար իշխանության հետ շփվելու նոր միջոցներ՝ ազատվելով նրանցից, որոնք գործնականում կիրառելի չեն: Քաղաքական սոցիալականացումը հասարակության քաղաքական նորմերի, արժեքների յուրացում է անհատի կողմից, քաղաքական փորձի և կողմնորոշումների ձեռքբերում, որոնք անհրաժեշտ են քաղաքական կյանքին մասնակցելու համար: Սոցիալականացման գործընթացը լուծում է անհատի խնդիրները՝ օգնելով նրան դառնալ իր խմբի լիազոր անդամ, նաև ապահովում է հասարակության կենսագործունեությունը և սոցիալ-քաղաքական արժեքների վերարտադրությունը: Համակարգի տեսանկյունից քաղաքական սոցիալականացման ընթացքում տեղի է ունենում նրա ինստիտուտների վերարտադրություն, իրականացվում է իրենց արդիականությունը չկորցրած քաղաքական արժեքների փոխանցում նոր սերունդներին: Ինչպես նշում է Շեստոպալը, կենսական փուլի ընթացքում նոր մասնակիցներին ցիկլի մեջ ներգրավվելու, նրանց պաշտոնական արժեքներով վարակելու և դրանով իսկ համակարգը կայունացնելու անհրաժեշտություն է առաջանում: Իսկ քաղաքական սոցիալականացման ուսումնասիրությունների զարգացման շրջանում արդեն 1970 թ.-ին Գրինստեյնը փաստեց. «Քաղաքական սոցիալականացումն աճող արժեթուղթ է»: Համաձայն Գրինստեյնի՝ կարելի է առանձնացնել քաղաքական սոցիալականացման հայեցակարգի առնվազն 4 ոլորտ.

1. դեռահասների քաղաքական կողմնորոշումների ուսումնասիրություն,
2. գործող նորմերի և արժեքների յուրացման ուսումնասիրություն,
3. ցանկացած քաղաքական ուսմունքի ուսումնասիրություն

մարդու կյանքի բոլոր փուլերում՝ անկախ այն հանգամանքից թե որքանով է այն մոտ օրինաչափություններին և որքանով՝ ոչ,

4. սոցիալականացման գործընթացի փաստացի հետազոտություն՝ վերը նշված ցանկացած նշանակությամբ՝ ուշադրությունը կենտրոնացնելով սոցիալականացվողների և սոցիալականացման գործակալների վրա:

Քաղաքական սոցիալականացման տեսությունը ենթարկվել է քննադատության մի շարք թերությունների համար: Օրինակ, համաձայն Գրինստեյնի՝ քաղաքական սոցիալականացման հետազոտությունները «ստատուս-քվո»-ի հակվածություն ունեն, քանզի, ինչպես նա նշում է, այդ հետազոտություններն ի վիճակի չեն բացատրելու փոփոխությունները: Ըստ նրա, ի հավելումն այն փաստի, որ գոյություն ունեցող նորմերը կարող են յուրացվել, հնարավոր է նաև սովորել մերժել կամ անտեսել դրանք:

Չնայած այն բանին, որ քաղաքական սոցիալականացումը միշտ կրում է կոնկրետ ժամանակահատվածի դրոշմը, այնուամենայնիվ, քաղաքական սոցիալականացումը տարբեր սերունդների միջև քաղաքական մասնակցության տարբերությունների բացահայտման և մեկնաբանման բանալի է, իսկ անհատը՝ սոցիալականացման օբյեկտ և սուբյեկտ:

Հանձնարարվող գրականություն

1. **G. Almond and S. Verba**, The Civic Culture: Political Attitudes and Democracy in Five Nations, Princeton, 1963, p. 40-45,

2. **Е. Б. Шестопал**, Политическая психология, М., 2002, стр. 130

3. **Жан-Мари Дэнкен**, Политическая наука, М., 1993, стр. 93

4. **Д. В. Ольшанский**, Политическая психология, Санкт-Петерб., 2002, стр. 520-522

5. **С. Липсет**, Политическая социология// Американская социология, М., 1972, стр. 217

Դասախոսություն 2

Անհատի դերի արժևորման հիմնական մոտեցումները քաղաքագիտության մեջ

Ըստ անտիկ մեծագույն մտածող Արիստոտելի՝ մարդը քաղաքական էակ է, հատկապես, երբ նա պետության քաղաքացի է: Պետությունը, ըստ Արիստոտելի, մարդկանց շփման ձևերից է, որոնցից բարձրագույնը քաղաքական շփումն է: Այն, որ մարդը քաղաքականության կերտողն էր անտիկ աշխարհում, ակնհայտ է, բայց միայն պոլիսի անդամ հանդիսացող մարդն էր համարվում քաղաքական էակ: Փաստորեն հին հունական դեմոկրատիան իր բնույթով բացառող էր, քանզի սահմանափակ թվով մարդ-անհատներ էին մասնակցում Ժողովրդական ժողովին, այսինքն՝ կարևորագույն քաղաքական որոշումների ընդունմանը:

Հասարակության զարգացման ժամանակակից փուլի փիլիսոփայական քաղաքական վերլուծություններում ի հայտ է եկել պերսոնալիստական նոտա: Արդի դարաշրջանում հրամայական է դարձել հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, նաև քաղաքական ոլորտում անհատին առաջնային պլան մղելու միտումը, ինչն իհարկե, արդյունք է նոր դարաշրջանում կատարված բուրժուական հեղափոխությունների, որոնք եկան խորացնելու մարդու իրավունքները և ազատությունները: Հատկապես, երբ XX դարի երկրորդ կեսին փլուզվեցին ամբողջատիրական վարչակարգերը և սկիզբ առավ հասարակական կյանքի ժողովրդավարացումը, հասարակությունը դադարեց դիտարկվել և գործառնել որպես մի անդեմ կոլեկտիվ, որը ղեկավարվում է հերոսի կամ առաջնորդի կողմից, այլ սկսեց դիտարկվել որպես անհատների ամբողջություն: Բավական երկար ժամանակ քաղաքական պրակտիկայում անհատը չի ճանաչվել քաղաքական գործընթացների ինքնուրույն սուբյեկտ, քանզի մասնակցում էր քաղաքական կյանքին, ներգրավված էր քաղաքական որոշումների ընդունման գործընթացում միայն այնքանով, որքանով հանդիսանում էր որոշակի կառույցի անդամ: Բայց սա հիմք չի տալիս պնդելու, որ երկար պատմություն ունեցող քաղաքականության տեսությունը չի ուսումնասիրել քաղաքականության մեջ անհատի դերի և նշանակության հիմնահարցը: Նույնիսկ ավելին, քաղաքական շատ մտա-

ծողներ այս հիմնահարցին արժանի ուշադրություն են հատկացրել, պարզապես նրանց աշխատություններում խոսք է գնացել ակնառու պետական, քաղաքական գործիչների մասին, այսինքն նրանց, ովքեր ազդել են զանգվածների և քաղաքականության վրա: Ներկա ժամանակաշրջանում արձանագրելով անհատի դերի բարձրացումը քաղաքական գործընթացում՝ նկատի չունենք միայն այն անհատին, ով ընդունում է համընդհանուր կարևորություն ունեցող որոշումներ, այլ հասարակ շարքային քաղաքացուն: Քաղաքականությունը սոցիալական երևույթ է, մարդուց դուրս և մարդուց անկախ քաղաքականություն և քաղաքական հարաբերություններ չկան, ուստի մարդանհատի՝ քաղաքացու առկայությունը կենսական բովանդակություն է հաղորդում քաղաքականությանը: Որքան էլ կարևորվեն սոցիալական խմբերը, զանգվածային շարժումները, այնուամենայնիվ, քաղաքականության առաջնային և հիմնարար էլեմենտն անհատն է, ում շահերն ու արժեքային կողմնորոշումներն են որոշում քաղաքականության բովանդակությունը: Այստեղ տեղին է մեջբերել անտիկ մտածող Պրոտագորասի հանճարեղ միտքը, որ «մարդն է բոլոր իրերի չափանիշը»:

Ուշադրությունը կենտրոնացնելով քաղաքականության մեջ անհատի դերի վրա, այնուամենայնիվ, պետք է խուսափել 2 ծայրահեղություններից.

ա) երբ անհատը նույնացվում է կուսակցությունների, զանգվածների, դասակարգերի հետ,

բ) երբ, գերագնահատելով անհատի դերը, նրան դարձնում են ամբողջ քաղաքականության կերտողը:

Անհատի դերը քաղաքականության մեջ քաղաքագիտության հիմնահարցերից է, որը սովորաբար դիտարկում է հասարակությունը որպես որոշակի անհատներից բաղկացած միավորում: Անհատի դերը քաղաքականության մեջ կարևորվում և ուսումնասիրվում է քաղաքական սոցիոլոգիայի կողմից: Անձը հանդես է գալիս որպես սոցիալական անհատ՝ քաղաքական համակարգի առաջնային տարր, ով ունի քաղաքական իրավունքներ, ազատություններ և անձնական պատասխանատվություն է կրում քաղաքական ոլորտում իր վարքի դրսևորումների համար: Փաստորեն, քաղաքական գործընթացներին ակտիվ մասնակցություն ցուցաբերող անհատը քաղաքականապես չափահաս անձ է, ով ի զորու է գնահատել քաղաքական իրականությունը և համապատասխան որոշումներ կայացնել: Այստեղից

կարող ենք եզրակացնել, որ քաղաքականապես անչափահաս անձը քաղաքական շահարկումների օբյեկտ է:

Խոսելով քաղաքականության անձնավորված չափման մասին՝ անհրաժեշտ ենք համարում նշել քաղաքական մտքի պատմությունում պայմանականորեն առանձնացված քաղաքականության անձնավորված չափման *երկու ուղղությունների մասին*: *Առաջինը* կապված է Արիստոտելի անվան հետ: Արիստոտելի մոտ մարդը քաղաքականության կարևորագույն չափանիշ էր, և քաղաքական կյանքը դիտարկվում էր համակցված մարդու բնույթի հետ: *Մյուս* կոնցեպցիան կապված է Մաքիավելիի անվան հետ, որի հիմքում ընկած է քաղաքականության արդյունավետությունը՝ կապված պետության գործառնության վրա նրա ազդեցության հետ, ընդ որում՝ մարդկանց միջև հարաբերությունները որակվում են որպես թշնամական:

Ըստ Մաքիավելիի՝ իշխանը պետք է ենթադրի, որ բոլոր մարդիկ չար են: Նշվածը հիմք չէ, որ Մաքիավելիի անունը կապի միայն կառավարման ամբողջատիրական համակարգի հետ: Քաղաքականությունն իր ռեալ արտահայտմամբ կոնկրետ սուբյեկտների (ակտորների) բազմազան գործողությունների և փոխգործողությունների ամբողջություն է: Եվ ահա Ֆրանսիացի քաղաքագետ Դենկենն այն հարցին, թե ովքեր են քաղաքական աշխարհի ակտորները, տալիս է հետևյալ պատասխանը. «Կարելի է ասել, որ քաղաքականության աշխարհում որպես սուբյեկտներ հանդես են գալիս այնպիսի մեծ խմբեր, ինչպիսիք են դասակարգերը և ազգերը: Եվ վերջապես կարելի է համաձայնվել ընթացիկ տեսակետի հետ, այսինքն, որպես սուբյեկտներ ճանաչել խմբերին՝ կազմավորված ինստիտուցիոնալացման գործընթացի հիմքով, որոնք գոյատևում են անկախ անհատներից՝ հանդիսանալով նրանց կոնկրետ հիմքը»: Սակայն հեղինակն ընդունելի է համարում առաջին տարբերակը:

Անհատի դերը քաղաքականության մեջ անփոխարինելի է, քանզի առանձին անհատներ, միմյանց հետ հարաբերակցելով և փոխգործելով, հանդիսանում են ցանկացած կայուն, ժողովրդավարական սկզբունքներով գործառնող համակարգի գործունեության նպատակ: Այս առումով քաղաքականության մեջ անհատի կարգավիճակի առանձնացումը և քննարկումը մեծ կարևորություն ունի: «Կարգավիճակ» կատեգորիայի կիրառումը գործունեության սուբյեկտների նկատմամբ մատնանշում է նրանց տեղը հասարակական հարաբերություններում: Խոսելով անհատի սոցիալ-քաղաքական կարգավի-

ճակի մասին՝ անհրաժեշտ եմ համարում ընդգծել, որ անհատը իր պահանջները և շահերը բավարարելու ձգտմամբ փորձում է ուղղակի կամ անուղղակի ձևով մասնակցել, ազդել հասարակական-քաղաքական գործընթացների կառավարման վրա և կապեր է հաստատում տարբեր ինստիտուտների հետ: Նման փոխհարաբերություններն իրենց դրոշմն են թողնում անհատի սոցիալ-քաղաքական կարգավիճակի վրա, որն ուսումնասիրելու ընթացքում աչքի են ընկնում որոշ առանձնահատկություններ: Նշեմ, որ անհատի սոցիալ-տնտեսական, սոցիալ-մշակութային և սոցիալ-քաղաքական կարգավիճակների միջև սերտ կապ գոյություն ունի: Հստակ կարող ենք ասել, որ սոցիալ-տնտեսական բարձր կարգավիճակը նպաստում է սոցիալ-քաղաքական կարգավիճակի ցուցիչի բարձրացմանը և հակառակը:

Հաջորդ առանձնահատկությունը այն է, որ նշված երեք կարգավիճակները միաժամանակ չեն կարող գերակայել, և դրանցից որևէ մեկի գերակայությունը կապված է տվյալ անհատի գործունեության ոլորտի և նախասիրությունների հետ: Այս կարգավիճակներից մեկի ցուցանիշների փոփոխությունը հանգեցնում է մյուսների բնույթի փոփոխմանը: Ս. Լիպսեթն այս առումով նշում է. «Մարդը մուտք է գործում սոցիալական աստիճանակարգման այլ մակարդակ և, որպես կանոն, փոխում է ընկերական միջավայրը, միանում է նոր շրջապատի, փոխում է բնակության վայրը: Երբեմն նույնիսկ փոխում է իր կրոնական պատկանելությունը և անունը: Շատ հաճախ փոփոխություն են կրում նաև նրա քաղաքական հայացքները»: Անհատի կարգավիճակների համամասնությունը հասարակության կայունության կարևորագույն գործոնն է: Անհատի համար պակաս կարևորություն չի ներկայացնում սոցիալ-հոգեբանական կարգավիճակը, որի էությունն արտահայտվում է քաղաքականության սուբյեկտի նպատակասլաց, մոտիվացված ստեղծագործական զարգացմամբ, ինչպես նաև հասարակության պահանջներին համապատասխան անձնական մասնագիտական որակների ձեռքբերմամբ:

Անհատի կարգավիճակի հետ սերտորեն կապված է նրա ազդեցության աստիճանը պետության և նրա մարմինների վրա: Այս ազդեցությունը կարող է արդյունավետ և որոշիչ լինել որոշակի պայմանների առկայության դեպքում: Այս պայմանների մեջ առաջնահերթ է համարվում անհատի քաղաքական մշակույթի բավարար մակարդակը, այսինքն, հասարակության մեջ տեղի ունեցող քաղաքական գործընթացներին ճիշտ արձագանքելու, դրանք ադեկվատ կերպով

գնահատելու ունակությունը: Իհարկե, կարևոր նշանակություն ունեն քաղաքագիտական գիտելիքները: Որպեսզի անհատը կարողանա օբյեկտիվ գնահատի ցանկացած, այդ թվում և քաղաքական իրավիճակը, պարտադիր պետք է տիրապետի անկողմնակալ տեղեկատվության: Մենք հատկապես կարևորում ենք տեղեկատվության նշանակությունը, քանզի ապրում ենք մի ժամանակաշրջանում, որտեղ հաջողության հասնելու գրավականը առավելապես տեղեկատվական ռեսուրսի տիրապետման մեջ է:

Հաջորդ կարևոր պայմանն անձի, որպես քաղաքականության սուբյեկտի համար, այլընտրանքային տեսակետներին ծանոթանալու հնարավորությունն է, և այս տեսակետից կարևորում եմ կարծիքների բախման, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում պլյուրալիզմի առկայության արդյունավետությունը: Հասարակական-քաղաքական կյանքին ակտիվ մասնակցությունը, որոշումների ընդունման գործընթացի վրա ազդեցություն ունենալու հնարավորությունը անձի քաղաքականության լիարժեք սուբյեկտ դառնալու կարևոր նախադրյալներ են: Իսկ որպեսզի անհատն իրականացնի սուբյեկտի իր դերը, հաճախ պետք է ջանքերը միավորի այլ անհատների, կազմակերպությունների, միությունների ջանքերի հետ: Նշված բոլոր պայմանները առկա են միայն ժողովրդավարական սկզբունքներով գործառնող քաղաքական համակարգում, որտեղ գործում են *«մուտքի»* և *«ելքի»* մեխանիզմները: Հետևապես, գուցե և ամենաէական նախապայմանը քաղաքական համակարգի բնույթն է, ռեժիմի լեգիտիմությունը:

Անձի՝ որպես քաղաքականության սուբյեկտի գործունեությունը պայմանավորված չէ միայն այն պայմաններով, որոնցում իրականացվում են նրա քաղաքական գործառույթները: Շատ բան կախված է նաև անհատի քաղաքական ակտիվությունից: Քաղաքական ակտիվությունը սոցիալական ակտիվության տեսակներից մեկն է՝ կապված իշխանության հետ: Քաղաքական տարածության մեջ հանդիպում են քաղաքական ակտիվության հետևյալ տիպերը բնութագրող անհատների.

ա) բարձր քաղաքական ակտիվությամբ և քաղաքական կյանքին մասնակցող անհատ,

բ) անձնապես քաղաքականությանը չմասնակցող, բայց քաղաքականության հանդեպ հետաքրքրություն դրսևորող անհատ,

գ) կոմպետենտ կամ ոչ կոմպետենտ քննադատություն դրսևորող և քա-

ղաքաղաքականությանը անմիջապես մասնակցող կամ չմասնակցող անհաս,

դ) քաղաքականության նկատմամբ անտարբեր կամ բացասական վերաբերմունք ունեցող, պասիվ վարք դրսևորող անհաս,

ե) քաղաքականությունից օտարված, իր քաղաքական մասնակցության նկատմամբ ժխտողական վերաբերմունք ունեցող և ապոլիտիկ անհաս: Ըստ իս, միայն քաղաքականապես անչափահաս անհատը, քաղաքացին կարող է ունենալ քաղաքականության հանդեպ պասիվ, անտարբեր վերաբերմունք: Քանզի նման համոզմունքներ ունեցող անձինք հաշվի չեն առնում կամ չեն գիտակցում այն պարզ ճշմարտությունը, որ, եթե նույնիսկ իրենք չեն մտածում քաղաքականության մասին, միևնույն է, քաղաքականությունն է մտածում իրենց մասին: Ուստի այն համոզմանն եմ, որ քաղաքականապես անչափահաս անձը ոչ թէ քաղաքականության սուբյեկտ է, այլ քաղաքական շահարկումների օբյեկտ:

Քաղաքականությունն իր նեղ քաղաքական նշանակությամբ իրենից ներկայացնում է սուբյեկտների փոխհարաբերություններ՝ կապված պետական իշխանության, նրա գործառույթների, մեթոդների և նպատակների հետ: Քաղաքականության սուբյեկտների առանձնացման համար հիմք է տվյալ ոլորտում նրանց կոնկրետ գործողությունները, քաղաքական որոշումների ընդունման վրա նրանց ազդեցության մակարդակը, նրանց կազմակերպվածության աստիճանը և այլն: Լայն առումով քաղաքականության սուբյեկտները բոլոր նրանք են, ովքեր ռեալ մասնակցություն ունեն պետության հետ իշխանական փոխհարաբերություններում: Մասնագիտական գրականության մեջ հանդիպում ենք հետևյալ տեսակետին, ըստ որի,. «Քաղաքականության սուբյեկտ» հասկացությունը մատնանշում է քաղաքական կյանքին մասնակցելու ունակությամբ օժտված, գործունակ և իր քաղաքական մասնակցության համար պատասխանատվություն կրող, որոշակի նպատակ ու կամք ունեցող, գիտակցված վարք դրսևորող անձի առկայության փաստը: Քաղաքականության սուբյեկտները քաղաքականապես սոցիալականացված անձինք են, որոնք իրենց քաղաքական կեցության և կարգավիճակի հիմքով, որոշակի շահերից ու նպատակներից ելնելով, մասնակցում են քաղաքական իշխանական հարաբերություններին, ձգտում ձեռք բերել քաղաքական իշխանություն, պահպանել և իրականացնել այն՝ որպես հասարակության կառավարման անհրաժեշտ միջոց:

Քաղաքականության սուբյեկտների սահմանումների, դերի և նշանակության մասին տարբեր մտածողներ ունեն տարբեր տեսակետներ: Օրինակ՝ ըստ Պլատոնովի՝ քաղաքականության սուբյեկտներն այն անհատներն են, սոցիալական խմբերն ու շերտերը, որոնք մասնակցում են պետական իշխանության իրականացման գործընթացին կամ ներազդում դրա վրա: Ըստ Բելյակովիչի՝ քաղաքականության սուբյեկտը կիրառական քաղաքականության կրողն է, որն առաջացնում է որոշակի փոփոխություններ հասարակության քաղաքական հարաբերություններում: Բելյակովիչը կարևորում է այն հանգամանքը, որ քաղաքականության սուբյեկտներն օժտված են քաղաքական երևույթների վերլուծական ունակությամբ, ունեն քաղաքական գիտելիքների որոշակի մակարդակ և իրենց քաղաքական գործողությունների համար ունակ են պատասխանատվություն կրել: Չնայած սահմանումների տարբերություններին՝ բոլոր մասնագետները համամիտ են, որ գոյություն ունի քաղաքականության սուբյեկտների 3 հիմնական տիպ. *անհատական* (միկրոակտոր), *խմբային* (մակրոակտոր) և *ինստիտուցիոնալ* (կազմակերպչական ակտոր):

Խմբային սուբյեկտների շարքին են դասվում տարբեր տեսակի հանրույթները, կոլեկտիվները, որոնք կարող են լինել ոչ պաշտոնական, ժամանակավոր, լոկալ, միջազգային և այլն: Ինչ վերաբերում է հանրությանը, նշեմ, որ վերջին ժամանակներում քաղաքագիտական գրականության մեջ ավելի հաճախ է հիշատակվում հանրության՝ որպես քաղաքականության սուբյեկտի դերի ու նշանակության բարձրացման հարցը, որը, լինելով ոչ ֆորմալ կազմավորում, ունենալով սահմանափակ քաղաքական արժեք, այնուամենայնիվ, ազդում է քաղաքականության մյուս սուբյեկտների վրա: *Ինստիտուտները* ներառում են կազմակերպությունների մի ամբողջ շարք, որը հասարակության քաղաքական համակարգում իրականացնում է ներկայացուցչական և գործադիր գործառույթներ: *Անհատական* սուբյեկտների դերն առանձնահատուկ է, քանի որ անհատը քաղաքականության սուբյեկտների հիմնարար բաղկացուցիչ տարրն է: Այդ սուբյեկտները, ունենալով իրենց շահերը, նպատակները, վերջին հաշվով ծառայում են անհատի շահերի իրականացմանը:

Սուբյեկտիվության չափանիշ կամ աղբյուր է ծառայում օբյեկտիվ և սուբյեկտիվ քաղաքական շահերի առկայությունը, ինչպես նաև դրանց իրականացման ձգտումը՝ կազմակերպվածությունը, ղեկավար մարմինների և լիդերի առկայությունը, ովքեր ի վիճակի կլինեն

կյանքի կոչել այդ շահերն ու ձգտումները: Քաղաքականության սուբյեկտների դերն ու նշանակությունը ճիշտ ըմբռնելու համար անհրաժեշտ է տարբերել *«քաղաքականության սուբյեկտ»* և *«քաղաքական սուբյեկտ»* հասկացությունները: *«Քաղաքական սուբյեկտ»* ասելով պետք է հասկանալ մարդկանց և կազմակերպություններին, որոնց համար քաղաքական գործունեությունը հիմնականը և գլխավորը չէ, բայց ովքեր այս կամ այն չափով մասնակցում են քաղաքական կյանքին և ազդում նրա վրա: Սակայն որոշ դեպքերում նրանք կարող են իրականացնել *«քաղաքականության սուբյեկտի»* գործառույթներ և նույնիսկ ակտիվորեն ազդել քաղաքական գործընթացների վրա:

Սուբյեկտների փոխազդեցությունը քաղաքական իշխանության առումով կարելի է դիտարկել որպես ***ուղղահայաց*** և ***հորիզոնական:*** Եթե հասարակությունը դիտարկենք բուրգի տեսքով, գագաթը կկազմի պետությունն իր մարմիններով, իսկ հիմքը՝ ժողովուրդը: Իշխանության սուբյեկտներից իմպուլսներ են փոխանցվում օբյեկտներին վերևից ներքև: Այստեղ կառուցվում են կառավարման քաղաքական հարաբերություններ և ենթակայություն: Ինչ վերաբերում է *հորիզոնական* հարաբերություններին, ապա այստեղ գերակայում են ոչ թե քաղաքական, այլ սոցիալական հարաբերությունները: Բայց այս հարաբերությունները որոշակի դեպքերում կարող են լինել նաև քաղաքական: Հորիզոնական հարաբերությունները հաճախ անվանում են քաղաքացիական, իսկ հասարակությունը, որտեղ նման հարաբերություններ են՝ քաղաքացիական հասարակություն: *Ուղղահայաց* քաղաքական-իշխանական հարաբերություններին բնորոշ է հիերարխիան: Կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ իշխանության տիրապետող սուբյեկտների քաղաքականությունը տարբեր է այն սուբյեկտների քաղաքականությունից, որոնք պայքարում են իշխանության համար: Առաջին դեպքում քաղաքականության սուբյեկտները և իշխանության սուբյեկտները համընկնում են, իսկ երկրորդ դեպքում չեն համընկնում: Քաղաքականության ոչ բոլոր սուբյեկտներն են իշխանության սուբյեկտներ և հակառակը: Օրինակ՝ ընդդիմությունը, ունենալով քաղաքականության սուբյեկտի բոլոր հատկանիշները, իշխանության սուբյեկտ չէ, բայց իր առկայությամբ, պետական քաղաքականությունը քննադատելով, որոշակիորեն ազդում է իշխանության սուբյեկտների վրա:

Քաղաքականության սուբյեկտների արժևորման, գնահատման միտումը սերտորեն կապված է քաղաքական պրակտիկայում նրա

ազդեցության բարձրացման հետ: Այդ պատճառով էլ պատմական տարբեր ժամանակահատվածներում գնահատվել են տարբեր սուբյեկտներ: Օրինակ, Խորհրդային Միությունում Կոմունիստական կուսակցությունը, որն արտահայտում էր աշխատավորների շահերը և ունակ էր ժողովրդի համար ապահովել սոցիալ-տնտեսական և հոգևոր առաջընթաց, քաղաքականության և իշխանության սուբյեկտ էր, որը մանիպուլյացիայի էր ենթարկում օբյեկտին՝ ժողովրդին: Ժամանակակից պայմաններում, բարեբախտաբար, գաղափարախոսական գործոնն այդքան մեծ չափով չի գործում, որքան Խորհրդային ամբողջատիրական համակարգի պայմաններում:

Քաղաքագիտական գրականության մեջ *ֆորմալ-իրավական* մոտեցման կողմնակիցները, որպես քաղաքականության հիմնական սուբյեկտ, դիտարկում են քաղաքական ինստիտուտները: *Բիհևիորիստական* մոտեցման կողմնակիցները գտնում են, որ հիմնարար նշանակությամբ օժտված են անհատ սուբյեկտները, որոնց գործողությունների ամբողջության մեջ է կառուցվում քաղաքական իրականությունը:

Վերլուծելով քաղաքականության սուբյեկտների հիմնահարցը՝ հնարավոր չէ առանձնահատուկ ուշադրության չարժանացնել *առանձին շարքային անհատին*: Անհատները ելակետային սոցիալական ատոմներ են, որոնց գործողությունների ամբողջությունից ձևավորվում է հասարակությունը: Որքան էլ կարևորվեն զանգվածային շարժումները, դասակարգերը, կուսակցությունները, բազմաթիվ այլ ֆորմալ և ոչ ֆորմալ կազմակերպությունները, միևնույն է, անհատի շահերով և արժեքային կողմնորոշումներով է ձևավորվում քաղաքականությունը, քանի որ շարքային քաղաքացին՝ անհատը, նշված բոլոր միավորների հիմնարար տարրն է: Անհատը խորհրդանշում է ցանկացած կոլեկտիվ գործողության իմաստն ու արժեքը:

Անկասկած, անհատը՝ որպես քաղաքականության սուբյեկտ, կարող է ինքնադրսևորվել, բավարարել իր քաղաքական, սոցիալական պահանջմունքները միայն բարձրագույն քաղաքական կազմակերպության՝ պետության սահմաններում, նրա կողմից լիազորված ինստիտուտների շրջանակներում: Սակայն պետությունը, կազմակերպելով մարդկանց համատեղ կյանքը, ստեղծելով նրանց բարեկեցիկ կյանքի համար անհրաժեշտ նախադրյալներ, այնուամենայնիվ, միշտ հանդես է գալիս որպես մարդկանց ճնշման և հարկադրանքի սկիզբ որոշակի վարքաձևերի և կանոնների պահպանման

համար: Փաստորեն, պետությունը հանդես է գալիս որպես մարդու ազատությունները և իրավունքները սահմանափակող գործակալ: Անհատն էլ, իր հերթին, ազատ կամքի արտահայտման կողմնակից է: Այս առումով պետության և անհատի հարաբերություններն արտահայտում են իշխանության և մարդու՝ հասարակական կյանքի 2 հակադիր բևեռների և հանրային իշխանության ինքնուրույն աղբյուրների հարաբերությունները: Բավական հաճախ պետական իշխանությունը շարքային քաղաքացուն թվում է մի ուժ, որի վրա ինքը երբեք չի ազդի, և արդյունքում առաջանում է քաղաքական կոնֆորմիզմ քաղաքական իրադարձությունների հանդեպ, պասիվություն, որը գրեթե միշտ օգտագործվում է քաղաքական իշխանության կողմից: Եվ նույնիսկ XXI դարի բանական էակին ավելորդ չէ մեկ անգամ ևս համոզել, որ ապրել քաղաքականացված աշխարհում և չգիտակցել քաղաքական ակտիվության նշանակությունը, անթույլատրելի է:

Շարքային քաղաքացին քաղաքականության լիարժեք սուբյեկտ կարող է դառնալ մի շարք պայմանների առկայության դեպքում: Խոսքը չի վերաբերում միայն քաղաքական նախադրյալներին, այլև՝ սոցիալ-տնտեսական: Այս միտքը մեկ անգամ ևս հավաստում է անհատի քաղաքական, տնտեսական, սոցիալական կարգավիճակների փոխկապակցվածության մասին: Նշված նախադրյալների շարքին են դասվում քաղաքական գիտելիքները և քաղաքական գիտակցությունը, քաղաքական շահերը, դրանց գիտակցումը, քաղաքական հոգեբանությունը և այլն: Պաշտոնական իրավական նախադրյալների շարքին են դասվում ժողովրդավարության զարգացման մակարդակը, ՁԼՄ-ի արդար և ազատ գործունեությունը, մարդու իրավունքների պաշտպանվածությունը և այլն: Քաղաքականության լիարժեք սուբյեկտ դառնալու համար կարևոր է անհատի փոխազդեցությունն այլ մարդկանց հետ: Իհարկե, միայնակ գործելու դեպքում որոշ ձեռքբերումներ հնարավոր են, բայց քիչ արդյունավետ են նրա ջանքերը:

Քաղաքակիրթ դեմոկրատական հասարակություններում քաղաքական գործունեությունն իրականացվում է մարդկանց համար և մարդկանց կողմից: Իհարկե, քաղաքական դեմոկրատիան անհատի սուբյեկտիվության կարևորագույն իրավա-քաղաքական նախադրյալ է, որի պայմաններում անհատին ընձեռվում են լայն իրավունքներ, ազատություններ, հնարավորություններ:

Միայն պաշտոնական նախադրյալները բավարար չեն, առավել որոշիչ են անհատի ներքին մղումները, ձգտումները: Անհատն ինքը

պետք է գիտակցի իր կարևորությունը և ընկալի իր ակտիվ մասնակցությունը քաղաքականությանը, իբրև քաղաքացիական պարտք: Այսօր արդեն հրամայական է դարձել քաղաքական իրականությունը հասկանալու և նրանում ճիշտ կողմնորոշվելու ունակությունը, այսինքն քաղաքական գիտակցություն և քաղաքական սոցիալականացման հիմնախնդիրները:

Չնայած հասարակության զարգացման ժամանակակից փուլում է նշմարվում ինդիվիդուալիստական նոտա հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, այնուամենայնիվ, քաղաքականության մեջ անհատի հիմնահարցը քննարկվել է դեռ քաղաքական մտքի պատմության վաղ փուլերից: Իհարկե, յուրաքանչյուր փուլին, դպրոցին, ուղղությանը բնորոշ է յուրահատուկ շեշտադրում: Այսպես, քաղաքական մտքի պատմության մեջ հայտնի են անհատի և պետության փոխհարաբերության *երեք հիմնական մոդելներ: Առաջին* մոդելը հիմնականում ներկայացված է պատեռնալիստական և էտատիստական տեսությունների կողմից, որտեղ պետությունը դիտվում է առաջնային և գերակա մարդ-անհատի նկատմամբ: Պատեռնալիստական տեսության հիմնադիր հայրը Կոնֆուցիոսն է, իսկ էտատիստական տեսությանը՝ Պլատոնը, Արիստոտելը: Դեռևս մ.թ.ա. IV-II դդ. լեգիստները խոսում էին ուժեղ պետության մասին, որը պետք է կարգավորեր մարդկային կենսագործունեության բոլոր ոլորտները և հենվեր խիստ օրենքների վրա: Կոնֆունցիոսն առավելությունը տալիս էր մեծ հայրենակցական ընտանիքին, որտեղ գերիշխում է պետությունը, և բոլորը ենթարկվում են տիրակալին: Իսկ ո՞ւր մնաց անհատը: Անհատն այստեղ դիտարկվում է որպես հպատակ՝ զրկված հիմնական իրավունքներից: Իսկ մեկ այլ խոշորագույն մտածող, իմաստասեր Պլատոնն իդեալականացնում էր պետության սոցիալական գործառույթները և արդարացնում էր պետության գերիշխող դերն անհատի նկատմամբ: Արիստոտելն աստվածացնում էր պետությունը՝ այն համարելով սոցիալական շփման բարձրագույն ձև: Ակնհայտ է, որ այստեղ ավելորդ է խոսել մարդու քաղաքական իրավունքների, ազատությունների մասին: Ավելի ուշ նման գաղափարները մարմնավորվեցին պետության, որպես հասարակության բանականության, մարդու իրավունքների երաշխավորի հասկացության մեջ:

Պետության օրենքները հայտարարվեցին որպես ազգային շահերի արտացոլում: Միջնադարում տարածում ստացան պետության՝ որպես մարդու իրավունքների և պարտականությունների միակ աղբ-

յուրի մասին պատկերացումները: Մարքսիզմը՝ որպես սոցիալիզմի գաղափարախոսություն, մարդուն դիտարկում էր որպես դասակարգի տիրապետության համակարգի տարր:

Քաղաքական պրակտիկայում էտատիստական և պատեռնալիստական տեսությունների տարրեր որոշ ձևափոխություններով տեսնում ենք նաև մեր ժամանակներում գործառնող քաղաքական համակարգերում: Նման երկրներում անհատի ազատությունները, իրավունքները, քաղաքական ակտիվության սահմանները, ձևերը դիտարկվում են որպես պետության կողմից շնորհված: Նշված երկրները վարչահրամայական և բռնակալական ռեժիմ ունեցող երկրներն են: Իսկ ինչ վերաբերում է լիբերալ արժեքներով առաջնորդվող ժամանակակից ժողովրդավարական երկրներին, ապա դրանք արտահայտում են պետության և մարդու փոխհարաբերությունների մյուս մոդելը: Ջ. Լոկը, Թ. Ջեֆֆերսոնը և Ջ. Մեդիսոնը, ինչպես նաև լիբերալիզմի այլ տեսաբաններ պնդում էին, որ պահանջների հիման վրա է կառուցվում իշխանության պետական համակարգը: Այս մոդելում ազատ քաղաքացին հակադրվում է պետության իշխանությանը: Այս ուղղության մտածողների առանձնահատկությունն այն է, որ նրանք թեև գրում էին անհատի և պետության փոխադարձ պատասխանատվության մասին, այնուամենայնիվ, շեշտում էին քաղաքական իշխանության սահմանափակման անհրաժեշտությունը և կարևորում էին բոլոր մարդկանց կողմից քաղաքացիության ձեռքբերումը անկախ ծագումից, սոցիալական և այլ բնույթի կարգավիճակային տարբերություններից: Իհարկե, նրանք ավելորդ չէին համարում նշել, որ պետությունը պետք է գտնվի քաղաքացիական հասարակության հսկողության տակ: Այսինքն, ըստ լիբերալների, անհատն ավելի շատ իշխանության աղբյուր է, քան մասնակից սուբյեկտ:

Մարդու և իշխանության փոխհարաբերության երրորդ մոդելը նույնպես ունի անտիկ ծագում: Մ.թ.ա. VII-VI դդ. յոթ իմաստուններ առաջ քաշեցին իշխանության այս կամ այն սուբյեկտի իրավունքներին առնչվող կոմպրոմիսի գաղափարը: Այս տեսության զարգացման մեջ ներդրում ունեն նաև հույն մտածողները՝ «ոսկե միջին»-ի կանոնի կողմնակիցները և բոլոր նրանք, ովքեր կոչ են անում վերականգնել պետության և անհատի միջև ներդաշնակ հարաբերությունները: Քրիստոնեա-դեմոկրատական գաղափարախոսության հետնորդները զարգացրեցին այս տեսակետը՝ պնդելով, որ անհատը քաղաքացիական արժանապատվության պաշտպանության և խնամակալութ-

յան օբյեկտ է: Իսկ պետությունը ոչ այնքան հարկադրանքի աղբյուր է, որքան մի մարմին, որը գործում է ընդհանուր բարիքի սկզբունքով և հանդիսանում է համատեղ կյանքի, կատարելագործման, շահերի համաձայնեցման և արդարության հաստատմանն աջակցող միավոր: Ուստի պետությունը և անհատը պետք է գործեն միասնականության և փոխլրացման սկզբունքներին համապատասխան: Այս սկզբունքներից առաջինը ենթադրում է, որ յուրաքանչյուրի բարիքը կապված է ամբողջի բարգավաճման հետ: Իսկ փոխլրացման սկզբունքը ենթադրում է, որ պետությունը պետք է օգնություն ցույց տա նրանց, ովքեր ունակ չեն ինքնուրույն ապահովել արժանապատիվ կյանք և չունեն անհրաժեշտ նյութական ու հոգևոր միջոցներ: Այստեղ տեսանելի են պետության սոցիալական գործառույթների արժևորման միտումներ:

Քաղաքականության մեջ անհատի դերը, նշանակությունը գնահատելու համար կարևոր ենք համարում ծանոթանալ քաղաքական գիտության մեջ անհատի հիմնահարցի դիտարկման տարբեր տեսանկյուններին:

Առանձնացվում են 3 պարամետրեր: Համաձայն առաջինի՝ անհատը՝ որպես մարդ, ունի հոգեֆիզիոլոգիական յուրահատուկ բնութագրիչներ, արժեքային կողմնորոշումներ: Նշված տեսանկյան կարևորությունը զգալի է քաղաքական լիդերի անհատականության ուսումնասիրման ժամանակ, երբ ցույց է տրվում նրա կենսական դերը քաղաքականության մեջ: Ըստ երկրորդ պարամետրի՝ անհատն էթնիկական խմբի, դասակարգի ներկայացուցիչ լինելով, նաև որպես պրոֆեսիոնալ, կատարում է որոշակի քաղաքական դեր. ընտրում, ընտրվում կամ նշանակվում է որևէ պաշտոնի և այլն: Այս մոտեցումն անտեսում է անհատի, որպես քաղաքականության յուրահատուկ գործոնի ինքնուրույնությունը: Երրորդ պարամետրի համաձայն՝ անհատը՝ որպես հասարակական-քաղաքական կյանքի ակտիվ մասնակից, օժտված է ռացիոնալ ընտրության ունակությամբ, որը նրան հնարավորություն է տալիս փոխգործակցել իշխանությունների հետ, օգտվել իր քաղաքական իրավունքներից և գիտակցել ու բարեխղճորեն կատարել իր պարտականությունները:

Վերը նշված դիտարկումները՝ կապված անհատի հիմնահարցի հետ, թույլ են տալիս ըստ քաղաքական իշխանության վրա ունեցած ազդեցության և հնարավորության աստիճանի առանձնացնել անհատի հետևյալ տիպերը.

- քաղաքական գործընթացների հանդեպ աննշան հետաքրք-

րություն դրսևորող անհատ,

- հասարակության անդամ և քաղաքացի հանդիսացող, քաղաքական ապատիա դրսևորող և իրեն քաղաքականությունից օտարված համարող անհատ, ով բացասական վերաբերմունք ունի քաղաքականության նկատմամբ: Նշված վերաբերմունքը հիմնականում կարող է լինել ինչպես սոցիալական թերզարգացածության արդյունք, այնպես էլ անհեռատես քաղաքականության նկատմամբ բողոքական ձև: Այս տիպաբանության մեջ անհատը ներկայանում է նաև որպես դասակարգերի, զանգվածների, հասարակական-քաղաքական կազմակերպությունների հիմնարար բջիջ, որն ունի հստակ ձևավորված կողմնորոշում և սեփական տեսակետ քաղաքական այս կամ այն երևույթի, հիմնահարցի, խնդրի նկատմամբ: Նրա քաղաքական ակտիվությունն իր արտահայտությունն է գտնում ժողովներում, նախաձեռնություններում, հանրաքվեների և ընտրությունների ժամանակ,
- անհատ, ով, լինելով այս կամ այն կուսակցության անդամ, ավելի մեծ ջանքեր և ժամանակ է տրամադրում քաղաքական գործունեությանը,
- անհատ, ով պրոֆեսիոնալ քաղաքական-հասարակական գործիչ է, ում համար քաղաքականությունը հիմնական զբաղմունք է,
- անհատ, ով հանդես է գալիս որպես քաղաքական լիդեր, ֆորմալ և ոչ ֆորմալ կազմակերպությունների ղեկավար: Այս տիպը բարձրագույնն է ըստ իշխանության վրա ունեցած ազդեցության մակարդակի:

Քաղաքագիտության մեջ անհատի տեղի և դերի վերաբերյալ տեսություններից առավելապես կարևորվում են ազատական, մարքսիստական, քրիստոնեական, ժողովրդավարական, էլիտարիզմի և ռուսական համայնքային տեսությունները:

Ազատական տեսության մեջ կարևորվում են իր գործողությունների համար պատասխանատու անհատը և իր անհատական ազատության համար անհրաժեշտ պայմանները. ազատ շուկայական հարաբերությունների, իշխանության տարանջատման, իրավական պետության, հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության, համընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքները: Այս տեսությունը պաշտպանում է հասարակությունից ու պե-

տությունից անհատի ինքնավարության, բոլոր քաղաքացիների իրավահավասարության գաղափարը: Իսկ *մարքսիստական* տեսությունը մարդ-անհատին դիտարկում է որպես հասարակական հարաբերությունների ամբողջություն: Հետևապես, մարքսիստական տեսությունը հակադրվում է վերը նշված ազատականության տեսությանը, քանի որ անհատին հասարակությունից ազատ լինելու հնարավորություն չի տալիս: Անհատի քաղաքական մասնակցության խթանը դասակարգային շահն է: Այս տեսության շրջանակներում կարևորվում է զուտ հասարակական-քաղաքական գործիչ հանդիսացող անհատի և ոչ թե շարքային քաղաքացու դերը:

Հաջորդը *ֆրիսոնեական* հայեցակարգն է, որի հիմքում կարելի է առանձնացնել 3 ուղղություն. ա) մարդը հոգևոր և աստվածային ծագման հետևանքով եզակի արժեք է, բ) համընդհանուր հոգատարություն մարդկանց, հասարակության և պետության նկատմամբ, գ) պետությունը օգնություն է ցուցաբերում կարիքավորներին: *Ժողովրդավարական* տեսությունը շեշտը դնում է ժողովրդի ձեռքով գործառնող կառավարության վրա, ուր իշխանության միակ աղբյուրը ժողովուրդն է, և կառավարումն ու որոշումների ընդունումն իրականացվում է ազատ և արդար ընտրությունների միջոցով: Կարևորվում է իրազեկ և կրթված, հասարակական կյանքին ակտիվ մասնակցություն ցուցաբերող անհատը: Նշենք, որ այս տեսությունն ընկած է ժամանակակից դեմոկրատիաների հիմքում: *Էլիտարիզմի* հայեցակարգում քաղաքական գործընթացն արժևորվում և բացատրվում է լիդերի, էլիտայի տեսանկյունից: Այստեղ գերիշխող է այն գաղափարը, որ հասարակական զանգվածների լայն մասնակցությունը կառուցողական չէ, քանի որ հակասում է աշխատանքի բնականոն բաժանմանը:

Անհատի դերի մասին մյուս տեսությունը *ռուսական կոլեկտիվ-համայնքային* տեսությունն է, համաձայն որի քաղաքական աշխարհում մարդու տեղի և դերի մասին գոյություն ունեն ռուսական առանձնահատկություններ: Այս գաղափարը մշակվել է 19-րդ դարում Ի. Կիրիևսկու և Ա. Մ. Խոմյակովի կողմից: Այս տեսությունը շեշտը դնում է Արևմուտքի և Ռուսաստանի՝ կյանքի կարգավորման և աշխարհընկալման վերաբերյալ տարբերությունների վրա: Ըստ նրանց՝ արևմտյան քաղաքակրթությանը հարազատ է անհատապաշտությունը, իսկ արևելյանում՝ համայնքային ոգին:

Այսպիսով, մանրակրկիտ քննության առնելով քաղաքագիտության մեջ անհատի՝ որպես քաղաքական գործընթացում հիմնական

ակտորի խաղացած դերն արժևորող կարևորագույն ուղղությունները, դպրոցները, կարող եմ վստահորեն արձանագրել անհատ-քաղաքացու դերի բարձրացման լուրջ միտումներ: Կարծում եմ, որ նման միտումը վկայում է նախ և առաջ շարքային անհատի՝ քաղաքականության լիիրավ սուբյեկտ դառնալու համար անհրաժեշտ այնպիսի պաշտոնական և ոչ պաշտոնական նախադրյալների առկայության մասին, ինչպիսիք են՝ քաղաքական իրավունքներն ու ազատությունները, իրավական պետության և քաղաքացիական հասարակության հնարավորությունները, անհատի քաղաքական սոցիալականացման, քաղաքական գիտակցության և քաղաքական մշակույթի անհրաժեշտ բազան: Առանց վերը նշված նախադրյալների անհատը քաղաքականության սուբյեկտից վեր է ածվում քաղաքական շահարկումների օբյեկտի:

Հանձնարարվող գրականություն

1. **Жан-Мари Дэнкен**, Политическая наука, М., 1993, стр. 90-93
2. **Д. В. Ольшанский**, Политическая психология, Санкт-Петерб., 2002, стр.518- 522
3. **Քաղաքագիտություն, ԵՊՀ հրատ.**, Ե., 2006, էջ 130
4. **А. И. Соловьев**, Политология, М., 2006, стр 98-106
5. **Д. В. Ольшанский**, Политическая психология, Санкт-Петерб., 2002, стр. 550-556
6. **В. И. Жуков, Б. И. Краснов**, Общая и прикладная политология,М., 1997, стр. 538-541
7. **Քաղաքագիտություն, Հ. Մանուչարյանի խմբ., ԵՊՀ հրատ.,** Ե., 2006, էջ 155
8. **С. Липсет**, Политическая социология// Американская социология, М., 1972, стр. 210-217

Դասախոսություն 3

Քաղաքական սոցիալականացման հասկացութային բնույթը

Քաղաքական սոցիալականացման կոնցեպցիան ակտիվ կերպով մշակվել է ԱՄՆ-ում անցյալ հարյուրամյակի 50-ական թվականներին, որի առիթ դարձավ արևմտյան հասարակության քաղաքական համակարգերի ինստիտուտների ճգնաժամը: Դա պայմանավորված էր նրանով, որ այդ ինստիտուտները չկարողացան ապահովել դեմոկրատական արժեքների հոժարակամ ընդունումը նոր սերունդների կողմից:

Համակարգից անհատի աճող օտարման առիթ էին իշխանությունների նկատմամբ անվստահությունը, քաղաքական աբսենտիզմը և, վերջապես, մասսայական ելույթները պաշտոնական իշխանությունների դեմ:

Սերունդների ընդհարումը դարձավ քաղաքական սոցիալիզացիայի համակարգի ճգնաժամի առաջացման պատճառ, որն արտահայտվում էր 60-ական թվականներին երիտասարդական մասսայական ելույթներով արևմտյան հասարակության՝ քաղաքական համակարգի դեմ: Քաղաքական իդեալների և արժեքների՝ սերնդեսերունդ փոխանցման մեխանիզմում տեղի ունեցող խախտումները կապված էին նոր հետաքրքրությունների ի հայտ գալու հետ, որոնց քաղաքական ինստիտուտները պատրաստ չէին ընդունել: 60-ականներին արևմտյան հասարակությունը մուտք գործեց արդյունաբերական փուլ, որն էլ իր հերթին հանգեցրեց փոփոխությունների կրթության, մշակույթի և այլ ոլորտներում: Տնտեսապես զարգացած երկրների բնակչության նյութական կարիքների հագեցվածությունը առաջին պլան էր մղում հոգևոր արժեքները, որոնցից են անհատի ազատ կողմնորոշումը, բնակության համար բարենպաստ տարածքը, մարդու և բնության ներդաշնակությունն ու համերաշխությունը և այլն: Ի հայտ եկան ենթամշակութային շերտեր, որոնք չէին ընդունում առկա մշակույթի ավանդական, նյութական արժեքները, անձնական հաջողությունները, բարեկեցությունը, ձգտումը հարստությանը: Այս սուբկուլտուրայի հիման վրա ծագեցին հասարակական շարժումներ, որոնք արդեն ունեին իրենց հստակ ձևակերպված պահանջները:

Վառ օրինակ է ԱՄՆ-ում 60-ական թվականներին հիպպիների շարժումը: Նրա մասնակիցները հաջողակ քաղաքական գործիչների, բիզնեսմենների, փաստաբանների երեխաներ էին, ովքեր խստորեն քննադատում էին սոցիալական կարգը անհատի ազատ ինքնորոշման համար պայմաններ չստեղծելու, անհավասարության և տարբեր տեսակի խտրականության առկայության համար: Գործող համակարգի դեմ իրենց բողոքը նրանք արտահայտում էին ավագ սերնդին անհասկանալի վարքագծով. երկար մազեր, տարօրինակ խոսելաձև և հագուստ, թմրանյութերի օգտագործում և այլն:

Հետագայում արևմտյան մշակույթը կարողացավ իր մեջ ծուլել արվեստագետ մտավորականությանը և նրա անկարգ կենցաղը, ինչպես նաև դրանց տարածողներին ներքաշել հանրության ակտիվ տնտեսական, սոցիալ-քաղաքական կյանք: ԱՄՆ-ի այժմյան շատ քաղաքական գործիչներ, բիզնեսմեններ, բանկիրներ նախկինում եղել են հիպպիների շարժման ակտիվ մասնակիցներ:

Հետևապես, անհատների կամ նրանց խմբավորումների կողմից արժեքների և քաղաքական նորմերի յուրացման գործընթացը, որը հատուկ է կոնկրետ հասարակությանը, թույլ է տալիս արդյունավետ իրականացնել քաղաքական ֆունկցիաները և դրանով ապահովել հասարակության և քաղաքական համակարգի անվտանգությունը, կոչվում է քաղաքական սոցիալականացում:

«Քաղաքական սոցիալականացում» տերմինը ծագել է «սոցիալականացում» բառի համանմանությունից: «Սոցիալականացում» տերմինը անցած դարի վերջում գործածության մեջ են մտցրել ամերիկացի սոցիոլոգ Ֆ.Գիդդինգը և ֆրանսիացի սոցիոլոգ Տարդը՝ նշելու «մարդու սոցիալական բնության զարգացման» գործընթացը: Սոցիալականացումը նոր սերունդների կողմից ձեռք բերվող գիտելիքների, հմտությունների, նորմերի և դրույթների յուրացման գործընթաց է: Սակայն տարբեր գիտական դպրոցներ և քաղաքական ուղղություններ շեշտը դրել են սոցիալականացման այս կամ այն մեխանիզմների վրա, ինչպիսիք են օրինակ՝ ընտանիքը, դպրոցը, մշակութային կենտրոնները, զանգվածային լրատվության միջոցները և այլն, ինչն էապես ազդել է սոցիալիզացիայի բովանդակության և տրամաբանության վրա:

Ամերիկացի հոգեբան Գ. Լասսուելը քաղաքական սոցիալիզացիան դիտարկում էր որպես անցումային գործընթաց. «թերարժեքության զգացումից դեպի աստվածային բարձրություն»: Որպես սո-

ցիալիզացիայի գործոն, նա դիտում էր թերարժեքության զգացումը: Հենց դրանով է պայմանավորված ձգտումը դեպի իշխանություն: Լասսուելի կարծիքով, իշխանությունն օգնում է հաղթահարել հարգանքի պակասությունը սեփական անձի նկատմամբ: Ինչպես ցույց է տալիս պատմական փորձը, բազմաթիվ ճանաչված քաղաքական գործիչներ տառապել են թերարժեքության բարդույթով, ֆիզիկական թերություններով (Լյութեր, Գանդի, Ռուզվելտ, Ջ. Քենեդի, Ի. Ստալին և այլն):

Քաղաքական սոցիալիզացիայի կազմավորումը տեղի է ունեցել տարբեր գիտական դպրոցների և ուղղությունների ազդեցությամբ: Սակայն մարդու ներգրավումը քաղաքականության մեջ բավականին բարդ է և միջնորդավորված է մեծաքանակ գործոններով: Հետևապես, քաղաքական սոցիալիզացիայի կոնցեպցիայի զարգացումը սերտորեն կապված է քաղաքական փորձի, պահանջների, անհատին վերահսկելու ավելի արդյունավետ մեխանիզմի անհրաժեշտության, մշակութային բնագավառում նոր սերունդների նպատակների և արժեքների հետ:

Սոցիալիզացիան զարգացման գործընթացների նույնություն է, որն ընթանում է ժամանակի ընթացքում: Գլխավորապես տարբերում են սոցիալիզացիայի ուսումնասիրությունը հասարակական կարծիքի հարցումներից: Հասարակական կարծիքի հարցումները նկարագրում են կողմնորոշումները, որոնք բնորոշ են մարդկանց տվյալ ժամանակում: Քաղաքական դրվածքների հետազոտումը սովորաբար կապված է գործող պայմանների հետազոտման հետ, այսինքն՝ նկատի ունենք անձի կամ նրա վարքի վերաբերյալ ուսումնասիրությունները: Պրակտիկայում հիմնական ուշադրությունը դարձվում է դրվածքների ու վարքի վրա: Երբ հասարակական կարծիքի ուսումնասիրությունը հասնում է դրվածքների փոփոխությանը, այն մոտենում է սոցիալիզացիայի պրոբլեմների հետազոտմանը և մեծ դեր է խաղում այն հասկանալու համար: Մենք հետաքրքրվում ենք ոչ թե անցյալի որոշակի երևույթներով, այլ հաջորդական ժամանակամիջոցներով, որպեսզի կարողանանք հասկանալ, թե որքանով է ներկա վարքը կամ կողմնորոշումը համարվում զարգացման արդյունք: Դա է պատճառը, որ սոցիալիզացիան դուրս է գալիս հասարակ պատճառներ փնտրելու շրջանակներից: Ահա թե ինչու մենք մեր ուշադրությունը պետք է կենտրոնացնենք հետևյալ հարցերին. որտեղի՞ց են վերցվում կողմնորոշման և վարքի օրինակները, ինչպե՞ս են դրանք

գոյանում և փոփոխվում մարդու մեծանալուն զուգընթաց և այլն :

Քաղաքական սոցիալականացումը քաղաքական կյանքին մասնակցության առավել ընդհանրական, համալիր բնույթ կազմող այն գործոններից է, որը բովանդակում է մարդկանց քաղաքական հասունացման, նրանց սոցիալ-քաղաքական և հոգեկան կարողությունների բացահայտման, քաղաքական մասնակցության նախապատրաստման հետ կապված հիմնական գործընթացները: Հենց դրանցով էլ պայմանավորված են քաղաքական սոցիալականացման հիմնախնդրի արդիականությունը և նրա հետազոտման կարևորությունը:

Անձի քաղաքական սոցիալականացումը հանդես է գալիս որպես հասարակության քաղաքական զարգացման ու հասունացման, քաղաքական կուլտուրայի կոնկրետացման, առարկայացման ու անձնավորման անմիջական արդյունք:

Այլ կերպ ասած՝ անձի մուտքը քաղաքականություն, նրա նախապատրաստումը և ներգրավումը քաղաքական հարաբերություններում իրագործվում են նրա քաղաքական սոցիալականացման, քաղաքական նորմերի և արժեքների ընկալման ու յուրացման միջոցով: Իր հերթին, քաղաքական սոցիալականացումը, ընդգրկելով նոր սերունդների քաղաքական կյանքը, ապահովում է քաղաքական մշակույթի վերարտադրությունը և, որպես կանոն, թույլ է տալիս հասնել այն նվազագույն համաձայնությանը քաղաքացու և պետության միջև, որն ամենից առաջ երաշխավորում է կառավարման ռեժիմի հարաբերական կայունություն:

Քաղաքական համակարգի պահպանմանը նպաստող բազմաթիվ գործոնների շարքում անձի քաղաքական սոցիալականացումը գրավում է կարևորագույն տեղ այնքանով, որքանով ոչ մի համակարգ չի կարող ունենալ միավորման և կայունության բավարար մակարդակ, եթե իր անդամների մեջ չստեղծի քաղաքական գիտելիքների, արժեքների և կողմնորոշումների որոշակի պաշար: Վերջին հաշվով, ցանկացած հասարակության զարգացման մակարդակը նշանակալիորեն կախված է այն բանից, թե կենսագործունեության ինչպիսի սոցիալ-քաղաքական արժեքներ են կրում իր անդամները:

Ակնհայտ է, որ մարդիկ չեն ծնվում գիտելիքների պատրաստի պաշարով: Դրանք ձեռք են բերվում ողջ կյանքի ընթացքում: Այս տեսանկյունից քաղաքական սոցիալականացման հիմնախնդիրը բացառիկ կարևորություն է ձեռք բերում:

Սոցիալականացումը մի կողմից՝ սոցիալական նորմերի, արժեքների յուրացումը և այդ հիմքի վրա արժեքային կողմնորոշումների, սոցիալական պահանջմունքների մշակումն է, մյուս կողմից՝ անձի իրական մուտքը հասարակական-քաղաքական կյանք:

Սոցիալականացումն ընդհանրական իմաստով նշանակում է հասարակության անդամների քաղաքակրթության և քաղաքական հասունացման գործընթաց: Սոցիալականացման ժամանակ մարդիկ յուրացնում են վարքի այնպիսի ձևեր, նորմեր, արժեքներ և հայացքներ, որոնք խումբը կամ հանրույթը համարում է կարևոր: Մի կողմից, `անհատը պետք է տիրապետի այն ամենին, ինչ սպասում է իրենից հասարակությունը, մյուս կողմից պետք է ձեռք բերի անհրաժեշտ հատկություններ, որպեսզի կարողանա իրեն դրսևորել այդ սպասումներին համապատասխան: Այս կարգով հասարակությունը ձևավորում է մարդկանց համոզմունքներն ու կամքը, որոնք իրենց հերթին պայման են հանդիսանում հասարակության հետագա զարգացման համար: Հետևաբար, քաղաքական սոցիալականացման ընթացքում անհատները, որպես մասնակիցներ, ակտիվորեն նպաստում են հասարակության ձևավորմանը:

Այսպիսով, քաղաքական սոցիալականացումը որոշակի քաղաքական գիտելիքների, արժեքների և նորմերի յուրացման, քաղաքական փորձի ձեռքբերման և փոխանցման գործընթաց է, որը թույլ է տալիս անձին՝ դառնալ քաղաքական կյանքի լիիրավ մասնակից:

Քաղաքական սոցիալականացումը՝ որպես ամբողջ կյանքում շարունակվող և հասարակայնորեն պայմանավորված գործընթաց, իր մեջ ներառում է այն բոլոր գործոնները, որոնք մարդուն դարձնում են քաղաքական անձ (քաղաքական գիտելիքներ, հայացքներ, համոզմունքներ, գործելու պատրաստակամություն, հոգևոր և առարկայական արժեքներ, գիտելիքներ և ընդունակություններ) և ունեն քաղաքական բովանդակություն, ուղղորդված են դեպի քաղաքականությունը:

Քաղաքագիտական գրականության մեջ ընդունված է այն տեսակետը, որ քաղաքական սոցիալականացումն ունի *երկու կողմ՝ <u>օբյեկտիվ և սուբյեկտիվ:</u> Օբյեկտիվ* կողմը փաստում է, որ անհատը շփման մեջ է օբյեկտիվ գործոնների հետ, ինչպես օրինակ սոցիալ-տնտեսական, քաղաքական և հոգևոր հարաբերությունները, ավանդույթները, նորմերը: Իսկ *սուբյեկտիվ* կողմը կապված է հասարակության գիտակցական և նպատակամղված գործունեության հետ, որն էլ կոչված է իր

անդամների մեջ ձևավորել քաղաքական որակներ:

Սոցիալականացումը՝ որպես անհատի սահուն մուտք հասարակություն ապահովող գործընթաց, իր արժանի տեղն է զբաղեցնում հասարակական կյանքի բոլոր ոլորտներում:

Ըստ փիլիսոփաների՝ սոցիալականացումը մարդկային անհատի կողմից որոշակի գիտելիքների, նորմերի և արժեքների համակարգի յուրացման գործընթաց է, որը թույլ է տալիս նրան գործառնել որպես հասարակության լիիրավ անդամ:

Ըստ հոգեբանների՝ սոցիալականացումն անձից անհատի ձևավորման ու զարգացման գործընթաց է, սկսած մարդու ծնված օրվանից մինչև սոցիալ-հոգեբանական հասունությունը: Այս գործընթացն ընթանում է սոցիալական խմբերում և հանգեցնում անհատի կողմից գիտելիքների, սոցիալական վարքի ձևերի, լեզվի, հմտությունների, բարոյական և իրավական սկզբունքների, արժեքների ու նորմերի, սոցիալական դերի և գործունեության տեսակների, հաղորդակցման հմտությունների յուրացում:

Ըստ սոցիոլոգների՝ սոցիալականացումն անհատի կայացման գործընթաց է, որի ընթացքում անհատն աստիճանաբար ձեռք է բերում գիտակցության և վարքի հասարակական նշանակության բնորոշ գծեր, որոնք կարգավորում են նրա և հասարակության փոխհարաբերությունները: Սոցիալականացման ընթացքում անհատը, յուրացնելով նախորդ սերունդների կողմից ավանդած արժեքները, միաժամանակ ծանոթանում է սոցիալ-տնտեսական, քաղաքական խնդիրներին՝ դառնալով դրանց լուծման մասնակիցը: Չնայած տարբեր մոտեցումներին՝ բոլորն էլ համոզված են, որ չի կարող լինել քաղաքական սոցիալականացում առանց մասնակցության և հակառակը:

Շատ հաճախ քաղաքական սոցիալականացումը նույնականացվում է *դաստիարակության* հետ: Սոցիալականացում ասելով պետք է հասկանալ անհատի քաղաքական գիտակցության և վարքի կազմավորման գործընթացների ամբողջությունը, քաղաքական դերերի ընդունումն ու իրականացումը, քաղաքական ակտիվության արտահայտումը: Հետևաբար, սոցիալականացում հասկացությունն ավելի լայն է, քան քաղաքական դաստիարակությունը:

Պայմանավորված իր բարդությամբ և հակասականությամբ՝ քաղաքական սոցիալականացումը տարբեր կերպ է մեկնաբանվում քաղաքական գիտության մեջ: Օրինակ, Չիկագոյի դպրոցի ներկա-

յացուցիչները՝ Լ. Կոենը, Ռ. Լիպտոնը, Թ. Պարսոնսը, այն դիտարկում են որպես *մարդու դերային յուրացման գործընթաց*: Կ. Լումանը և Մ. Հաբերմասը սոցիալականացումը մեկնաբանում են որպես *ակուլտուրացիա*, այն է՝ մարդու կողմից նոր արժեքների յուրացում՝ այս կերպ առաջին պլան մղելով անհատի քաղաքական գիտակցության և վարքի հոգեբանական մեխանիզմները: Քաղաքագիտության մեջ *հոգեվերլուծության* կողմնակիցները ուշադրությունը բևեռում են քաղաքական գործունեության անգիտակից շարժառիթներին: Քաղաքական սոցիալականացման *կոգնիտիվ* մոդելի ներկայացուցիչները կարևորում են անհատի ճանաչողական, զգայական, բարոյական կառուցվածքների զարգացումը: Ըստ կոգնիտիվիստների՝ անհատի վարքը որոշվում է քաղաքական գիտելիքներով՝ պայմանավորված որոշակի պատկերացումներով: Նրանք նաև նվազեցնում են սոցիալականացման գործակալների դերը՝ համարելով, որ անհատի սահուն մուտքը հասարակություն ապահովում են նրա մեջ ձևավորվող բնական ուժերը:

Քաղաքական սոցիալականացումը կոչված է լուծել հետևյալ խնդիրները՝ քաղաքական մշակույթի և քաղաքական գիտակցության հիմնական տարրերի փոխանցում նոր սերունդներին, հասարակության անդամների կողմից անհրաժեշտ քաղաքական փորձի կուտակման համար համապատասխան պայմանների ստեղծում, քաղաքական մշակույթի էական տարրերի ձևափոխություն՝ որպես փոփոխության անհրաժեշտ պայման և այլն: Քաղաքական սոցիալականացման բնույթը, բովանդակությունը կախված է շատ գործոններից, դրանց թվում՝ մակրոմիջավայրի ազդեցություն, այսինքն ժամանակաշրջանի բնույթը, պետության, ազգի, դասակարգի, այլ սոցիալական խմբերի, հասարակության քաղաքական մշակույթի, միկրոմիջավայրի ազդեցություն՝ ինստիտուտները և պաշտոնական հանրույթները, դպրոցները, ընտրությունները, առանձին անհատները և ներքին գենետիկական գործոններ, որոնցից է ինքնադաստիարակությունը: Քաղաքական սոցիալականացման վրա ազդող *քաղաքական գործոնների* թվին կարող ենք դասել պետական կարգի բնույթը և տիպը, քաղաքական ինստիտուտները, կուսակցություններ և շարժումներ, իսկ *ոչ քաղաքական գործոններից* են ընտանիքը, հասակակիցների խմբերը, կրթական ուսումնական հաստատությունները, աշխատանքը, մշակույթը, գիտությունը, արվեստը, ազգային ավանդույթները, ՁԼՄ-ը: Քաղաքական սոցիալականացու-

մը կարող է ընդունել փորձի փոխանակման *բացահայտ կամ գաղտնի ձև:* Այն համարվում է *բացահայտ*, եթե ներառում է տեղեկատվության, զգացմունքների և արժեքների անմիջական փոխանակում: *Գաղտնի քաղաքական* սոցիալականացումը ոչ քաղաքական դիրքորոշումների փոխանցումն է, որոնք սակայն ազդում են քաղաքական հարաբերությունների, քաղաքական որոշումների ընդունման և քաղաքական վարքի վրա: Անհատի քաղաքական սոցիալականացումը գործառնում է **տարբեր մակարդակներում**: *Առաջին մակարդակը* հասարակականն է, որում անհատն ընդգրկվում է այս ոլորտում ծագած լուրջ խնդիրների, մարտահրավերների ճնշմամբ: Օրինակ, երբ հասարակությունը կանգնած է բեկումնային փոփոխությունների եզրին, դա կարող է լինել հեղափոխություն, հանրաքվե և այլն, այս դեպքում անհատը իրադարձություններն իր համար ցանկալի հունով տանելու պատրվակով ընդգրկվում է այս կամ այն շարժման մեջ, քանի որ չի կարող անտարբեր մնալ շրջապատում տեղի ունեցող զարգացումների նկատմամբ: *Երկրորդ մակարդակը* սոցիալ-հոգեբանականն է, քանի որ մարդը քաղաքականապես սոցիալականացվում է ոչ միայն սոցիալական մեծ խմբում՝ դասակարգ, կուսակցություն, այլև փոքր խմբերում, ինչպես ասենք ընտանիք, ընկերական շրջապատ, հետևապես նրա քաղաքական սոցիալականացումը նպաստում է միջանձնային հարաբերությունների խորացմանը: Միջանձնային շփումներն օգնում են անհատին ավելի ճիշտ կողմնորոշվել քաղաքական իրադարձություններում: *Երրորդ մակարդակը* ներանձնայինն է, երբ քաղաքական սոցիալականացումը տեղի է ունենում մարդկանց շահերի, պահանջմունքների, արժեքային կողմնորոշումների ազդեցության տակ:

Արդի պայմաններում անհատի սոցիալականացման գործընթացը նոր պահանջներ է ներկայացնում: Դա պամանավորված է նրանով, որ այսօր հասարակության սոցիալ-տնտեսական, քաղաքական և հոգևոր կյանքում արմատական փոփոխություններ կարող են կատարել միայն կրթված, մասնագիտական հմտություններ և բարձր գիտակցական մակարդակ ունեցող անհատները:

Սոցիալականացման գործընթացի հանդեպ հետաքրքրությունն արդի ժամանակաշրջանում գլխավորապես պայմանավորված է **երկու նոր երևույթներով**: *Առաջինն* այն է, որ սոցիալականացման գործընթացն առավել նշանակալից դարձավ ամբողջ աշխարհում դպրոցական կրթական համակարգի ընդլայնման հաշվին: Տեխնո-

լոգիական հեղափոխությունը հնարավորություններ ստեղծեց ժամանակակից կրթական համակարգի ստեղծման համար՝ միաժամանակ անհրաժեշտ դարձնելով սոցիալական փորձի վերհանումը, որին ենթարկվում են բնակչության տարբեր շերտերին պատկանող երեխաներ: Այսպես, քաղաքական լիդերները հնարավորություն ունեցան փոխանցելու քաղաքական արժեքները երիտասարդության լայն զանգվածներին այնպիսի միջոցներով, որոնցով կարելի է մանիպուլյացիա անել: *Երկրորդ* գլխավոր պատճառն այն է, որ սոցիալականացումն օգնում է *«մասնակցային ոգու»* տարածմանը: Անկախ փաստացի իշխանության ռեալ բաշխումից, լիդերները հարկադրված են տեսականորեն հիմնավորել իրենց ղեկավարելու իրավունքն այն մարդկանց աջակցությամբ, ովքեր կախվածության մեջ են իրենց կողմից ընդունվող որոշումներից:

Նշենք, որ քաղաքական սոցիալականացումը ենթադրում է անընդմեջ ուսուցման գործընթաց: Ուսուցումը նախկինում ընկալված վարքի մոդելների անընդհատ նորացման, հավելման գործընթաց է: Երբ վաղ ձեռքբերված վարքի մոդելները չեն համապատասխանում արդի իրականությանը, տեղի են ունենում նշանակալից փոփոխություններ: Բնականաբար, այս հանգամանքներում վարքի նոր մոդելների անհրաժեշտություն է զգացվում: Այստեղ միանգամայն տեղին է հիշատակել Տ. Շիբուտանիի այն միտքը, որ վարքի մոդելները անցած հիմնախնդիրների յուրօրինակ լուծումներն են: Յուրաքանչյուր ոք բախվում է իր տեսակի մեջ եզակի հիմնախնդիրների հետ և դրանք լուծում է յուրովի, ուստի ամեն մեկի մեջ ձևավորվում է իր նմանը չունեցող անհատականություն: Ասվածը թույլ է տալիս փաստել, որ քաղաքական սոցիալականացման ժամանակ անձի զարգացումը կարելի է դիտարկել որպես տվյալ օրգանիզմի էվոլյուցիոն ձևափոխություն, որպես հետևանք այն բանի, թե ինչպես է անձը հաշվի նստում նոր հանգամանքների հետ:

Խոսելով քաղաքական սոցիալականացման տեսական հիմքերի մասին՝ հարկ է նշել հիմնահարցի փիլիսոփայական հայեցակետի առավել կարևորների լուսաբանման անհրաժեշտությունը:

Պոզիտիվիզմի ծառայությունն այն է, որ նրա ներկայացուցիչներն ընդգծում են մարդկային գործունեության դերը, ուսումնասիրում են մարդկանց վարքը քաղաքականության մեջ, ձգտում են օգտագործել նորագույն տեխնիկական միջոցներ փաստական նյութի հետազոտման համար:

Կառուցվածքային ֆունկցիոնալիզմը ձգտում է ստեղծել մարդկային գործունեության միասնական տեսություն: Նրա ներկայացուցիչները գիտակցում են ժամանակակից հասարակության և անձի եսասեր էության միջև գոյություն ունեցող կապը: Ուստի առաջարկում են կատարելագործել հսկողությունը անձի վրա, ցանկալի ուղղությամբ ապահովել նրա սոցիալականացումը, որն օգտակար կարող է լինել հասարակության նորմալ գործունեության համար:

Ոչ բանական մարդաբանական ուղղության ներկայացուցիչները գտնում են, որ անձն ունի ներքին բարդ կառուցվածք, նրա քաղաքական սոցիալականացումն ընթանում է համատեղ խմբակային գործունեության մեջ՝ ընդունելով կազմակերպված որոշումներ: Անձի և սոցիալական միջավայրի միջև գոյություն ունեցող կապը բավական խորն է, իսկ փոխազդեցության մեխանիզմները՝ բազմազան:

Սոցիալականացման տեսության մեջ գաղափարների մի նոր շարք առաջ քաշեց Զ. Ֆրեյդը, որն ընդգծեց անգիտակցականի դերը որպես վարքի կարևոր բաղկացուցիչ: Ֆրեյդն ուշադրությունը հիմնականում բևեռեց անձի զգայական հիմքին և առաջ քաշեց այն միտքը, որ մարդու կենսաբանական սկիզբն առաջնային է սոցիալականի համեմատ:

Քաղաքական սոցիալականացման տեսության ստեղծման գործում անժխտելի է հոգեբանների և սոցիոլոգների ներդրումը, որոնք մշակել են անձի մոդելներ, սոցիալական նորմերի և արժեքների ազդեցության մեխանիզմներ:

Մշակութա-մարդաբանները սոցիալականացումը դիտարկում են որպես մշակութային ժառանգության փոխանցման գործընթաց: Մարդը մշակույթն ընկալում է իր անհատական զարգացման պրիզմայով: Մշակույթը սերտորեն կապված է ազգային բնութագրի հետ, որում ամրագրված են կոնկրետ էթնիկական խմբի սերնդեսերունդ փոխանցվող հոգեբանական գծերը:

Քաղաքական սոցիալականացման հիմնախնդրի բոլորովին տարբեր մեկնաբանություն են տալիս սոցիալական հոգեբանները, որոնք անձին դիտարկում են սոցիալական ամբողջից ածանցյալ: Դրա հետ մեկտեղ՝ անձերի շփումն ընթանում է օբյեկտիվ օրենքներով, որոնք ամրագրված են սոցիալական դերերի համակարգում: Այս ուղղության շրջանակներում առաջ եկավ կոնֆորմիզմը[1], որը սոցիա-

[1] **Կոնֆորմիզմ**-լատ. conformis - նման, համապատասխան, քաղաքական հարմարվողականության միջոց, որը բնութագրվում է գոյություն ունեցող կարգերի պասիվ

լականացման խնդիրը հանգեցնում է սոցիալական միջավայրի հետ առավելագույն նմանակեցմանը: Կոնֆորմիստները քաղաքական սոցիալականացումը նույնացնում են դերերի պարզ յուրացման հետ, որի արդյունքում տեղի է ունենում պասիվ անհատի հարմարվողականություն վարքի պատրաստի մոդելներին, այսինքն՝ վարքի ձևերի պարզ փոխանցում մեկից մյուսին: Այս հայեցակետը լայն տարածում գտավ կազմակերպման և կառավարման տեսություններում:

Քաղաքական սոցիալականացման կոգնիտիվ մոդելի ներկայացուցիչները, մերժելով անձի նկատմամբ վարքաբանական մոտեցումը, կարևորը համարում են անձի ճանաչողական, զգայական, բարոյական կառուցվածքների զարգացումը, նրա պահանջմունքները: Ըստ կոգնիտիվիզմի՝ անձի վարքը պայմանավորված է նրա գիտելիքներով, որոնք մարդու գիտակցության մեջ ձևավորում են որոշակի պատկեր աշխարհի մասին: Հենց այդ պատկերը, այլ ոչ թե իրականությունն է կառավարում մարդկանց վարքը: Այս մոտեցման շրջանակներում մշակվում են անձի զարգացման փուլերը, և ընդգծվում է, որ անձի հասունացման ընթացքում քաղաքական սոցիալականացման գործակալները ոչ էական դեր են խաղում, քանի որ անձի մեջ ձևավորվում են բնական ուժեր, որոնք ապահովում են նրա սահուն մուտքը հասարակություն:

Քաղաքական սոցիալականացման վերաբերյալ փիլիսոփայական հայեցակետերը կարևոր տեսական նշանակություն ունեցան քաղաքական սոցիալականացման տեսության ձևավորման համար:

Քաղաքական սոցիալականացման դասական տեսությունը մշակվել է Չիկագոյի գիտնականների կողմից Դ. Իստոնի գլխավորությամբ: Նրանք քաղաքական սոցիալականացումը դիտարկում են որպես մարդու կողմից հատուկ դերերի յուրացման գործընթաց, որոնք անհրաժեշտ են քաղաքականության ոլորտում գործունեություն ծավալելու համար: Այս տեսության համակիրները (Լ. Կոեն, Ռ. Լիպտոն, Թ. Պարսոնս) հիմնականում ուշադրությունը բևեռում են մարդու և քաղաքական համակարգի ու նրա ինստիտուտների հետ ունեցած փոխգործողությունների վրա:

Քաղաքական գիտության մեջ մյուս հեղինակավոր ուղղությունը (Մ.Հաբերմաս, Կ. Լուման) քաղաքական սոցիալականացումը դիտարկում է որպես ակուլտուրացիայի երևույթ, այսինքն արժեքների յուրացման գործընթաց՝ առաջին պլանում, այսպիսով, դնելով

ընդունմամբ:

մարդու քաղաքական գիտակցության և վարքի ներանձնային, հոգեբանական մեխանիզմները:

Որոշ գիտնականներ, որոնք աշխատում են հոգեվերլուծության հունով (է. էրիկսոն, է. Ֆրոմ), կարևորագույնը համարում են քաղաքական գործունեության անգիտակցական ձևերը: Ըստ նրանց՝ քաղաքական սոցիալականացումը մարդկային զգացմունքների և պատկերացումների քաղաքականացման թաքնված գործընթաց է:

Չնայած այս մոտեցումների տարբերություններին՝ գիտնականների մեծ մասը գտնում է, որ քաղաքական սոցիալականացման կարևորագույն գործառույթն անձի կողմնորոշվելու ընդունակությունն է քաղաքական տարածության մեջ: Այս իմաստով քաղաքական սոցիալականացումը երկկողմանի գործընթաց է. մի կողմից՝ այն փաստում է անձի կողմից որոշակի նորմերի, արժեքների, դերային սպասումների յուրացման հանգամանքը, որը պահանջում է քաղաքական համակարգը, մյուս կողմից՝ ցույց է տալիս, թե ինչպես է անձը ընտրողաբար յուրացնում այդ արժեքները և պատկերացումները՝ ամրագրելով դրանք քաղաքական վարքի այս կամ այն ձևերում:

Քաղաքական սոցիալականացումը հասարակության քաղաքական կառույցների վերարտադրություն է, որը բնորոշ է հասարակական-քաղաքական հարաբերություններին, այդ հարաբերությունները կրող սուբյեկտների մասնակի որակներին՝ անձանց, ովքեր փաստացիորեն ստեղծում, պահում և իրականացնում են այդ հաաբերություններն իրենց ողջ կյանքի ընթացքում: Սոցիալականացումը կատարում է յուրօրինակ միջնորդի դեր, որն անցյալը կապում է ապագայի հետ:

Սոցիալականացման մասնավոր գործառույթի՝ ավանդական հասարակական հարաբերությունների պահպանման տեսանկյունից, սոցիալականացումն անձի խիստ ներգրավումն է մինչ այդ ստեղծված հասարակական հարաբերությունների համակարգում, ինչը նպաստում է նրա սոցիալապես նշանակալից կյանքի նպատակային սահմանափակմանը: Սակայն սա մի կողմն է միայն: Այս տեսանկյունից դիպուկ է Մարքսի սահմանումը. «Անհատը, հանդես գալով որպես սոցիալականացման «օբյեկտ», միաժամանակ համարվում է նաև հասարակական ակտիվության սուբյեկտ, հասարակական ձևերի ստեղծողը: Դրա հետ մեկտեղ, փոխվում են ոչ միայն օբյեկտիվ պայմանները, փոխվում են նաև հենց իրենք՝ արտադրողները՝ մշակելով նոր որակներ, ստեղծելով նոր ուժեր և նոր պատկերացումներ,

շփման նոր միջոցներ, նոր պահանջմունքներ և նոր լեզու»:

Այլ կերպ, չի կարելի մոռանալ այն փաստը, որ ոչ միայն հասարակությունն է կերտում մարդուն՝ homo poloitikus-ին, այլև մարդն էլ ստեղծում է հասարակություն, ինքն իրեն և շրջապատին: Անձը միաժամանակ քաղաքականության օբյեկտ է և սուբյեկտ:

Քաղաքագիտության մեջ գոյություն ունի քաղաքական սոցիալականացման հետազոտման երկու մոտեցում. քաղաքական սոցիալականացման ընդհանուր տեսության տեսանկյունից, որը մեկնաբանում է, թե ինչպես է ընթանում անհատի սոցիալականացումը քաղաքական միջավայրում: Սա սոցիալականացման ընդհանուր տեսության մասնակի բնագավառն է:

Մյուսը՝ քաղաքական տեսության տեսանկյունից, որը քաղաքական գիտությունը քիչ է ուսումնասիրել: Դրա ուսումնասիրության օբյեկտը քաղաքական սոցիալականացման ընդհանուր տեսության կատեգորիաներն են, որոնք անհրաժեշտ և օգտակար են քաղաքական համակարգերի վերլուծության ժամանակ:

Քաղաքագետների մեծ մասը կարևորում է առաջին մոտեցումը՝ քաղաքական սոցիալականացումը համարելով կամ քաղաքական հայացքների, գաղափարների և նորմերի փոխանցման գործընթաց սերնդե-սերունդ, կամ անհատի քաղաքական հասունացման, նրա քաղաքական եսի ձևավորման գործընթաց: Միևնույն ժամանակ Դ. Իստոնը և Ռ. Հեսսը քաղաքական սոցիալականացումը դիտարկում են որպես միջոց, որի օգնությամբ քաղաքական համակարգի անդամները ձեռք են բերում երեք հիմնական կենսական կողմնորոշումներ.

- քաղաքական գիտելիքների որոշակի գումար, պատկերացումներ քաղաքական գործընթացների բնույթի, քաղաքական լիդերի գործունեության մասին,
- քաղաքական արժեքներ, որոնք դիտվում են որպես ընդհանուր նպատակներ, որոնց պետք է ձգտի համակարգը,
- կողմնորոշումներ, որոնց միջոցով անհատը հարաբերվում է քաղաքական օբյեկտների հետ (վստահություն, համաձայնություն, համակրանք, թշնամանք և այլն):

Ժամանակակից հասարակության մեջ մեծ կարևորություն ունեն քաղաքական սոցիալականացման երկու հիմնական մակարդակները. *մակրոմակարդակը,* այսինքն, ինչպես է ընթանում անձի մուտքը քաղաքականություն քաղաքական համակարգերի շրջանակներում, ինչպիսի գործոնների ազդեցությամբ է ընթանում քաղաքական վար-

քի և գիտակցության ձևերի ստեղծումը, ինչպես են տարբեր նորաստեղծ կուսակցություններ, մտնելով այս կամ այն երկրի քաղաքական համակարգի մեջ, անդամագրում նոր անդամներ, ինչպես է ձևավորվում քաղաքական գիտակցությունը գաղափարախոսության ազդեցությամբ: *Միկրոմակարդակը,* այսինքն անձի ներգրավումը որևէ կոնկրետ քաղաքական կազմակերպության մեջ, նրա կողմից որոշակի դերի, վարքի կաղապարների յուրացումը:

Վերլուծելով քաղաքական սոցիալականացման մակրո և միկրոմակարդակները՝ փորձեմ տալ քաղաքական սոցիալականացման սահմանումը.

Քաղաքական սոցիալականացումը քաղաքական և ոչ քաղաքական գործոնների ազդեցությամբ անձի քաղաքական գիտակցության և քաղաքական կամքի ձևավորման գործընթացների ամբողջություն է, որն ի վերջո իր արտահայտությունն է գտնում նրա քաղաքական վարքի մեջ:

Քաղաքական սոցիալականացումն անքակտելիորեն կապված է քաղաքական գիտակցության հետ, որը ծագել է քաղաքականության և քաղաքական հարաբերությունների հետ: Քաղաքականությունը յուրահատուկ բնագավառ է, որտեղ ի հայտ են գալիս սոցիալական խմբերի արմատական շահերը, նրանց նպատակները և խնդիրները, մյուս դասերի կամ սոցիալական խմբերի նկատմամբ վերաբերմունքը:

Քաղաքական գիտակցությունն ունի ոչ միայն հասարակական, այլ նաև անձնական բնույթ, որը ոչ լրիվ և ոչ միշտ է համապատասխանում առաջինին, քանի որ յուրաքանչյուր մարդ անհատականություն է: Այստեղ կարևորվում է քաղաքական սոցիալականացման սուբյեկտների նպատակամղված գործունեությունը, որի արդյունքն անհատականության ձևավորումն է և գիտակցության բարձրացումը: Ասվածից կարելի է պնդել, որ քաղաքական գիտակցությունը մարդու հոգևոր արժեքների հիմքն է, որի շնորհիվ նա կարողանում է գնահատել սոցիալական գործընթացները, իր և ուրիշների արարքներն իր և հասարակության տեսակետից ընդհանրապես:

Անձի քաղաքական գիտակցությունը և վարքը ձևավորվում են ոչ միայն քաղաքական (չնայած նրանց առաջնային նշանակությանը), այլև ոչ քաղաքական գործոնների ազդեցությամբ:

Ոչ քաղաքական գործոններն են՝ ընտանիքը, դպրոցը, եկեղեցին, մշակույթը, արվեստը, գեղարվեստական գրականությունը և այլն, որոնք էական դեր ունեն քաղաքական գաղափարների և արժեքների

փոխանցման գործընթացում:

Քաղաքական գործոնները ձևավորվում են քաղաքական համակարգում, որտեղ էական ազդեցություն ունեն պետական մեքենայի բնույթը և տեսակը, վարչակարգը, քաղաքական ինստիտուտները: Անհատին քաղաքականության մեջ ներգրավելու մեխանիզմների օգնությամբ այս գործոններն էական դեր են խաղում նրա քաղաքական վարքագծի ձևավորման ժամանակ:

Իրականում քաղաքական և ոչ քաղաքական գործոնները միահյուսված են, թեև ոչ միանշանակ դեր են խաղում մարդկանց կյանքում:

Այսպիսով, քաղաքական գիտակցությունը քաղաքական սոցիալականացման գործընթացի իրականացման կարևորագույն տարրն է:

Քաղաքական սոցիալականացման գործընթացը, ինչպես նշում է Վ. Ն. Լավրինենկոն, ներառում է բազմաթիվ մակարդակներ: Դրանցից ամենալայն ուղղվածությունը ունեն միջազգային հանրույթները և կազմակերպությունները: Այս մակարդակում անձի վրա ներգործում են միջազգային հասարակայնության կողմից ընդունված նորմերը և արժեքները:

Քաղաքական սոցիալականացման սոցիալական մակարդակն ընդգրկում է մեծ սոցիալական խմբերը և հասարակությանն ամբողջությամբ: Այս մակարդակում անձի վրա ազդում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ պետությունը, իշխանությունը, քաղաքական կուսակցությունները, ինչպես նաև տնտեսական ճգնաժամերը, գործազրկությունը և այլն:

Քաղաքական սոցիալականացման ստորին մակարդակը անձնային մակարդակն է, որի ժամանակ անձը կրում է իր շրջապատի ազդեցության կնիքը: Այստեղ սոցիալականացման մեխանիզմներն են՝ շահը, արժեքային կողմնորոշումները, շարժառիթները, դրդապատճառները, որոնց օգնությամբ ձևավորվում են անձի քաղաքական գիտակցությունը և վարքը քաղաքականության մեջ: Սակայն պետք է նկատի ունենալ, որ քաղաքական կազմակերպության նպատակները և արժեքները մեխանիկական ազդեցություն չունեն անձի վրա այնքանով, որքանով նրանք պետք է անցնեն անձի անհատական պահանջմունքների պրիզմայով: Առանց անձի կողմից արժեքների յուրացման և իմաստավորման հնարավոր չէ մեխանիզմների նորմալ գործառնությունը, որը շարունակվում է ողջ կյանքի ընթաց-

քում: Յուրացված քաղաքական նորմերը և արժեքները քաղաքական ոլորտում ծնում են հնարավոր վարքի քիչ թե շատ կայուն մոդելներ: Այս գործընթացի բնորոշ գիծը ստացված տեղեկատվության ակտիվ ընկալումն է, նրա մշակումը և քաղաքական կյանքի երևույթների նկատմամբ իր դիրքորոշման հստակեցումը:

Հասարակության մեջ տեղի ունեցող արմատական փոփոխությունները, անկասկած, իրենց հետքն են թողնում կյանքի բոլոր ոլորտների, այդ թվում՝ կրթության համակարգի, դաստիարակության և սոցիալականացման վրա: Անձի քաղաքական սոցիալականացման և դաստիարակության փոխհարաբերությունը բավական բարդ և հակասական գործընթաց է:

Քաղաքական սոցիալականացման ինստիտուտները հատուկ ստեղծված կազմակերպությունների ու մարմինների համակարգ են, որոնք ամենից առաջ կրթության ու դաստիարակության միջոցով կոչված են ապահովել անհատի զարգացումը: Պետականորեն կազմակերպված հասարակության մեջ այդ կազմակերպությունների ու մարմինների բացարձակ մեծամասնությունն ունի իրավական կարգավիճակ, չնայած որ չի բացառվում նաև ոչ պետական ինքնագործ կազմակերպությունների գոյությունը: Քաղաքական սոցիալականացումը գործընթաց է, որի ժամանակ տեղի է ունենում սոցիալական փորձի և արժեքային կողմնորոշումների յուրացում որոշակի սոցիալական դերի կատարման համար:

Գիտական գրականության մեջ հաճախ փորձ է արվում նույնացնել այդ երևույթները: Ուստի, խուսափելով այդ միտումներից, հիմք ընդունելով Վ. Վ. Մորոզովի և Ա. Պ. Սկրոբովի կարծիքը, նշենք, որ դաստիարակությունն անընդմեջ և նպատակադիր գործունեություն է՝ անձի կամ խմբի նեջ ձևավորելու հասարակայնորեն անհրաժեշտ արժեքներ, գիտակցություն և կամք: Դաստիարակության համակարգը կարծես թե կարգավորում է սոցիալականացման գործընթացը՝ որոշ առումներով հանդիսանալով նրա նախահիմքը:

Արդիականացման ներկա փուլում քաղաքական սոցիալականացման և դաստիարակության հիմնախնդրի ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի հակասությունների ըմբռնման համար՝ կապված մարդկանց կենսագործունեության հետ:

Հասարակության մեջ գոյություն ունեցող հակասությունների պատճառները, ըստ Վ.Վ.Մորոզովի և Ա.Պ.Սկրոբովի, բազմազան են .

- նախորդ հասարակությունից մնացած երևույթները, որոնք

բարեփոխումների ազդեցությամբ ձևափոխվում են և դրվում նոր սոցիալ-տնտեսական, քաղաքական և հոգևոր շրջանակների մեջ,

- ժամանակակից հասարակության օբյեկտիվ օրենքների գործողությունը, հնի և նորի միջև պայքարի անխուսափելիությունը: Պահպանողական միտումների և կաղապարների ազդեցությունը մարդկանց կենսագործունեության վրա բավական ուժեղ է և տարածված,
- հասարակության զարգացման օբյեկտիվ օրենքների, հասարակության բարոյական, իրավական և քաղաքական պահանջմունքների խախտումը: Իրական հասարակական հարաբերություններից ծագող հակասությունները սուբյեկտիվ պատճառներով գնահատական չեն ստանում և չեն լուծվում: Արդյունքում դրանք դառնում են արգելակ հասարակության զարգացման համար:

Անձի զարգացումն ինքնին բազմաբնույթ և հակասական գործընթաց է, քանի որ իր վրա կրում է հասարակական բոլոր տեսակի հարաբերությունների օբյեկտիվացված և սուբյեկտիվացված ազդեցության կնիքը: Բնականաբար, այս փաստը մտածողներին տարբեր մոտեցումների տեղիք է տվել: Այսպես, Ա.Գ.Կովալյովը անձի զարգացման այսպիսի հակասություններ է մատնանշում. հակասություններ անձի տարբեր կողմերի կամ հատկությունների, ցանկությունների և դրանց իրականացման հնարավորությունների, տրամաբանականի և զգայականի միջև, որոնք ծագում են բնատուր և ձեռքբերովի հատկությունների անհամապատասխանությունից:

Բ. Տ. Լիխաչովը տարբերակում է օբյեկտիվ անհրաժեշտության՝ դառնալ քաղաքացի, ունենալ պարտքի զգացում, հասարակական ակտիվություն, և սուբյեկտիվ դժվարության միջև եղած հակասությունը, այն է՝ սոցիալական փորձի պակաս, կամային հատկությունների, գիտակցության բացակայություն:

Պետք է նշել, որ Ա. Գ. Կովալյովը և Բ. Տ. Լիխաչովը իրավացիորեն շեշտը դնում են անձի զարգացման օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի վրա, որոնք պայմանավորված են անձի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկություններով: Կյանքի ընթացքում այս հատկությունները կարող են դառնալ հակասական և նույնիսկ իրարամերժ:

Քաղաքական սոցիալականացման հիմնական պայմաններից են՝ գործողությունների ազատության ապահովումը, անհատի

մասնակցությունը հասարակական-քաղաքական կյանքին: Այդ ազատությունը հիմնականում կախված է ինստիտուցիոնալ համակարգի տիպից, տնտեսական հարաբերությունների բնույթից, ինչպես նաև անձի հասունության մակարդակից:

Քաղաքական սոցիալականացման մեխանիզմը մարդու գործողություններում կարելի է պատկերացնել հետևյալ կերպ. *հետաքրքրությունը քաղաքական տեղեկատվության հանդեպ, քաղաքական գնահատական տալու սովորույթը աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին, լայն քաղաքական մտահորիզոնը, համակարգված քաղաքական գիտելիքների պահանջը, որոնք իրականացվում են կրթությամբ և ինքնակրթությամբ:*

Հանձնարարվող գրականություն

1. **Almond G. and S. Verba**, The Civic Culture: Political Attitudes and Democracy in Five Nations, 1963 **p.**

2. **Barner-Barry c., Rosenwein R**., Psycho-logical Perspectives on Politics, N. J.,1985, p. 71-80

3. **Ю. В. Ирхин, В. Д. Зотов, Л. В. Зотова**, Политология, М., 1999, с. 299-301

4. **А. И. Соловьев,** Политология, М., 2006, с. 385-388

5. Политология, Краткий энциклопедический словаръ-справочник, Ростов на Дону, М., 1997, с. 115

6. **Ковалев А. Г.,** Психология личности, М., 1965, с. 241-242

7. **Лихачев Б. Т.,** Воспитателъные аспекты обучения, М.,1982. с. 26-28

8. **Морозов В. В., Скробов А. П.,** Протеворечивостъ социализации и воспитание молодежи в условиях реформ, Социалъно-политический журнал, М., 1998, с. 145-149

9. **Маркс К., Энгелъс Ф.,** Сочинения, т. 46., с. 483-484

10. **Հ. Շափաղաթյան,** Քաղաքական մասնակցության արդի հիմնահարցեր, Ե., 2007, էջ 18-21

11. **Թամազյան Ա. Խ.**,Գիտական աշխատությունների ժողովածու, «Քաղաքական սոցիալիզացիայի տեսական հիմքերը», Ե., 2000, էջ 64-70

Դասախոսություն 4

Քաղաքական սոցիալականացման գործակալների դերն անհատի քաղաքական կողմնորոշումների ձևավորման գործում

Սոցիալականացման գործակալները մարդու հիմնական ուղեկիցներն են, որոնք նախորոշում են նրա կողմից մշակութային ստանդարտների յուրացման հնարավորությունը: Տարբերում ենք քաղաքական սոցիալականացման *առաջնային և երկրորդային գործակալներ:* Ընտանիքը, հասակակիցների խմբերը, ոչ քաղաքական ասոցիացիաները համարվում են *առաջնային* գործակալներ: Այս գործակալներն անձնավորված են, նրանց ազդեցությունը համակարգված չէ, ինչն էլ դրանք դարձնում է դժվար կառավարելի և քիչ շահարկելի: *Երկրորդային* գործակալներն են՝ դպրոցը, քաղաքական կազմակերպութունները և կուսակցությունները, ՁԼՄ-ը: Այս օբյեկտները, ընդհակառակը, լավ համակարգված են, ունեն ուղղորդված քաղաքական ազդեցություն և մեծ է շահարկման հավանականությունը:

Եթե քաղաքական սոցիալականացման հիմնական գործակալները գործում են մեկ ուղղությամբ, ապա անհատի մոտ ձևավորվում է այսպես կոչված **կումուլյատիվ քաղաքական սոցիալականացում,** այսինքն, գործընթացում դրսևորվում են հստակ արտահայտված քաղաքական համոզմունքներ և հայացքներ, կայուն քաղաքական նույնականացում: Իսկ եթե այդ գործակալների գործունեությունն ուղղված է հակասական քաղաքական նորմերի և կանոնների յուրացմանը, ապա առաջանում է մասնատված, անկայուն քաղաքական նույնականացում: Դրանցից յուրաքանչյուրի հեղինակությունը և ազդեցության արդյունավետությունը կախված է շատ գործոններից, նախ և առաջ անհատի տարիքից, ներքին իրավիճակից, սոցիալ-քաղաքական գործընթացներին նրա ներգրավվածության աստիճանից, նրանց իրականացրած դերերից, քաղաքակրթական և պատմական պայմաններից և այլն: Ժամանակակից տեղեկատվության և գիտելիքի դարաշրջանում առավել մեծ ազդեցություն ունեն կրթական հաստատությունները և հաղորդակցական միջոցները:

Քաղաքական սոցիալականացումը ամբողջ կյանքի ընթացքում

տևական գործընթաց է, ուստի գոյություն ունի **սկզբնական և երկրորդային** քաղաքական սոցիալականացում: Սրանց միջև տարբերությունները հանգում են հետևյալներին՝ մարդու տարիքը, սուբյեկտիվ փորձի առկայությունը, հակվածությունն ինքնուրույնության, վարքը քաղաքական ոլորտում և այլն:

Սկզբնական քաղաքական սոցիալականացման ընթացքում տեղի է ունենում անհատի կողմից քաղաքական երևույթների նախասկզբնական յուրացում, որն էլ ձևավորում է քաղաքական կյանքի նկատմամբ որոշակի վերաբերմունք: Քաղաքական սոցիալականացման առաջնային փուլում և, առհասարակ, սոցիալականացման ողջ ընթացքում ընտանիքը այն ինստիտուտն է, որի շրջանակներում ձեռք բերված գիտելիքները, արժեքները անհատի քաղաքական որակների ձևավորման համար հիմք են հանդիսանում: Կերպարները, նորմերն ու արժեքները, որոնք ձեռք են բերվել ընտանիքում, կարող են, իհարկե, ձևափոխվել սոցիալականացման հետագա փորձի ազդեցությամբ, բայց հենց մանկական հասակում են ձևավորվում ընկալման «ֆոնային» հոգեբանական գործոնները, իշխանության առավել կայուն և փոփոխության չենթարկվող մեխանիզմները: Երեխաների վերաբերմունքը ծնողների հանդեպ, որը ձևավորվում է ընտանիքում, հետագայում վերափոխվում է կողմնորոշման այն անձանց հանդեպ, ովքեր առավել լայն հասարակական պլանով իրականացնում են հիմնական գործառույթներ: Հարաբերական ինքնավար հոգեբանական մեխանիզմներից մեկը, որի օգնությամբ ծնողներն ազդում են երեխաների վրա, *նույնականացումն է*. երբ երեխան փորձում է նմանվել ծնողներին, կողմնորոշվում է դեպի նրանց օրինակը: «Նույնականացում» հասկացությունը զարգացվել է այնպիսի դպրոցների շրջանակներում, ինչպիսիք են՝ ֆրեյդիզմը, նեոֆրեյդիզմը, նեոբիհևիորիզմը: Նույնականացման գործընթացի էությունը այն է, որ մարդուն ձևավորում են ոչ թե ֆիզիկական միջավայրը, նորմերը, ավանդույթները, այլ նորմերի այն համակարգը, որի հետ նա իրեն նույնականացնում է: Հայտնի է, որ ծանոթությունը քաղաքական աշխարհի հետ սկսվում է դեռ վաղ հասակից, և որ վաղ փուլում քաղաքական սոցիալականացման նշանակությունը քաղաքացիական որակների ձևավորման համար շատ կարևոր է: ՄԱԿ-ը ընտանիքը բնութագրում է որպես հասարակության կենտրոնում գտնվող, իր մասշտաբներով ամենափոքր դեմոկրատական հանրույթը, որտեղ սկզբնավորվում են ապագա քաղաքացիների հիմնական

համոզմունքները: Քաղաքագիտության հիմնադիր Արիստոտելը գրել է, որ, քանի որ յուրաքանչյուր ընտանիք կազմում է պետության մի մասը, ապա անհրաժեշտ է երեխաների դաստիարակությունը համապատասխանեցնել քաղաքական կարգի սկզբունքներին, քանի որ երեխաներն են հետագայում դառնում քաղաքական կյանքի մասնակիցները: Համաշխարհային քաղաքագիտության մեջ բազմաթիվ ուսումնասիրություններ կան մանկության և դեռահասության տարիքում քաղաքական սոցիալականացման արդյունավետության վերաբերյալ: Այս ոլորտում լուրջ ներդրում ունեն ամերիկացի գիտնականները, հատկապես Դ. Իստոնը և Ջ. Դենիսը: Ըստ նրանց՝ երեխան քաղաքականության մասին տեղեկացվում է ծնողներից, նրանց գնահատականներից, զգացմունքներից ու վերաբերմունքից, որի արդյունքում տեղի է ունենում քաղաքականության անհատականացում: Քաղաքական կերպարները, որոնց երեխան հաճախ է տեսնում կամ լսում, հանդիսանում են երկրի նախագահի և ոստիկանի կերպարները: Իսկ զարգացման ավելի բարձր փուլում երեխան հասկանում է, որ գոյություն ունեն որոշակի ամրագրված իրավունքներ, նորմեր, որոնց ենթարկվում են նաև իր ծնողները: Կատարված բազմաթիվ հետազոտությունները հանգեցնում են նրան, որ ընտանիքում հարաբերությունների որակը և խստությունը պայմանավորում են երեխայի անհատականության կառուցվածքը, ինչը պայմանավորում է նրա մոտ որոշակի քաղաքական կողմնորոշումների ձևավորումը: Հետաքրքիր մի փաստ էլ արձանագրենք. այն ընտանիքներում, որտեղ իշխող է մոր դերը, երեխաները քիչ են հակված քաղաքականությանը: Ընտանեկան հարաբերությունները աղջիկ երեխաների մոտ ձևավորում են անհատական նույնականացում կոնկրետ անձի, նրա վարքի հետ, իսկ տղաների պարագայում՝ դերային կամ դիրքային նույնականացում մեկ ուրիշի սոցիալական դերի հետ, բայց ոչ պարտադիր նրա արժեքների և հայացքների: Ագրեսիվ մեծահասակի հետ նույնականացումը խթանում է այնպիսի «ֆոնային» բնութագրիչների զարգացմանը, ինչպիսիք են՝ թշնամությունը, կախվածությունը: Անհատը, յուրացնելով դերային նման մոդել, արտահայտում է քաղաքական պահպանողականություն և չի ձգտում քաղաքական մասնակցության: Իսկ ոչ ագրեսիվ մեծահասակների հետ նույնականացումը տեղի է ունենում այնպիսի ընտանիքներում, որտեղ գերակայում է ջերմությունը, հանդուրժողությունը: Նման միջավայրում մեծացած անհատը հակված է ակտիվ քաղաքական մասնակցության: Հետազոտություն-

ներն այս ոլորտում ցույց են տալիս, որ հետխորհրդային տարածքում սոցիալ-տնտեսական և քաղաքական անկայունության պայմաններում տեղի է ունենում ընտանիքի դերի նվազեցում, քանի որ հաճախ ընտանիքն աճող սերնդին չի տալիս հստակ քաղաքական կողմնորոշիչներ: Սա պայմանավորված է մի կողմից՝ բազմակարծության պայմաններում համընդհանուր քաղաքական աշխարհայացքի բացակայությամբ, մյուս կողմից՝ ժողովրդավարական համակարգում ընտանիքի բոլոր անդամների մոտ միևնույն քաղաքական դիրքորոշման բացակայությամբ:

Քաղաքական սոցիալականացման *երկրորդ փուլը* սկսվում է դպրոց ընդունվելուց մինչև ընդհանուր և մասնագիտական կրթության ավարտը: Այս ընթացքում մարդիկ ձեռք են բերում որոշակի մտային հասունություն, սոցիալական որակներ: Այս փուլի առանցքային գործակալ կարելի է համարել դպրոցը:

Ժողովրդավարական հասարակության մեջ դպրոցի խնդիրները ներառում են քաղաքական ուսուցումը, այսինքն համապատասխան գիտելիքների ձեռքբերումը, ժողովրդավարական նորմերի և արժեքների ուսուցանումը, ինչպես նաև քննադատական վերաբերմունքի ձևավորումը քաղաքական ինստիտուտների և գործընթացների նկատմամբ: Օրինակ, ԱՄՆ-ում դպրոցն իրավամբ համարվում է պետական քաղաքականության գործիք: Դպրոցական ծրագրերը կոչված են «ամերիկացնելու» անչափահասին, այսինքն դեռևս ցածր դասարանից նրա ուղեղում ներմուծել հավատարմություն ամերիկյան քաղաքական համակարգին, հարգանք պատմության և ավանդույթների նկատմամբ:

Հարկ է ընդգծել նաև դպրոցականների ոչ պաշտոնական ուսուցումը: Այն ներառում է դպրոցականների ոչ ծրագրային գործունեությունը, մասնակցությունը տարբեր տիպի կազմակերպությունների ոչ պարտադիր բնույթի միջոցառումներին: Նման գործունեությունը ձևավորում է ակտիվություն, պատասխանատվություն գոյություն ունեցող արժեքների հանդեպ և այլն: Որքան բարձր է դպրոցականների մասնակցության աստիճանը ոչ ծրագրային գործունեությանը, այնքան հասուն և դրական գնահատական են տալիս կառավարությանը, քաղաքացիությանը և, ընդհանրապես, քաղաքական երևույթներին: Դրա հետ մեկտեղ այստեղ նկատելի է հետևյալ կախվածությունը.

- որքան բարձր է ծնողների կրթական մակարդակը, այնքան հաճախ է երեխան մասնակցում ոչ ծրագրային գործունեութ-

յանը,

- որքան մեծ է աշակերտի ոչ ծրագրային ուսուցման մասնակցության աստիճանը, այնքան բարձր է նրա գիտակցությունը,
- որքան շատ է աշակերտը զգում դպրոցական համակարգի կարևորությունը, այնքան մեծ է նրա սոցիալական հավատը և պատասխանատվությունը,
- որքան բարձր է աշակերտի սոցիալական պատասխանատվությունը, այնքան ավելի դրական է նրա վերաբերմունքը քաղաքականության հանդեպ:

Անշուշտ, այս բնութագրերը մարդու համար սահուն մուտք և մասնակցություն են ապահովում քաղաքականության ոլորտ: Եթե պետությունն իսկապես զարգանում է ժողովրդավարական ուղիով, ապա պետք է նախ և առաջ վարի այնպիսի քաղաքականություն, որ ժողովրդավարական պատկերացումները դառնան երիտասարդ քաղաքացիների քաղաքական մշակույթի մասը, և քանի որ սոցիալականացման բոլոր գործակալներից դպրոցն է առավել հարմար նպատակաուղղված քաղաքականության իրականացման համար, ապա այն ձեռք է բերում քաղաքական և քաղաքացիական դաստիարակությամբ զբաղվող առանցքային ինստիտուտի նշանակություն: Դպրոցական տարիներին մատուցված արժեքների, նորմերի բնույթը մեծապես կախված է քաղաքական համակարգի տիպից: Եթե գերիշխում է մի գաղափարախոսություն, ապա պարզ է, որ նման գաղափարախոսության գերակայության պայմաններում դպրոցականների մոտ ձևավորվում են քիչ թե շատ միասեռ քաղաքական պատկերացումներ: Իսկ ժողովրդավարության պայմաններում դպրոցը ձևավորում և կոփում է հարցասեր, ազատ մտածելակերպով օժտված քաղաքացիներ: Այս նպատակին աջակցում են հատկապես ժամանակակից դպրոցներում ուսուցանվող իրավունքների, քաղաքացիության, ժողովրդավարության մասին տարբեր դասընթացները:

Քաղաքական սոցիալականացման գործընթացում կարևորվում է հասունության ժամանակաշրջանը, թեև քաղաքական կողմնորոշման հիմքերը դրվում են դեռևս մանկական և պատանեկան տարիներին, այնուամենայնիվ, հասուն տարիքում ևս մարդը չի ազատվում քաղաքական սոցիալականացման ազդեցությունից:

Քաղաքական սոցիալականացման կարևոր ինստիտուտ է բարձրագույն դպրոցը: Համեմատելով անցյալի հետ՝ դժվար չէ նկատել, որ ուսանողական շարժումները մեր օրերում էական ազդեցություն

ունեն երկրի քաղաքական կյանքում: Արմատական ուսանողական շարժումը թափանցել է նաև քաղաքականության բնագավառ: Այս պարագայում քաղաքական լիդերները լայն հնարավորություններ ունեն քաղաքական արժեքները փոխանցելու երիտասարդության լայն շերտերին: Ուստի այստեղ մեծ նշանակություն են ձեռք բերում քաղաքական մասնակցության անհատական փորձը և արդեն ձևավորված խմբակային գիտակցությունը:

Քաղաքական սոցիալականացման գործակալներից առավել ազդեցիկը արդի հասարակությունում համարվում են ՁԼՄ-ները և հատկապես համացանցը: ՁԼՄ-ներն առավել ուշադրություն են դարձնում և լուսաբանում են բացասական, սենսացիոն երևույթները, ընդունակ են ամենակարճ ժամկետներում ազդել մարդկանց մեծամասնության վրա: Հայտնի ամերիկացի գիտնական Ս. Լիպսեթը նշում է, որ այն քաղաքական գործիչները, ովքեր կարգապահ են և անկաշառ, անհետաքրքիր և ձանձրալի են: Մինչդեռ մամուլը հետապնդում է անհաջողակներին և նրանց, ովքեր ունեն շատ թերություններ: Այս ամենն աճող սերնդի մոտ ձևավորում է բացասական վերաբերմունք քաղաքականության հանդեպ: Իր ազդեցությամբ հեռուստատեսությանը չի զիջում և նրանից առաջ է անցնում համացանցը, որի շնորհիվ ընդլայնվել է քաղաքական գործչի անձնական դաշտը, բարձրացել է մարտավարական և ռազմավարական վերլուծության դերը: Համացանցը, լինելով սոցիալականացման արդիական գործակալ, միաժամանակ հանդիսանում է քաղաքացիական հասարակության ինստիտուտ, որն ապահովում է իշխանության և սոցիումի միջև կապը:

Քաղաքական սոցիալականացման միջոցներ են՝ սոցիալական և իրավական նորմերը, ՁԼՄ-ը, գաղափարախոսությունը:

Ամենաընդհանուր ձևով սոցիալական նորմերի գործողությունը բնութագրվում է հասարակության նշանակալից վարքի տիպերի, սահմանների ընդունմամբ, որոնց շրջանակներում անհատական վարքը ծառայում է հասարակական նպատակների իրականացմանը:

Անձի քաղաքական սոցիալականացման ժամանակ էական դեր են խաղում իրավական նորմերը: Դրանք յուրաքանչյուր քաղաքացու վրա ունեն անմիջական ազդեցություն: Իրավունքը միջնորդավորում է կարևորագույն հարաբերությունները՝ ուղղորդելով զարգացման և կատարելագործման: Այն որոշում է մարդու վարքի և ազատության հնարավոր չափերը՝ նրան տալով ստեղծագործական գործունեության հնարավորություն, ազատություն, անձնական շահերի և պա-

հանջմունքների բավարարում: Միաժամանակ իրավական նորմերը ենթադրում են պարտադիր վարքի ձևեր, որոնք յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է պահպանել հասարակության նորմալ գործառնության համար:

Քաղաքացիական զգացմունքներ դաստիարակելու գործում որոշակի դեր ունեն նաև բանակը, եկեղեցին, քաղաքական խորհրդանիշները, արարողակարգերը, որոնք ազգային հպարտություն են առաջացնում:

Այսպիսով, անկախ նրանից, թե սոցիալականացման ո՛ր գործակալի ազդեցությունն է որոշիչ անհատի սոցիալականացման համար կոնկրետ ժամանակահատվածում, ակնհայտ է մի բան, որ ցանկացած գործակալի ազդեցության ուղղվածությունը, նպատակը և թիրախը անմիջականորեն կապված են քաղաքական համակարգի և քաղաքական կարգի բնույթի հետ:

Հանձնարարվող գրականություն

1. **Аристотелъ,** Сочинения,М.,1983, т. 4,.с.385-401
2. Вестник Московского Университета, И 3, 2001, с.54
3. Вестник Московского Университета, И 4, 2005, с.98
4. Вестник Московского Университета, И 5, 2005, с.104
5. Вестник Московского Университета, И 2, 2007, с.155
6. **Белинская Е. П., Стефаненко Т. Г.,** Этническая социализация подростка, Москва-Воронеж, 2000, с.69
7. **С. Липсет,** Политическая социология// Американская социология, М., 1972, с.162
8. **Barner-Barry C., Rosenwein R**., Psycho-logical Perspectives on Politics,N.J.,1985, p.83-85
9. **Шестопал Е. Б.,**Очерки политической психологии, М., 1990.
10. **Шестопал Е.Б.,** Личностъ и политика, М.,1988.

Դասախոսություն 5

Ընտանիքը որպես սոցիալականացման առաջնային գործակալ. Քաղաքական սոցիալականացման հիմնախնդիրները դեռահասային տարիքում

Քաղաքական սոցիալականացման առաջնային օղակ է ընտանիքը: Հենց այստեղ են ձևավորվում անձի քաղաքական կողմնորոշումների և հայացքների հիմքերը: Ակնհայտ է, որ ընտանիքը շատ դեպքերում նախորոշում է երեխայի քաղաքական հայացքները և վարքը: Ընտանիքն ազդում է ոչ միայն երեխայի քաղաքական կողմնորոշումների վրա, այլև ձևավորում է քաղաքական գործընթացի ակտիվ կամ պասիվ մասնակից: Ամերիկյան պրեզիդենտների շատ կենսագիրներ մատնացույց են անում ընտանիքի կարևոր ազդեցությունն ապագա նախագահների դաստիարակության վրա: Առաջին ծանոթությունն իշխանության հետ տեղի է ունենում ընտանիքում, որտեղ իշխանությունը և օրենքն անձնավորվում են ծնողների կերպարներով: Տվյալ դեպքում նրանց իշխանությունը բացարձակ է, քանի որ երեխան իրավունք և հնարավորություն չունի հակադրվելու նրանց: Այսպիսով, առաջին իշխանությունը, որի հետ բախվում է երեխան, իր էությամբ ամբողջատիրական է:

Քաղաքական սոցիալականացման գործակալների ուսումնասիրության հարցում չափազանց կարևոր նշանակություն է տրվում ընտանիքին: Հետազոտողներ Ջ.Գիլեպսին և Գ. Օլփորթը, հիմք ընդունելով իրենց հետազոտությունները, նշում են, որ չնայած տարբեր մշակույթների միջև տարբերություններին, ընտանիքն այն գլխավոր սոցիալական ինստիտուտն է, որ բոլոր հասարակություններում ունի նույն խնդիրներն ու առաքելությունը: Նշենք, որ Գիլեպսին և Օլփորթը իրենց հետազոտությունն անցկացրել են 10 տարբեր երկրներում 17-22 տարեկան երիտասարդների շրջանում: Հետազոտությունների արդյունքներն ամփոփված են նրանց՝ «Երիտասարդների տեսլականն ապագայի հանդեպ» աշխատությունում: Հետազոտողները, նախաձեռնելով նման ուսումնասիրություն, նպատակ են հետապնդել պատասխանել այն հարցադրումներին, թե ինչպես են տարբեր երկրների երիտասարդները պատկերացնում իրենց ապագան, արդյոք տարբեր երկրների երիտասարդներ նույն կերպ են

պատկերացնում իրենց ապագան և, վերջապես, հետազոտողները փորձել են բացահայտել, թե որքանով է նպատակահարմար միջազգային մասշտաբի սոցիոլոգիական հետազոտության անցկացումը:

Ուսումնասիրությունների մեծ մասը, որոնք վերաբերում են քաղաքական սոցիալականացմանը, ներառում են ընտանիքի ներսում հարաբերությունների հետազոտմանը՝ կապված անհատների քաղաքական վարքի հետ: Ակնհայտ է և ճշմարիտ, որ «ընտանիքն է քաղաքականությունը փոխանցում երեխաներին»:

Ա. Քեմփբելը, Գ. Գուրինը և Ոէ. Միլլերը ներկայացնում են հետաքրքիր փաստեր դեռ 1952 թ. Միչիգանում անցկացված հետազոտության արդյունքներից: Այս հետազոտության բացահայտումները ոչ միայն խոսում են մեր կողմից առաջ քաշված վարկածի ճշմարտության օգտին, այլև ցույց են տալիս ընտանիքի վերաբերյալ քաղաքական սոցիալականացման որոշ նուրբ տեսանկյուններ: Ընտանիքը մի դեպում դիտարկվում է որպես անքակտելի միասնություն, իսկ մյուս կողմից՝ միշտ չէ, որ ծնողները նույն քաղաքական հայացքներն ու կողմնորոշումներն ունեն: Ասվածն է՛լ ավելի արդիական է հատկապես մեր դարաշրջանի համար, երբ ավելի ու ավելի է մեծանում ժողովրդավարական երկրների թիվը, որտեղ քաղաքական հայացքների բազմազանությունն ու այլակարծությունը առաջնային նշանակություն ունեն: Ստացվում է, որ շատ հաճախ երեխան ենթարկվում է տարբեր, երբեմն էլ իրար հակասող քաղաքական գաղափարախոսությունների ազդեցությանը: Որոշ հետազոտություններ փաստում են, որ այն դեպքում, երբ ծնողներն ունեն տարբեր քաղաքական հայացքներ, համաձայնությունը կնքվում է հօգուտ տղամարդու, այսինքն, առաջին պլան է մղվում հոր դոմինանտ դերը, սակայն դա ամենևին չի նշանակում, որ ամուսնու՝ որպես ընտանիքի հոր, ազդեցությունը երեխայի սոցիալականացման հարցում ավելի մեծ է, քան մայր ծնողի: Ավելին, ինչպես նշում է Ե. Մակկոբին, ծնող-երեխա հարաբերությունների ուսումնասիրությունները վկայում են, որ գրեթե բացակայում են փաստերը հոր ավանդական համարվող դոմինանտ դերի մասին, քանի որ, սովորաբար, երեխաներն ավելի հակված են հետևել մոր նախասիրություններին: Դա բացատրվում է նաև այն հանգամանքով, որ մայրերն ավելի շատ ժամանակ են տրամադրում երեխաներին, ինչն էլ կարող է նույնականացման համար բարենպաստ պայմաններ ստեղծել հօգուտ իրենց:

Եթե դիտարկենք ընտրությունների հանդեպ ցուցաբերած հե-

տաքրքրությունը որպես քաղաքական մասնակցության ցուցանիշ, ապա ըստ Φ. Լազարսֆիլդի, ընտանիքի ազդեցությունը հսկայական է: Ընտրությունների նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերած և ընտրություններին մասնակցած տղամարդկանց միայն 30%-ն է պնդել, որ իրենց կանայք չեն հետաքրքրվում ընտրություններով կամ չեն մասնակցելու ընտրություններին: Այն ընտանիքներում, որտեղ ծնողները հետևում են զանգվածային լրատվամիջոցներին, երեխաների 67%-ը նույնպես հետևում է, իսկ ընտանիքներում, որտեղ չեն հետևում, միայն 28%-ն է հետաքրքրվում լուրերով: Այս տեսանկյունից հետաքրքիր է նաև Պ. Ստարքի անցկացրած հետազոտությունը: Համեմատվում են 60 քաղաքականապես ակտիվ և 60 ոչ ակտիվ չափահասներ: Քաղաքականապես ակտիվ քաղաքացիները, ովքեր նաև կուսակցական ակումբի անդամներ են, ունեն ակտիվ հայրեր, մայրեր և հարազատներ: Եթե «քաղաքականապես ակտիվ ընտանիք» ինդեքսը ստանում ենք՝ հաշվի առնելով, որ ընտանիքի ավելի քան մեկ անդամ է ակտիվ, ստացվում է, որ ակտիվ մասնակիցները սերում են ընտանիքներից, որտեղ մեկից ավելի անդամ է ակտիվ: Այնուհետև Ստարքը վերլուծել է այս գործընթացը արական և իգական սեռերի ազդեցությունների տարբերությունների տեսանկյունից: Արդյունքում ի հայտ են եկել հստակ պատկերացումներ՝ կապված սոցիալականացման ձևերի հետ: Այսպես, ակտիվությունն արական սեռի մասնակիցների մոտ մեծ հաշվով պայմանավորված է ծնողների գործոնով, իսկ իգական սեռի ներկայացուցիչների մոտ ընտանիքը, որպես ավելի մեծ ինստիտուտ, ավելի ազդեցիկ է և ոչ թե զուտ հայրը կամ մայրը: Ծնողների ազդեցությունը երեխաների քաղաքական հայացքների վրա շատ հաճախ չի ենթարկվում օրինաչափությունների և անբացատրելի է, ինչն էլ փաստում է, որ քաղաքական մասնակցության հետ կապված քաղաքական սոցիալականացումն ինքնին բարդ երևույթ է:

Եթե ծնողները, կամ ավելի լայն իմաստով, ընտանիքը չի հանդիսանում քաղաքական սոցիալականացման հիմնական գործակալ ինչ-ինչ պատճառներով, ապա այստեղ մեծանում է հատկապես սոցիալականացման մյուս գործակալների ազդեցությունը: Ընտանիքի ազդեցության չափը պայմանավորված է նաև տարիքով, քանի որ որքան մեծ է երեխան, այնքան ավելի մեծ շփում ունի արտաքին աշխարհի հետ: Կապված ընտանիքի ազդեցության հետ՝ փորձը ցույց է տալիս, որ այն երիտասարդները, ովքեր ավելի շատ են

ենթարկվում իրենց հասակակիցների ազդեցությանը, ավելի քիչ են հետաքրքրվում քաղաքականությամբ, քան նրանք, ում վրա ավելի մեծ չափով է ազդում ընտանիքը՝ որպես սոցիալականացման ինստիտուտ:

Խոսելով սոցիալականացման գործակալների մասին, և մասնավորապես ընտանիքի մասին, պետք է նշել, որ կան որոշակի գործոններ, որոնք սահմանափակում են կամ ընդհակառակը, ավելի են ընդլայնում ընտանիքի ազդեցությունը: Այս գործոններից են *սոցիալական մոբիլությունը, աշխարհագրական դիրքը* և *ծնողների կողմից երեխաներին վերահսկելու աստիճանն ու վերաբերմունքը դրա նկատմամբ:*

Ինչ վերաբերում է *սոցիալական մոբիլությանը*, ապա հետաքրքրքիր են Հեյվմանի և Ուեսթի հետազոտության արդյունքները: Նրանք իրենց անցկացրած հետազոտության արդյունքում եկել են այն եզրակացության, որ սոցիալական մոբիլությունը դեպի վեր տանում է ծնողների ազդեցության թուլացում, քանի որ վերելք ապրած խումբն արդեն ընկալում և յուրացնում է նոր՝ իր համար մոդել հանդիսացող խմբի արժեքները, նորմերը: Իսկ նրանք, ովքեր, ընդհակառակը, իրենց սոցիալական կարգավիճակով անկում են ապրել, ավելի հակված են վերադառնալ ծնողների հայացքներին:

Հաջորդ ազդող գործոնն *աշխարհաղաքական գործոնն* է, որն ավելի մեծ է հատկապես այնպիսի հասարակություններում, որտեղ քաղաքական կողմնորոշումը կապված է աշխարհագրական դիրքի հետ, այսինքն, երբ կան այսպես կոչված «կոնկրետ քաղաքական ուղղության հակված տարածաշրջաններ»:

Ինչ վերաբերում է ծնողների կողմից երեխաների *վերահսկողությանը*, ապա տարիքի աճին զուգահեռ քաղաքական հայացքների զարգացումը հանգեցնում է նրան, որ երեխաների մեծ մասն աստիճանաբար ընդգրկվում է այլ խմբերում՝ հասակակիցների, աշխատակիցների խմբեր, բակ և այլն: Նման նոր գործակալների միջամտությունը բնականոն երևույթ է Այս առումով բավականին հետաքրքիր է Մակկոբիի կատարած հետազոտությունը: Հետազոտության արդյունքում արձանագրվեցին հետևյալ փաստերը. ծնողների քաղաքական հայացքներին հարմարվելու ամենաբարձր ցուցանիշը նկատելի է այն դեպքում, երբ ծնողների կողմից վերահսկողությունը չափավոր է, իսկ նրանք, ովքեր խիստ ազատ են մեծացել, ավելի քիչ են հակված հետևել ծնողների հայացքներին, ամենաքիչը հետևում են

նրանք, ովքեր միշտ գտնվել են ծնողների խիստ վերահսկողության տակ:

Անհատի քաղաքական սոցիալականացման յուրահատկությունները, բնորոշ գծերը ճիշտ հասկանալու համար կարևոր է անդրադառնալ այս գործընթացի առավել սկզբնական փուլերին, այսինքն այն ժամանակահատվածին, երբ ապագա չափահաս քաղաքացիներն արդեն դառնում են որոշակի քաղաքական հայացքների, գաղափարախոսությունների կրողներ՝ անկախ իրենց կամքից, քանի որ գտնվում են իրենց շրջապատում առավել հեղինակավոր գործակալների ազդեցության գոտում: Հասուն անհատների քաղաքական վարքի կարգավորիչները, ինչպես նաև նրանց խմբերի միջև կայուն տարբերությունները սոցիալական հետազոտություններում ամենահաճախ ուսումնասիրվող հիմնահարցերից են: Նման վարքատիպերը կարող են լավ մեկնաբանվել առանձին անհատների կամ նրանց խմբերի վարքածևերի բնութագրիչների համաժամանակյա ուսումնասիրության շնորհիվ:

Չնայած, որ անհատները տարբերվում են իրենց քաղաքական մասնակցության հաճախակիությամբ և հավանաբար նաև որակով, այնուամենայնիվ, քաղաքական գործունեության նպատակները տարբերվում են՝ կախված կոնկրետ անձից, ժամանակից և վայրից: Անկասկած, քաղաքական վարքը բազմաչափ երևույթ է և կարևոր է շեշտել հատկապես 2 չափումներ: Առաջինն ընկալվում է որպես *քաղաքական-տնտեսական* գաղափարախոսություն, իսկ երկրորդը՝ *վարչահրամայական-ժողովրդավարական*: **Առաջինն** ավանդաբար ավելի շատ է ուշադրության արժանացել հետազոտողների կողմից, իսկ **երկրորդին** առաջնայնություն են տվել միայն վերջերս: Երկրորդ չափումը հատկապես կարևորվել է քաղաքական սոցիալականացման գործընթացների ուսումնասիրման տեսանկյունից, քանի որ վարչահրամայական-ժողովրդավարական միտումները խիստ տարբերվում են նրանցից, որոնք կիրառվում են հատկապես քաղաքական-տնտեսական պրակտիկայում: Շատ հաճախ այս երկու ոլորտների միջև սահմանագծերը վերանում են:

Երեխաների կամ դեռահասների քաղաքական սոցիալականացումն ուսումնասիրելու տեսանկյունից օգտակար է անդրադառնալ սեռատարիքային, դասակարգային տարբերություններին՝ կապված քաղաքական վարքի հետ:

Քաղաքական մասնակցության վերաբերյալ ուսումնասիրութ-

յունները ենթադրում են, որ մանկական տարիքում ունեցած փորձն ու կարգավիճակը իրենց դրոշմն են թողնում չափահաս տարիքում վարքատիպերի ձևավորման վրա: Հիմնականում, կախված քաղաքական մասնակցության ցուցանիշներից, ուսումնասիրությունները դասակարգվում են հետևյալ հիմնական տիպերի՝ *էգո-իդեալների ընտրություն, մեդիա-վարք, քաղաքական գիտակցության և քաղաքականությամբ հետաքրքրվածության մակարդակ:*

Չափահաս անձանց նկատմամբ երեխաների կողմնորոշման տարբերությունները կարող են օգտագործվել որպես քաղաքականության ոլորտի հանդեպ ուշադրության աստիճանի ցուցիչներ: Նմանատիպ ուսումնասիրություններում երեխայի *էգո-իդեալը* որոշվում է նրանով, թե ավելի շատ ում նա կցանկանար նմանվել: Դասակարգելով նման իդեալները և հիմք ընդունելով քաղաքականության մեջ նրա ունեցած դերն առհասարակ, կարելի է մոտավոր պատկերացում կազմել երեխայի, որպես ապագա չափահաս քաղաքացու, քաղաքական մասնակցության մոտավոր աստիճանի մասին:

«Երեխաների իդեալներ» գրքի հեղինակ Ե. Բարնեսը Լոնդոնի դպրոցներից մեկում 2100 երեխաների հետ կատարած ուսումնասիրության արդյունքում հանգեց այն հետևության, որ տղաներն ավելի մեծ չափով, քան աղջիկները, հակված են ընտրել պատմական և հանրային անձանց, որպես իրենց համար իդեալ: Այս ուսումնասիրությունն իրականացվել է Փենսիլվանիայի Նյու Քասլ քաղաքում, որտեղ տղաներն ավելի շատ, քան աղջիկները, հակված են իդեալականացնել ռազմական ոլորտի հանրային դեմքերին:

Կարելի է համարել, որ երեխայի կողմից ընտրված էգո-իդեալի տիպն է ուղղորդում նրա գործողությունները, և այն վարկածը, որ վաղ տարիքում տղաներն ավելի շատ, քան աղջիկները, ուղղորդված են դեպի քաղաքականություն, հետագայում թույլ է տալիս մեկնաբանել արդեն չափահաս քաղաքացու քաղաքական մասնակցության յուրահատկությունները:

Ինչ վերաբերում է քաղաքական մասնակցության հաջորդ ցուցիչին, ապա այն գործ ունի երեխաների *մեդիա-վարքի* հետ: Շատ վաղ տարիքում կատարված հետազոտությունները պարզորոշ կերպով ցույց են տալիս վարքաձևերի բազում տարբերություններ: 20-րդ դարի սկզբին և դրան նախորդած ժամանակաշրջանում անգլիացի և ամերիկացի հետազոտողների՝ Վոստրովսկու, Ջորդանի, Թերմանի և Լիմայի, ինչպես նաև այլոց կատարած հետազոտությունները դպրոցականների շրջանում ցույց են տալիս հետևյալ արդյունքները.

աղջիկներն ավելի շատ կարդում են գեղարվեստական գրականություն և ավելի քիչ պատմական և կենսագրական բնույթի գրականություն, քան տղաները:

Ուշագրավ է Մեյնի կատարած հետազոտությունը, որը ցույց է տալիս կախվածությունը քաղաքական մասնակցության և մեդիավարք փոփոխականների միջև: Նա ուշադրություն է դարձրել հատկապես դպրոցականների կողմից լրատվամիջոցների նկատմամբ նվազող հետաքրքրության վրա: Այսպես, 11-12-րդ դասարանցիների շրջանում նշվում են 286 լրատվական աղբյուրներ, իսկ 9-10-րդ դասարանցիների՝ 214 աղբյուր, 7-8-րդ դասարանցիների համար՝ միայն 168 լրատվական աղբյուր:

Այսպիսով, ընտանիքը՝ որպես քաղաքական սոցիալականացման առաջնային գործակալ, հսկայական ազդեցություն ունի անհատի քաղաքական կողմնորոշումների և հայացքների ձևավորման գործում, չնայած այն հանգամանքին, որ ժամանակակից հասարակությունում առավել աչքի են ընկնում ՁԼՄ-ը, տարբեր միավորումներն ու շարժումները որպես սոցիալականացման ակտիվ գործակալներ: Ընտանիքի, որպես քաղաքական սոցիալականացման առաջնակարգ գործակալի, ունեցած ազդեցության մասին են վկայում աշխարհի տարբեր երկրներում երեխաների և դեռահասների շրջանում կատարված ուսումնասիրությունները, որոնք մեկ անգամ ևս փաստում են, որ յուրաքանչյուր պետության ներսում ընտանիքը հանդես է գալիս որպես «փոքր պետություն»՝ սեփական ավանդույթներով և նորմերով:

Հանձնարարվող գրականություն

1. **Maslow A.,** Motivations and Personality, n. Y., Haroler and Row,1954.
2. **E. Maccoby**, R. Matthews and A. Morton, “Youth and Political Change”, Public Opinion Quarterly,1954, p. 98-102
3. **J. Gillepsi and G. Allport,** Youth’s Outlook on the Future, NY, 1957, p. 8-12
4. **A. Campbell, G. Gurin, W. Miller,** American National Election Studies 1952 Pre-Post Election Study
5. **F. Greenstein,** A Note on the Ambiguity of “Political Socialization”: Definitions, Criticisms, and Strategies of Inquiry, The Journals of Politics, Volume 32, Issue 4, 2009
6. **H. Hyman,** Political Socialization, CEU, Budapest ,1959, p. 64-69

Դասախոսություն 6

ԶԼՄ-ը իբրև անհատի քաղաքական սոցիալականացման հզոր գործակալ

Անշուշտ, ԶԼՄ-ը զգալի և անժխտելի ազդեցություն են ունենում հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտների, մասնավորապես քաղաքական կյանքի վրա: Նրանք ձևավորում են հասարակության մտածողությունը, ազդում հասարակական կարծիքի, հասարակության քաղաքական գիտակցության ձևավորման վրա, դրդում հասարակությանը՝ դրսևորել որոշակի վարք (ընտրություններում քվեարկել որևէ կոնկրետ թեկնածուի օգտին, ձեռք բերել որոշակի ապրանքներ և այլն):

Տեղեկատվությունը հասարակությանը մատուցելիս լրատվամիջոցները ձգտում են դիտողի, լսողի, ընթերցողի գիտակցության մեջ ձևավորել իրենց համար ցանկալի գաղափարներ, հասարակական երևույթների և գործընթացների վերաբերյալ գնահատականներ, դրդել նրանց որոշակի գործողությունների կամ հորդորել ձեռնպահ մնալ որոշակի գործելակերպից:

Ըստ էության, ԶԼՄ-ի քաղաքական ազդեցությունն իրականացվում է մարդու մտքի և զգացմունքների վրա արտացոլման միջոցով: ԶԼՄ-ի ազդեցության ձևերից կարևորվում է բանական և զգացմունքային ազդեցությունը: Ժողովրդավարական ռեժիմ ունեցող երկրներում տարածված է զանգվածային հաղորդակցման բանական մոդելը, որը համապատասխանում է այդ երկրներում ապրող մարդկանց մտածողությանը և քաղաքական մշակույթին: Այս մոդելը ենթադրում է լրտվամիջոցների միջև մրցակցություն՝ կապված լսրանի առավել մեծ ուշադրության և վստահության ձեռքբերման հետ, ինչն էլ հանդիսանում է ԶԼՄ-ի հաջողության գլխավոր չափանիշն ու նրանց մեծ մասի գոյատևման հիմնական պայմաններից մեկը: Այս պայմանն ապահովելու համար լրատվամիջոցներն իրենց թեմաներն ընտրելիս առաջնորդվում են հետևյալ մի շարք ընդհանուր սկզբունքներով.

Թեմաների առաջնայնությունը և գրավչությունը քաղաքացիների համար, համաձայն որի ԶԼՄ-ի հաղորդումներն առավել հաճախ վերաբերում են այնպիսի հիմնախնդիրների, ինչպիսիք են օրինակ, քաղաքացիների անվտանգության և խաղաղության սպառնա-

լիքը, ահաբեկչությունը, էկոլոգիական և այլն:

Փաստերի ոչ սովորական լինելը: Սա նշանակում է, որ ճգնաժամային և այլ ծայրահեղ իրադարձությունները (սով, պատերազմներ, ոչ սովորական, դաժան հանցագործություններ և այլն) իշխում են առօրյա կյանքի երևույթների վրա: Սրանով էլ բացատրվում է ՁԼՄ-ի հակվածությունը բացասական բնույթի տեղեկատվության և սենսացիոն փաստերի նկատմամբ:

Փաստերի բազմություն: Բնակչության ուշադրությունը գրավելու գործում առավել մեծ է այն տեղեկատվությունների դերը, որոնք, թերևս, լայն տարածում չեն ունեցել: Դրանք կարող են լինել տնտեսության զարգացման կամ անգործների թվաքանակի մասին նոր տվյալներ, նոր քաղաքական կուսակցությունների, նրանց լիդերների, նոր հասարակական կազմակերպությունների և ղեկավարների մասին տեղեկություններ և այլն:

Քաղաքական հաջողություն: Համաձայն քաղաքական հաջողության՝ ՁԼՄ-ի հաղորդումներում և հոդվածներում նախ և առաջ իրենց արտահայտությունն են գտնում քաղաքական լիդերների, կուսակցությունների կամ ամբողջ պետության հաջողությունների մասին տեղեկությունները:

Բարձր հասարակական կարգավիճակ: Որքան բարձր է տեղեկատվության աղբյուրի կարգավիճակը, այնքան նշանակալից են հարցազրույցները կամ հաղորդումները, քանի որ ենթադրվում է, որ նրանց հանրաճանաչությունը տարբեր պայմաններում ուղիղ համեմատական է մարդկանց հասարակական դրությանը: Այս սկզբունքի համաձայն՝ լրատվամիջոցներն ավելի հեշտ մուտք ունեն, քան անհատները, որոնք բարձր դիրք են զբաղեցնում քաղաքական, ռազմական, եկեղեցական և այլ ոլորտներում:

Ժողովրդավարական երկրներում, որպես կանոն, օրենքով արգելվում է լրատվամիջոցների օգտագործումը ռասայական, ազգային, դասային և կրոնական ատելության և թշնամության հրահրման համար: Սակայն այս երկրներում ևս տարբեր քաղաքական ուժեր իրենց գաղափարների և արժեքների քարոզչության համար լայնորեն օգտագործում են զգացմունքային ազդեցությունը, որն առավել վառ դրսևորվում է ընտրական կամպանիաների սկզբնական շրջանում:

Ավելացնենք նաև, որ դիմելով հասարակական գիտակցության այնպիսի զգացմունքային, իռացիոնալ, զգացմունքային-կամային բաղկացուցիչներին, ինչպիսին հայրենիքի նկատմամբ սիրո

զգացմունքն է, ազգային և հայրենասիրական տրամադրությունները, ԶԼՄ-ը ունակ են հավաքագրելու բնակչության զգալի մասին, ստանալու նրանց աջակցությունը՝ սատարելու ղեկավար շրջանների կամ առանձին շահագրգիռ խմբերի այս կամ այն գործողություններին: Ընդ որում՝ զանգվածային գիտակցության նման փոփոխությունները կարճաժամկետ բնույթ են կրում և տվյալ կոնկրետ նպատակով իրականացվող պրոպագանդիստական կամպանիայի ավարտից հետո ամեն ինչ վերադառնում է իր տեղը: ԶԼՄ-ի սոցիալականացնող գործառնության այս առանձնահատկությունը հատկապես դրսևորվում է ընտրական գործընթացների, ընտրական կամպանիաների ժամանակ:

Ինչպես ցույց են տալիս սոցիոլոգիական և սոցիալ-հոգեբանական շատ հետազոտությունների արդյունքները, լրատվամիջոցների մշտական հաղորդումները, որոնք առնչվում են հասարակության մեջ ընդունված համընդհանուր նորմերից շեղվող երևույթներին, դեպքերին, որպես կանոն, մեկնաբանվում են սենսացիոն ձևով, քաղաքացիների մոտ առաջացնում են անհանգստություն՝ կապված աշխարհակարգի, կյանքի բնականոն ընթացքի խախտման հետ, ծնում են վախ՝ հասարակության մեջ իրենց տեղի, ապագայի համար և այլն: Միևնույն ժամանակ փաստերը վկայում են այն մասին, որ ԶԼՄ-ի ծառայություններից առավել հաճախ օգտվող մարդիկ ավելի շուտ են հարմարվում շրջապատող աշխարհի ծայրահեղ իրավիճակների հետ: Օրինակ, երեխաները, որոնք հաճախ են դիտում բռնություններով հագեցած հաղորդումներ, համոզվում են այն բանում, որ աշխարհում, որտեղ ապրում են իրենք, առկա է բռնություն, անկարգություն, ուժեղների ճնշում և այլն: Հետևապես, նրանք մեծ պատրաստակամությամբ հակված են հարմարվելու այդ բացասական երևույթներին, ուստի դրանք դիտում են ոչ թե համընդհանուր նորմերից շեղումներ կամ քաղաքական համակարգի դիսֆունկցիայի արդյունք, այլև որպես նրա անբաժանելի մաս: Բայց պետք է հաշվի առնել նաև, որ բնակչության տարբեր խմբեր կարող են այդ երևույթներին արձագանքել տարբեր ձևերով: Հանցագործության, թմրամոլության, ահաբեկչության, անկարգության և նման այլ երևույթների մասին մշտական հաղորդումներն ընթերցողներին, ունկնդիրներին և հեռուստադիտողներին ներշնչում են այն միտքը, որ անհրաժեշտ է «ամուր ձեռք», ուժեղ անձնավորություն, որը կկարողանա վերջ դնել անարխիային, ապահովել կարգուկանոն և այլն:

Անկասկած, ՁԼՄ-ը նշանակալի ազդեցություն ունեն այն բանի վրա, թե ինչպես են մարդիկ ընկալում իրականությունը, ինչ են մտածում դրա մասին և վերջապես ինչ են անում իրենք այս աշխարհում: Ընդ որում՝ ՁԼՄ-ի գլխավոր ներգործությունը համարվում է իրենց միջոցով նոր տեղեկատվության յուրացումը, ինչը նշանակում է, որ ՁԼՄ-ը թելադրում են մարդուն ոչ թե այն, թե ինչ պետք է նա մտածի, այլ այն, թե ինչի շուրջ նա պետք է խորհի:

Թե ինչպիսի, ինչ ձևով և ինչ մեկնաբանությամբ տեղեկատվություն են ստանում քաղաքացիները և քաղաքական գործիչները, կախված է դրան հաջորդող նրանց գործողություններից: Այստեղ կարևորենք հետևյալ միտքը. «Ունենալ կարևոր տեղեկատվություն, նշանակում է ունենալ իշխանություն, կարողանալ տարբերել կարևորը ոչ կարևորից, ունենալ հնարավորություն՝ տարածելու կարևոր տեղեկատվությունը սեփական խմբագրությամբ կամ թաքցնել այն, իսկ սա նշանակում է ունենալ երկակի իշխանություն»:

Վերջին հաշվով, տեղեկատվության ոչ հստակ հաղորդումն ապակողմնորոշում է քաղաքացիներին. կամ մարում է նրանց հետաքրքրությունը քաղաքականության նկատմամբ՝ առաջացնելով քաղաքական ապատիա կամ էլ ստիպում է նրանց՝ հենվել մեկնաբանների գնահատականների վրա:

Ժամանակակից աշխարհում տեղեկատվության հեղեղն այնքան բազմաբնույթ և հակադիր է, որ այն ինքնուրույն հասկանալ և ըմբռնել ի վիճակի չէ ո՛չ առանձին անհատը, ո՛չ էլ մասնագետների խումբը: Այդ իսկ պատճառով առավել կարևոր տեղեկատվության ընտրությունը և զանգվածային լսարանին ընկալելի ձևով նրա ներկայացումը հանդիսանում է զանգվածային հաղորդակցության միջոցների համակարգի կարևորագույն խնդիրը: Ընդ որում՝ քաղաքացիների և քաղաքական գործիչների տեղեկատվությունն ուղղակիորեն կախված է նրանից, թե ինչպես, ինչ նպատակներով և չափանիշներով է ընտրվում տեղեկատվությունը, որքան խորն է այն արտացոլում իրական փաստերը:

Ինչպես գիտենք, մեր երկրում ամենալուրջ ազդեցությունը հասարակական գործընթացների վրա այս կամ այն չափով կարող է ունենալ ՁԼՄ-ից ամենաազդեցիկը՝ հեռուստատեսությունը: Տպագիր մամուլը շնորհիվ փոքր տպաքանակի, չի կարող ունենալ նշանակալի ազդեցություն, իսկ ռադիոն, շնորհիվ իր առավելապես զվարճային, ժամանցային յուրահատկության, առավել ևս: Փորձագետների

գնահատմամբ ռադիոն, չնայած իր մեծ լսարանին, հասարակական կարծիքի ձևավորման և սոցիալական գործընթացների վրա ներգործության առումով ունի ավելի քիչ հնարավորություն, քան մամուլը: Իսկ ինչ վերաբերում է հեռուստատեսությանը, նշենք, որ մեր հեռուստաալիքները ինչ-ինչ պատճառներով արտահայտում են ոչ թե հասարակության շահերը, այլ տարբեր իշխանական կառույցների, տնտեսական և քաղաքական էլիտաների շահերը:

Նման պայմաններում անհնար է խոսել հասարակական գործընթացների և հասարակական կարծիքի ձևավորման վրա ԶԼՄ-ի դրական ներգործության հնարավորության մասին: Առանց հասարակական աջակցության և վստահության լրատվամիջոցները կորցնում են զանգվածային գիտակցության վրա իրենց սոցիալական ազդեցության հնարավորությունը և իրենց առանձնացվածության և բևեռացվածության շնորհիվ դառնում են միայն գործիք կեղծ գաղափարական մարտերում իրենց «կամքն արտահայտողների» համար:

Այդուհանդերձ, հասարակության հիմնահարցերի վերհանման գործում ԶԼՄ-ը խաղում են որոշակի կառուցվածքային դեր, բայց միայն այն դեպքում, երբ լուծվում են ոչ այնքան էական խնդիրներ:

Արևմուտքի և Արևելքի միջև գրեթե հիսուն տարի տևած սառը պատերազմն ավարտվեց 20-րդ դարի 90-ական թթ.-ի սկզբներին: Այս հանգամանքն արմատապես փոխեց իրադրությունը հաղորդակցության ոլորտում: Մեղմացավ թշնամությունն ԱՄՆ-ի և նախկին Խորհրդային Միության միջև, կոմունիստական բլոկի նախկին երկրներն իրենց հայտարարեցին որպես ժողովրդավարական երկրներ: Միևնույն ժամանակ Կենտրոնական և Հյուսիսային Ամերիկայի ինքնակալական վարչակարգ ունեցող շատ երկրներում սկսվեց ժողովրդավարական բարեփոխումների իրականացման գործընթացը: Ըստ էության, աշխարհի շատ երկրներում արդեն նախընտրում էին կառավարման ժողովրդավարական ձևը՝ անցնելով տնտեսության մեջ շուկայական հարաբերությունների ձևավորմանը: Այս բոլոր փոփոխություններն ընթանում են ԶԼՄ-ի անմիջական մասնակցությամբ, որոնց արդյունքում մի շարք երկրներում առաջանում են անկախ, այսինքն իշխանության կողմից չվերահսկվող ԶԼՄ:

Զանգվածային լրատվության միջոցները հաստատություններ են, որոնք ստեղծված են ժողովրդի լայն խավերին հատուկ տեխնիկական սարքերի միջոցով բազմաբնույթ տեղեկատվությունն ազատ և

հրապարակայնորեն հաղորդելու համար: ԶԼՄ են համարվում մամուլը, ռադիոն, հեռուստատեսությունը, զանգվածային տեղեկագրերը, փաստավավերագրերը, կինովավերագրերը, այսօր նաև ինտերնետ կապը: Սրանց միջոցով հասարակությունը հնարավորություն է ստանում զգալի տեղեկատվություն ձեռք բերել աշխարհում տեղի ունեցող բազմաթիվ իրադարձությունների, դեպքերի, երևույթների վերաբերյալ, որոնք առնչվում են հասարակական կյանքի բոլոր ոլորտների (քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և այլն) հետ: Ըստ էության, սառը պատերազմի ավարտից հետո աշխարհի շատ երկրներում ընթացող սոցիալական, տնտեսական, քաղաքական բարեփոխումների հետ միաժամանակ ի հայտ է գալիս գլոբալացման միտումը, երբ մշակութային գործունեության արգասիքները (հատկապես ԶԼՄ-ի միջոցով տարածվող տարաբնույթ տեղեկատվությունը, նորությունները) արժանանում են մինչ այդ գոյություն չունեցող հրապարակայնության: Արդյունքում վերացան Արևմուտքի և Արևելքի միջև բազմաթիվ արգելապատնեշներ, նկատվեցին միջազգային և գլոբալ հաղորդակցական համակարգերի առաջացման միտումներ: Այս առումով նշենք, որ Անգլիայի հետազոտող Էնտոնի Սմիթը գտնում էր, որ տեղեկատվական դարաշրջանի սկսվելուն պես տեղի կունենա պետական սահմանների ոչնչացում, անհետացում:

Գլոբալացումն այսօր արդեն իրականություն է և, իհարկե, անտարբեր չէ ԶԼՄ-ի նկատմամբ: Պետական սահմաններում փակված երբեմնի ԶԼՄ-ը նույնպես ձեռք են բերում գլոբալիզմին բնորոշ գծեր. զարգանում են գլոբալ տեղեկատվական կոնցեռններ, որոնք գործում են աշխարհի բոլոր անկյուններում: Դրանցից են օրինակ ՍԻ-էն-էնը, Բի-բի-սին, էմ-թի-վին և այլն: Գլոբալ ԶԼՄ-ի գլխավոր առավելությունն այն է, որ պատմության մեջ առաջին անգամ ինտերակտիվ հաղորդակցության հնարավորություն է առաջանում, որը հասանելի է բոլորին՝ անկախ բնակության վայրից: Արդյունքում մարդիկ ավելի շատ տեղեկություններ են ստանում աշխարհում ընթացող իրադարձությունների մասին, նրանց հասանելի է դառնում առավել լայն տեղեկատվություն: Բացի դրանից, նպաստավոր պայմաններ են ստեղծվում տեղեկատվություն ուղարկողի և ստացողի միջև միագիծ կապը բազմաֆունկցիոնալ կապով փոխարինելու համար, որն էլ իր հերթին նոր հնարավորություններ է ստեղծում արդյունավետ սոցիալականացման համար: Տեղեկատվության ստացման նոր միջոցները՝ տեսաերիզները, ձայներիզները, բազմաֆունկցիոնալ համակարգիչ-

ները, էլեկտրոնային փոստը և բազմաթիվ նոր տեխնիկական միջոցներ ստանում են այնքան հանրաճանաչություն, որ արևմտյան քաղաքագիտության մեջ բնութագրվում են որպես «հասարակության համընդհանուր ժողովրդավարացման միջոց»:

Ինչպես հայտնի է, ԶԼՄ-ի ազատ գործունեությունը հանդիսանում է ժողովրդավարության կարևորագույն պայմաններից մեկը: Ըստ էության, տեղեկատվության ստացման բազմաթիվ նոր միջոցների ի հայտ գալը, անձնական համակարգիչների թվի աճը, բնակչության «համակարգչային զինվածությունը» գրեթե անվերահսկելի են դարձնում պետության կողմից ԶԼՄ-ի գործունեությունը կամ փոքրացնում վերահսկողության հնարավորությունները՝ դրանով իսկ նվազեցնելով անձնական ազատությունների նկատմամբ վտանգները: Այս ամենը ճանապարհ է բացում բազմակարծության, տեղական շահերի արտահայտման լայն հնարավորությունների, ներկայացուցչական ժողովրդավարությունը «մասնակցային ժողովրդավարությամբ» փոխարինելու համար: Իսկ «մասնակցային ժողովրդավարությունը» հասարակության քաղաքական կազմակերպման այնպիսի համակարգ է, որտեղ քաղաքացիներն ուղղակի, առանց ընտրվող ներկայացուցիչների միջնորդական օգնության որոշում են իրենց հետաքրքրող բոլոր սոցիալական և քաղաքական խնդիրները: Ընդ որում՝ «մասնակցային ժողովրդավարության» հայեցակետի կողմնակիցների կարծիքով, ժողովրդավարությունը, որն իրականացվում է ԶԼՄ-ի միջոցով, նախկինում տեխնիկապես անհնար էր, իսկ այսօր միանշանակ հնարավոր է. այստեղ խոսքն «էլեկտրոնային քվեարկության» մասին է, որն արդեն կիրառվում է զարգացած արդյունաբերական շատ երկրներում:

Անշուշտ, այս ամենը պարարտ հող է արդի հասարակություններում ԶԼՄ-ի ազատ և անկախ գործառնության համար:

Համարվելով սոցիալական կառավարման և քաղաքական մանիպուլյացիայի հզոր գործիք՝ ԶԼՄ-ը դառնում են հասարակական-քաղաքական հարաբերությունների կարևոր տարր: Հսկայական ազդեցություն ունենալով միլիոնավոր մարդկանց վարքագծի վրա՝ դրանով իսկ մասնակցում կամ տարբեր ձևերով առնչվում են պետական քաղաքականությանը:

ԶԼՄ-ի միջոցով անձի վերափոխումը գիտակցական և ակտիվ սուբյեկտի նպաստում է քաղաքական սոցիալականացման այնպիսի համակարգի ձևավորմանը, որը հնարավորություն է ընձեռում քաղա-

քական մասնակցության համար:

ԶԼՄ-ի դերն ընտրություններում

Ընտրությունները հանդիսանում են ժողովրդավարական հասարակարգի էական տարրերից մեկը: Ընտրությունների միջոցով կազմավորվում են խորհրդարանները, տեղական ինքնակառավարման մարմինները, պետության գլուխը, որոշ երկրներում՝ կառավարությունը, դատական մարմինները: Ազատ և արդար ընտրություններին որպես ընտրող կամ որպես թեկնածու մասնակցելու իրավունքն անձի կարևորագույն քաղաքական իրավունքներից է, որը թույլ է տալիս մարդկանց՝ որոշելու իրենց ներկայացուցիչներին և օժտել նրանց ժողովրդաիշխանության իրականացման մանդատներով, իհարկե, ըստ սահմանադրության:

Անշուշտ, ազատ և արդար ընտրություններ ապահովելու համար անհրաժեշտ է, որ ընտրազանգվածը հասու լինի՝ ազատ և գիտակցված ընտրություն կատարելու համար: Սա վկայում է այն մասին, որ ընտրողները տվյալ թեկնածուի մասին տեղեկատվության կարիք ունեն: Այս առումով, իհարկե, կազմակերպվում են թեկնածուների հետ նախընտրական հանդիպումներ, ժողովներ, տարածվում են թռուցիկներ, պլակատներ, որոնցից ընտրողները ստանում են որոշակի տեղեկատվություն թեկնածուների վերաբերյալ: Ավելին, ժամանակակից բազմամիլիոն հասարակության մեջ թեկնածուներն ի վիճակի չեն հանդիպել բոլորի հետ և խոսել նրանց հետ: Այդ պատճառով էլ թեկնածուներն իրենց ասելիքը հաղորդելու համար հիմնվում են հաղորդակցության այնպիսի ձևի վրա, որն ապահովում է կապը միլիոնավոր մարդկանց հետ միաժամանակ: Դրանք, իհարկե, ԶԼՄ-ն են՝ հեռուստատեսությունը, ռադիոն, թերթերը, այսօր նաև ինտերնետը:

Անժխտելի է, որ լրատվամիջոցներն ակտիվ մասնակցություն ունեն ներկայացուցչական և այլ ընտրովի մարմինների ձևավորման գործընթացում: Այն հանդիսանում է ԶԼՄ-ի գործունեության յուրահատուկ ոլորտ, որտեղ նրանք իրականացնում են միաժամանակ մի քանի գործառույթներ. ծառայում են որպես ընտրողների տեղեկացվածությունն ապահովող միջոց (օրինակ՝ ընտրությունների անցկացման օրվա մասին, տեղեկատվություն գրանցված թեկնածուների մասին և այլն), որպես նախընտրական ագիտացիայի միջոց և, վերջապես, որպես քաղաքական վերահսկողության գործիք: Այդ առումով հեռուստատեսությունը համարվում է ընտրողների վրա ազդեցության ամենահզոր միջոցը, և հաճախ նրա աշխատանքից

է կախված ընտրությունների արդյունքները: Հեռուստատեսության ամենակարողության մասին հավատն այնքան մեծ է, որ շատ քաղաքական գործիչներ գտնում են, որ ով վերահսկում է հեռուստատեսությունը, նա էլ վերահսկում է ամբողջ երկիրը: Հեռուստատեսությունից հետո ռադիոն և մամուլը նույնպես հանդիսանում են ընտրողների վրա տեղեկատվական ներգործության արդյունավետ միջոցներ:

Խոսելով ընտրություններում ԶԼՄ-ի մասին՝ նշենք, որ այստեղ կարևորվում են նաև նրանց կողմից անցկացվող հարցումները հասարակական կարծիքի պարզաբանման նպատակով: Հարցումները բացահայտում են ուժերի հարաբերակցությունը մրցակից թեկնածուների միջև, ընտրազանգվածի տարբեր խմբերի կարծիքն առավել կարևոր ազգային հիմնախնդիրների վերաբերյալ, ընտրական կամպանիաների զարգացման ընդհանուր միտումները, որը հնարավորություն է տալիս ճշտելու հակառակորդների ռազմավարությունը և մարտավարությունը: Ըստ էության, հարցումների արդյունքները, որոնք լայնորեն լուսաբանվում են ԶԼՄ-ի կողմից, ունենում են անմիջական ազդեցություն ընտրական կամպանիաների բնույթի և բովանդակության վրա՝ ստիպելով թեկնածուներին կատարել համապատասխան ուղղումներ իրենց մարտավարության մեջ: Այս համատեքստում մեծ նշանակություն ունի այսպես կոչված «նվագախմբով ձիաբեռնասայլի էֆեկտը» կամ «հաջողության էֆեկտը», որի էությունը նրանում է, որ մարդիկ հակված են միանալու այն կարծիքին, որը կիսում են մեծ թվով մարդիկ: Արդյունքում նկատելի է միտում՝ կապված ուժեղագույն. հետևաբար, առաջավոր թեկնածուի կողմն ընտրողների անցման հետ: Թեկնածուն, որը հայտնվում է իր հակառակորդների նկատմամբ առաջնային դիրքում, հանկարծ ձեռք է բերում աճող հանրաճանաչություն բնակչության շրջանում: Եվ ԶԼՄ-ը ավելի մեծ ուշադրություն են հատկացնում նրան, քան մյուս թեկնածուներին, ինչի արդյունքում տվյալ թեկնածուն հասնում է լայն ճանաչողության, որն էլ ապահովում է հաջողություն և հնարավոր հաղթանակ ընտրություններում:

Կարևորելով ընտրական գործընթացի վրա լրատվամիջոցների ազդեցության նշանակությունը՝ նշենք ազդեցության ևս երկու ձևեր, որոնք դրսևորվում են հեռուստատեսության ոլորտում «կապույտ առկայծման էֆեկտը», որն ունի դրական ազդեցություն և «բումերանգի էֆեկտը», որն ունի բացասական ազդեցություն:

«Կապույտ առկայծման էֆեկտի» էությունը այն է, որ մարդը, որը

ճանաչելի է արտաքնապես հեռուստաէկրանում հայտնվելու շնորհիվ, հասարակ մարդկանց կողմից անխուսափելիորեն դիտվում է որպես առաջնորդ, մարդ, որը զգալիորեն տարբերվում է իրենցից: Նման հաջողության, անշուշտ, անհնար է հասնել լսարանի հետ անմիջական շփման արդյունքում: Այս դեպքում ասում են, որ մարդիկ չեն ընտրում նախագահներին կամ պատգամավորներին. սկզբնապես նրանց ընտրում է հեռուստատեսությունը, որից հետո ընտրողների մոտ առաջանում է «կապույտ առկայծման էֆեկտը», այսինքն ընտրողներն իրականացնում են հեռուստատեսության կամքը, որը գալիս է ենթագիտակցությունից:

Իսկ «բումերանգի էֆեկտը» այն է, որ մարդկանց վրա հեռուստատեսության ազդեցության չարաշահումը հանգեցնում է բացասական արդյունքների, այսինքն հեռուստատեսությամբ անընդմեջ միևնույն թեկնածուին ցուցադրումը նախ՝ մարդկանց մոտ ծնում է զայրույթ դեպի տվյալ թեկնածուն, ապա՝ ատելություն, իսկ վերջում նրանք գաղտնի քվեարկում են ընդդեմ այդ թեկնածուի:

Վերադառնալով բուն ընտրական գործընթացին ԶԼՄ-ի մասնակցությանը՝ նշենք, որ առանձնացվում են ընտրական գործընթացի հետևյալ հիմնական փուլերը.

- նախընտրական փուլի սկիզբը,
- ընտրարշավը,
- խորհրդածության համար պարտադիր ժամանակը (որոշ երկրներում),
- քվեարկության օրը,
- արդյունքների հաշվարկն ու հրապարակումը,
- իշխանության փոխանցումը:

Նախընտրական փուլում լրատվամիջոցները սովորաբար լուսաբանում են կառավարության ու տարբեր կուսակցությունների գործունեությունը: Որոշ երկրներում ընտրարշավին նախորդող շրջանը համարվում է քվեարկողներին կրթելու ծրագրերի շրջան: Այդ ծրագրերն առանձնապես կարևոր են անցումային փուլում գտնվող ժողովրդավարական երկրների համար, որոնք երկար տարիներ բաց ընտրությունների ավանդույթներ չեն ունեցել: Այս փուլում ընտրողները տեղեկացվում են քվեարկության համար գրանցվելու կարգի մասին, քվեարկության ձևերի մասին, նաև այն մասին, թե ինչպես են գրանցվում կուսակցություններն ու թեկնածուները:

Ընտրարշավի փուլում ԶԼՄ-ին թույլատրվում կամ (նայած օրեն-

քի) նրանցից պահանջվում է հաղորդել կուսակցությունների և թեկնածուների ընտրական ծրագրերը: Այս փուլում ԶԼՄ-ն առավել ակտիվորեն են լուսաբանում քաղաքական իրադարձությունները: Տպագիր մամուլում տեղ են գտնում նորություններ, վերլուծություններ, խմբագրականներ, հասարակական կարծիքի սյունակներ: Հեռուստատեսությամբ և ռադիոյով հաղորդվում են լուրեր, վերլուծություններ, քաղաքական բանավեճեր, կուսակցական կամ թեկնածուների նախընտրական հաղորդումներ, քաղաքական գովազդներ և այլն: Ընդ որում՝ ավելացնենք, որ այս փուլում կուսակցություններին և թեկնածուներին հավասար պայմաններով անվճար և վճարովի եթերաժամեր են ընձեռվում հեռուստատեսությամբ և ռադիոյով:

Խորհրդածության փուլը հատուկ չէ բոլոր երկրներին: Սա սովորաբար ընտրական օրենքով վավերացված մի ժամանակահատված է, որը սկսվում է ընտրարշավի ավարտից և տևում է մինչև քվեարկության օրը: Ֆրանսիայում, օրինակ, այդ փուլը տևում է 7օր, Իտալիայում՝ 1օր, Շվեդիայում 1օր, իսկ Հայաստանում ևս 1օր՝ կապված այն բանի հետ, որ քվեարկության և դրան նախորդող օրը նախընտրական քարոզչությունն արգելվում է: Խորհրդածության ժամերը նպատակ ունեն ընտրողներին ժամանակ տալ մտորելու ընտրարշավի ընթացքում կուտակված տեղեկատվության շուրջ և որոշելու՝ ում ընտրել:

Քվեարկության օրը ԶԼՄ-ը լուսաբանում են այն, թե ինչպես է ընթանում ընտրությունը՝ սկսած եղանակից, որը շատ երկրներում ազդում է ընտրողների մասնակցության վրա, մինչև խախտումների մասին հայտարարությունները: Նրանք հանդես են գալիս նաև որպես անկախ դիտորդներ, որոնք հետևում են ընտրության ընթացքին, որպեսզի այն անցնի ազատ ու արդար՝ առանց քվեարկողների վրա ճնշում գործադրելու, առանց սպառնալիքի և առանց քվեարկության արդյունքների շահարկման փորձերի: Բացի դրանից, լրատվամիջոցները հարցազրույց են անցկացնում ընտրողների և դիտորդների հետ ու զեկուցում նկատված որևէ խախտման մասին:

Արդյունքների հաշվարկման ու հրապարակման փուլում ԶԼՄ-ն ուշադրությամբ հետևում են յուրաքանչյուր զարգացմանը, հնարավորին չափ վերահսկում են, որպեսզի ամեն ինչ ընթանա հարթ՝ առանց կեղծիքների և հնարավոր չարաշահումների: Ընդ որում՝ հատկապես հեռուստատեսությունը և ռադիոն նույն գիշերն անմիջապես կենտրոնից ընտրությունների արդյունքները հասցնում են ընտրողներին:

Բացի դրանից, ԶԼՄ-ը կարևոր դեր ունեն կեղծված արդյունքների դեմ մարդկանց ընդվզումը լուսաբանելու հարցում:

Իշխանության փոխանցման փուլում լրատվամիջոցներն արդեն վերադառնում են իրենց առօրյա միջընտրական աշխատանքին՝ քննելով և լուսաբանելով նորընտիր կառավարության գործունեությունը: Քաղաքական հարցեր լուսաբանող ԶԼՄ-ը կառավարությանը ստիպում են միշտ հաշվետու լինել իր գործողությունների համար՝ հատկապես կառավարության անդամներին հիշեցնելով իրենց նախընտրական խոստումները և ճնշում գործադրելով դրանց իրականացման նպատակով:

Փաստորեն, այս ամենը վկայում է այն մասին, որ լրատվամիջոցները հսկայական ներգործություն ունեն հասարակության քաղաքական կյանքի վրա. նրանք ակտիվ մասնակցություն են դրսևորում ընտրական գործընթացներում, և նրանց գործունեությունից որոշակիորեն կախված են ընտրությունների արդյունքները, այսինքն՝ այս կամ այն թեկնածուի կամ կուսակցության հաղթանակը կամ պարտությունը:

Այսպիսով, ժողովրդավարական երկրներում մարդիկ քաղաքականության մասին իրազեկվում են զանգվածային լրատվության միջոցներից: Շնորհիվ իրենց հնարավորությունների, ԶԼՄ-ը քաղաքական մասնակցության գործընթացում կարևոր և պոտենցիալ միջնորդի դեր են կատարում:

Հանձնարարվող գրականություն

1. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, Զանգվածային լրատվության միջոցները, Երևան, 2000

2. Մարդու իրավունքների համընդհանուր Հռչակագիր, հոդված 1, Նորմատիվ ակտերի ժողովածու, Ե., Արեգ,1997

3. **Diamond L.,** Political Culture and democracy in developing countries,USA,1993

4. **Пугачев В. П.,** Политология, Средства массовой информации, Москва 2000., с. 411-413

5. **Вятр Е.,** Социология политических отношений, М.,1979.

6. **Пшеворский** А. “Демократия и рынок” М., РООССПЭН, 2000

7. **Красин Ю. А.** “Демократия перед вызовами современности”. Обновление и стабилъностъ в современном обществе(Сравнителъный

анализ). Под. ред. А. А. Галкина. М., 2000

8. **Д. В. Ольшанский,** Политическая психология, Массовые коммуникации, Москва 2002, стр. 484-486

9. Անցումային շրջան: Քաղ. հաս-ը ժող. կառուցման հարցերը: Երևան, 2006, էջ156

10. PolitiK wissenschaftie. Grundlegung/ Hrsg. VonKlaus von Beume. Bd. 2, Stuttgart, Berlin, 1987, p. 60.

Դասախոսություն 7

Մասնակցային գործընթացները և անհատականացման հիմնախնդիրները

Քաղաքական սոցիալականացումը մի կողմից՝ տեղի է ունենում քաղաքական մասնակցության միջոցով, իսկ մյուս կողմից՝ քաղաքական մասնակցությունը, որպես անհատների, նրանց խմբերի գիտակցված ազդեցություն քաղաքականության վրա տարբեր մակարդակներում հնարավոր է միայն սոցիալականացման որոշակի մակարդակում: Ժողովրդավարությունը՝ որպես քաղաքական կազմակերպման և իրականացման իդեալ, ենթադրում է քաղաքացիների ակտիվ, կամավոր, գիտակցված մասնակցություն քաղաքական կյանքին: Քաղաքական մասնակցության տակ հասկանում ենք գործողություններ, որոնք ձեռնարկվում են առանձին քաղաքացիների կամ նրանց խմբերի կողմից՝ նպատակ ունենալով ազդել պետական կամ հասարակական քաղաքականության, պետական գործերի կառավարման կամ քաղաքական ղեկավարման, քաղաքական իշխանության ցանկացած մակարդակում լիդերների ընտրության վրա: Ըստ ամերիկացի քաղաքագետ Ջ. Նագելի՝ քաղաքական մասնակցությունը ներառում է գործողություններ, որոնց միջոցով քաղաքական համակարգի շարքային անդամներն ազդում կամ փորձում են ազդել քաղաքական համակարգի գործունեության արդյունքի վրա: Մենք հակված ենք պաշտպանել քաղաքագիտական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, ըստ որի մասնակցությունը վերագրվում է քաղաքացիների նպատակաուղղված և գիտակցված գործողություններին, այսինքն քաղաքական գործողություններին, ոչ թե արարքներին, որոնք կարող են հանգեցնել քաղաքական հետևանքների: Այստեղ ակնառու է քաղաքական գիտակցության աստիճանն ու դրսևորման ձևը: Քաղաքական մասնակցությունը դիտարկվում է որպես ժողովրդավարության հիմնական բնութագրիչներից մեկը՝ հանդիսանալով քաղաքական սոցիալականացման և քաղաքական դաստիարակման, կոնֆլիկտների հարթման, բյուրոկրատիայի և քաղաքական օտարման դեմ պայքարելու միջոց: Անհատի սոցիալականացումը ենթադրում է, որ մարդու միայն գիտելիքները բավարար չեն, անհրաժեշտ է, որ դրանք վերածվեն համոզմունքների և դառնան

նրա գործունեության ուղեկիցն ամբողջ կյանքի ընթացքում՝ իհարկե, ժամանակ առ ժամանակ ենթարկվելով որոշակի փոփոխություններ-ի: Այսինքն, ձեռք բերած գիտելիքները պետք է գործնականում կիրառվեն քաղաքական մասնակցության այս կամ այն ձևում:

Քաղաքականությունը շոշափում է հասարակության բոլոր անդամների շահերը և սկսվում է այնտեղ, որտեղ մարդիկ կան: Արիստոտելը քաղաքականությունը բնութագրում է որպես մարդկանց միջև շփման յուրահատուկ ձև և փաստում, որ քաղաքական շփումը ենթադրում է առանձին մարդկանց փոխհարաբերությունը պետության հետ, որպես առանձին մասնիկների փոխազդեցություն հասարակական ամբողջի հետ:

Բնականաբար, քաղաքականությունն իրական կյանքում արտահայտում է սուբյեկտների ակտիվությունը՝ ուղղված մարդկանց գործունեության որոշակի նպատակների իրականացմանը: Արիստոտելը հիշյալ աշխատության մեջ ցույց է տալիս, որ մարդը քաղաքականությամբ զբաղվում է՝ ելնելով իր սեփական բնությունից: «Մարդն իր բնությամբ քաղաքական էակ է»,-նշում է նա: Մեծ մտածողի կարծիքով, քաղաքականության պետական ձևը սկզբում առաջ է գալիս մարդկանց միություններից ընտանիքի տեսքով, ապա՝ քաղաքների: Այնուհետև, քաղաքատիպ բնակավայրերը փոխակերպվում են պոլիսի՝ քաղաք-պետության:

Քաղաքականությամբ զբաղվելն անմիջականորեն պայմանավորված է մարդու բնույթով, նրա սոցիալ-կենսաբանական էությամբ, շահերով, պահանջմունքներով և նպատակներով: Արիստոտելը մարդուն համարելով քաղաքական կենդանի՝ zoon politikon՝ մատնանշում է նրա մոտ առկա իշխելու և ենթարկվելու պահանջմունքները: Մարդը վերջին հաշվով ինքն է ստեղծում քաղաքական կեցությունն՝ սեփական քաղաքական գործունեության և հասարակության մեջ իր վարվելակերպի միջոցով:

Քաղաքական մտքի հետագա ընթացքը հարստացրեց քաղաքականության մասին նշանավոր մտածողների պատկերացումները:

Քաղաքականության կայացմանը և զարգացմանը զուգընթաց ձևավորվել և ընդլայնվել են մարդկանց քաղաքական գիտելիքները: Նրանք, ելնելով որոշակի սոցիալական շահերից, արտացոլում են քաղաքականության մշակման և իրականացման գործընթացները, քաղաքական իրադարձությունները և հարաբերությունները, ձգտում են իրենց շահերի շրջանակներում մոտենալ ճշմարտությանը, հաս-

կանալ ու մեկնաբանել քաղաքական իրադարձությունների պատճառները, իմաստն ու նպատակները: Քաղաքականության մեջ մարդը հանդես է գալիս և՛ որպես «քաղաքական մատերիա», և՛ որպես քաղաքականության սուբյեկտ: Այդ պատճառով մարդու զարգացման աստիճանը շատ հարցերում կանխորոշում է գոյություն ունեցող քաղաքականության որակը:

Քաղաքագիտական գրականության մեջ իշխում է այն տեսակետը, որ որքան բարձր է մարդու կրթվածության աստիճանը, այնքան հստակ է նրա քաղաքական կողմնորոշումը: Մարդը ոչ միայն կենսաբանական, սոցիալական, այլև հասարակական, քաղաքական էակ է: Նա կախված է հասարակությունից և ձևավորվում է որոշակի հասարակական միջավայրի կողմից, հանդես է գալիս որպես քաղաքականության մշակման և իրականացման գործոն: Քաղաքակրթված հասարակության մեջ մարդը բարձրագույն սոցիալական արժեք է:

Քաղաքական կենդանի լինելու մարդկանց հատկանիշը, նրանց քաղաքակրթվածությունը, քաղաքական հասունությունն իրենց անմիջական արտահայտությունն են գտնում քաղաքական կյանքին նրանց մասնակցության մեջ:

Քաղաքական գործընթացներում մարդկանց ներգրավվածության աստիճանը միանշանակ չէ: Հասարակության որոշ անդամներ ակտիվորեն մասնակցում են քաղաքական կյանքին, մյուսներն առանձնապես հետաքրքրություն չեն դրսևորում քաղաքական իրադարձությունների նկատմամբ, ոմանք էլ ունեն հստակ քաղաքական դիրքորոշում՝ ոչ ակտիվ, ոչ էլ պասիվ մասնակցություն են ունենում քաղաքական կյանքին: Այս գործընթացները պայմանավորված են անձի տարիքային և անհատական ընդունակություններով, սոցիալական դրությամբ, ընտանեկան ավանդույթներով, կրթությամբ, քաղաքական կուլտուրայով, քաղաքական գիտակցության առանձնահատկություններով և այլն:

Քաղաքագիտության մեջ գոյություն ունեն քաղաքական դերերի դասակարգման տարբեր մոտեցումներ: Այս առումով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում ռուս քաղաքագետ Վ. Ա. Մելնիկի դասակարգումը.

- Հասարակության շարքային անդամ և քաղաքացի, որը քաղաքականության վրա ոչ մի ազդեցություն չունի, ակտիվ չէ, բացառապես հանդիսանում է քաղաքականության ներգործության առարկա:

- Քաղաքացի, որը որևէ հասարակական կազմակերպության կամ շարժման անդամ է և անուղղակիորեն ներգրավված է քաղաքական պրակտիկայում:
- Քաղաքացի, որն ընտրական մարմնի կամ քաղաքական կազմակերպության անդամ է և նպատակամղված ու սեփական կամքով անմիջականորեն մասնակցում է քաղաքական կյանքին:
- Հասարակական գործիչ և մասնավորապես քաղաքական գործիչ:
- Արհեստավարժ քաղաքական գործիչ, ում համար քաղաքական գործունեությունը ոչ թե գոյության աղբյուր է, այլ կյանքի իմաստ:
- Քաղաքական լիդեր, որն անվիճելիորեն ընդունվում է որպես հեղինակություն:

Ինքնին հասկանալի է, որ անձի անհատական հատկանիշները կարևոր գործոն են քաղաքականության համար: Սրա հետ կապված հարց է ծագում. արդյո՞ք անձի որոշակի քաղաքական դերի կատարումը չի խոչընդոտում քաղաքական գործընթացի վրա ազդելու նրա հնարավորություններին: Իհարկե, պետք չէ անտեսել քաղաքականության վրա անձի ազդեցության հնարավոր մեխանիզմները: Դեռ ավելին, իրականում հաճախ քաղաքական երևույթները պայմանավորված են լինում մասնակիցների անհատական հատկանիշներով, և տպավորություն է ստեղծվում, թե այդ գործողությունները չի կարելի վերագրել նրանց քաղաքական դերերին: Սա միանգամայն օրինաչափ է, քանի որ նույն քաղաքական դերերը տարբեր կերպ են իրականացվում տարբեր մարդկանց կողմից:

Քաղաքականության մեջ անհատականության դրսևորման ոչ պակաս կարևոր հանգամանք է անձի և նրա շրջապատի միջև սոցիալ-հոգեբանական կապերի դիալեկտիկան: Մի կողմից, անձի գործողությունները թելադրվում են ոչ միայն իր դերի նորմատիվ պահանջներով, այլև սեփական ինքնագիտակցությամբ: Մյուս կողմից, անձին շրջապատող միջավայրը գոյություն չունի որպես վերացական և անփոփոխ իրավիճակ: Այն նույնպես կրում է սոցիալ-հոգեբանական ազդեցության կնիքը: Ամեն մի առանձին անհատի և բոլորի կենսագործունեությունը նշանակալի չափով ազդում է երկրի զարգացման ուղղության և ռիթմի, պետության վիճակի և բնույթի վրա:

Սուբյեկտի (անհատ, խումբ, հասարակություն) քաղաքական

վարքը կախված է շատ գործոններից: Այստեղ առաջին հերթին պետք է առանձնացնել պետական կարգը, տնտեսության իրական վիճակը, պատմական զարգացման մակարդակը, հասարակության մեջ իշխող ավանդույթները: Բայց դա ամենևին էլ չի բացառում քաղաքականության սուբյեկտների հարաբերական ինքնուրույնությունը, քանի որ նրանց քաղաքական վարքը կարգավորվում է նաև ուրիշ, մասնավորապես հոգեբանական գործոններով:

Մեր օրերում քաղաքական վարքի ուսումնասիրությունն ունի կոնկրետ տեսական և գործնական նշանակություն: Արդեն 20-րդ դարի երկրորդ կեսին քաղաքական հոգեբանությունը հետամուտ եղավ այնպիսի գործոնների հետազոտմանը, որոնք պայմանավորում են մարդու մուտքը քաղաքականություն և մասնակցությունը նրա տարբեր ձևերում: Ամենից առաջ, քաղաքական հոգեբաններն իրենց ուշադրությունը բևեռում են քաղաքական վարքի այնպիսի զանգվածային, տարերային ձևերի վրա, ինչպիսիք են՝ ցույցերը, ամբոխի վարքը, բողոքները, ընդվզումները և այլն: Ինչպես նշում է ֆրանսիացի մտածող Գուստավ Լեբոնը՝ քաղաքական հոգեբանությունը զբաղվում է քաղաքական գործողությունների զանազան ձևերի փնտրտուքով և դրանք գտնում է մարդու ոչ բանական, այսինքն հոգեկանի անգիտակցական ձևերում:

Ժամանակակից քաղաքական կյանքը տալիս է բազմաթիվ օրինակներ, երբ ոչ բանական հոգեբանական մեխանիզմներն ազդում են քաղաքական գործընթացների վրա: Փայլուն օրինակ է առաջին հայացքից տարօրինակ թվացող պատգամավորների վարքը պետության օրենսդիր մարմիններում: Երբեմն որոշումներն ընդունվում են ոչ միայն բանական հաշվարկներով, անձնային կամ խմբային շահերից ելնելով, այլ բանավեճի ընթացքում փոխադարձ զգացմունքային վարակման արդյունքում: Պատահական չէ, որ Լեբոնն առանձնացնում է խորհրդարանական նիստերի ժամանակ պատգամավորներին, որպես առանձին տիպ, որը ենթարկվում է այն օրենքներին, որոնք բնորոշ են հիվանդ սոցիալական խմբերին:

Քաղաքագիտության մեջ «քաղաքական վարք» տերմինի օգտագործումը պայմանավորված է քաղաքականության սուբյեկտների գործողությունների բնույթով: Քաղաքականության ոլորտում քաղաքական վարքն ընդգրկում է անձի ակտիվության բոլոր դրսևորումները: Ըստ որում, եթե անհատի կամ սոցիալական հանրույթի քաղաքական վարքն ունի գիտակցված և նպատակամղված բնույթ, ապա

մենք գործ ունենք քաղաքական գործողության հետ:

Գրականության մեջ «քաղաքական վարք» և «քաղաքական գործողություն» կատեգորիաների հարաբերակցությունը մեկնաբանվում է տարբեր կերպ: Ոմանք գտնում են, որ քաղաքական վարքը և քաղաքական գործողությունը նույնական հասկացություններ են, ոմանք քաղաքական վարքը դիտարկում են որպես քաղաքական գործողության արտաքին դրսևորում, ոմանք էլ քաղաքական գործողությունը համարում են քաղաքական վարքի մասնակի ձև:

Հետազոտելով քաղաքական վարքը, լինի լիդեր կամ սովորական քաղաքացի, անհատական մասնակից կամ զանգվածային սուբյեկտ՝ քաղաքական հոգեբանները ելնում են այն բանից, որ քաղաքական վարքի էության ճիշտ ըմբռնման համար անհրաժեշտ է այն դիտարկել որպես պատճառականորեն պայմանավորված և ուղղորդված նպատակների իրագործման գործընթաց:

Մարդկանց քաղաքական կամքի ձևավորումը և վարքը պայմանավորված են մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով, տարբեր մակարդակի սոցիալ-քաղաքական համակարգերի բնույթով, հոգևոր-մշակութային ազդակներով, մարդկանց անհատական հատկանիշներով և այլն:

Անկախ այն բանից, թե մարդկանց քաղաքական վարքի դիտարկումներն ինչ տեսանկյուններից և ինչ նպատակներով են կատարվում, ինչպես են որակվում քաղաքական վարքը, քաղաքական գործողությունը և նրանց առնչությունները միմյանց հետ, ակնհայտ է վարքաբանական տեսությունների շրջանակներում մտածողների ձգտումը՝ ստեղծել վարքի և գործողության վերաբերյալ ամբողջական ու ճշմարիտ պատկեր:

Համամիտ լինելով այն դատողությանը, որ քաղաքական վարքն ունի ավելի լուրջ բովանդակություն, քան քաղաքական գործողությունը, որը քաղաքական վարքի առարկայացման, նրա որոշակի տեսանկյունը մատնանշելու արժեք է բովանդակում, կարող ենք նշել, որ երկու դեպքում էլ խոսքը վերաբերում է քաղաքական կյանքին մարդկանց մասնակցության, դրա արժեքավորման ու գնահատման, հասարակական-քաղաքական կյանքում ունեցած դերի վերաբերյալ հարցերին:

Անկախ այն բանից, թե տեսական առումով ով ինչ դեր է վերագրում դրանց, հիշյալ հիմնահարցով զբաղվող բոլոր հեղինակներն էլ (Ռ. Ինգլհարտ, Ս. Հանտինգտոն, Ա. Մասլոու և այլք) նշում են վար-

քում առկա հետևյալ տարրերը. արտաքին միջավայրը, որը սուբյեկտին խթաններ է ուղարկում, անհատի կամ խմբի պահանջմունքները, այն դրդապատճառները, որոնցով ղեկավարվում է սուբյեկտը, սուբյեկտի կողմնորոշումները, արժեքները, համոզմունքները և նպատակները, որոշումների ընդունման ոճը, անձերի բնույթը և միջանձնային հարաբերությունների անձնային առանձնահատկությունները, զուտ գործողությունը և արարքները, հետադարձ կապ վարքի և այն ձևավորող պայմանների միջև:

Վերոնշյալ գործոններին բնորոշ է սուբյեկտիվությունը, սակայն գործառութային համատեքստում կարող են նմանվել միմյանց՝ ելնելով քաղաքական շահերից: Քաղաքական շահի իրագործումն անհնար է առանց այն կրողի քաղաքական ակտիվության դրսևորման:

Առանձին անձանց կամ սոցիալական խմբերի քաղաքական ակտիվության շրջանակներում կարելի է կառուցել քաղաքական գործողությունների արդյունավետության հետևյալ սանդղակը.

- Քաղաքական համակարգից, նրա ինստիտուտներից բխող ազդակների հանդեպ ռեակցիա:
- Պարբերաբար մասնակցություն գործողություններին՝ կապված ընտրական վարքի հետ:
- Գործունեություն քաղաքական կազմակերպություններում:
- Քաղաքական գործառույթների կատարում քաղաքական ինստիտուտների շրջանակներում, որոնք մտնում են քաղաքական համակարգի մեջ կամ գործում են նրան հակառակ, ակտիվ գործունեություն ոչ ինստիտուցիոնալ քաղաքական շարժումներում՝ ուղղված գոյություն ունեցող քաղաքական համակարգի դեմ:
- Ուղիղ գործողություն:

Քաղաքականության մեջ «մարդկային չափումների» հիմնահարցերը դիտարկվում են ինստիտուցիոնալ վերլուծության և վարքաբանական տեսությունների շրջանակներում: Ուստի քաղաքական վարքի հետազոտման ժամանակ, որպես կանոն, դրսևորվում են տարբեր մոտեցումներ, որոնցից են՝

- *Բանական ընտրության տեսություն*, ըստ որի՝ քաղաքական ոլորտում բոլորը գիտակցաբար ձգտում են իրենց շահերի իրականացման առավելագույն աստիճանի: Դրա հետ մեկտեղ ուշադրություն են դարձնում այլընտրանքային նպա-

տակների վրա:

- *Դասական ամերիկյան մոդել,* ըստ որի՝ մարդկանց վարքի հիմքում ընկած են հոգեբանական բնութագրերը և անձնային կողմնորոշումները, որոնք դրդում են ընտրողին գնալ ընտրությունների:
- *Ընտրական վարքի միչիգանյան մոդել,* որտեղ կարևորվում են քաղաքականության սուբյեկտների վարքի կողմնորոշիչ դրդապատճառները: Մարդիկ ընտրում են երեք կողմնորոշումներով, ըստ կուսակցական պատկանելության, ըստ օրվա իրադարձությունների նկատմամբ ունեցած վերաբերմունքի և թեկնածուի նկատմամբ ունեցած զգացմունքների:
- *Դասակարգող տեսություններ.* այստեղ հետազոտվող հիմնախնդրի շրջանակներում համակարգային մոտեցումներից մեկը Գ.Ալմոնդի «քաղաքական անհատների» դասակարգումն է, որի հիմքում ընկած են մարդկանց քաղաքական մասնակցության տարբեր աստիճաններ:
- *Կողմնորոշումների տեսություն,* ըստ որի՝ ավելի շատ կարևորվում են ընտրական քաղաքական վարքի ծագման, զարգացման և կայունացման կարծրատիպերի պատճառների համգամանորեն հետազոտությունները:
- *Ինստիտուցիոնալ մոտեցում*, ըստ որի՝ առաջին պլանի վրա է մղվում կուսակցական, քաղաքական, ընտրական կարգի, սոցիալական դասերի միջև հարաբերությունները՝ քաղաքական ինստիտուտների գործառնության տեսանկյունից, մարդկանց քաղաքական վարքի դիտարկումը:
- *Մարդաբանական տեսություն.* այստեղ քաղաքական վարքը, արժեքները բացատրվում են այն կուլտուրայի հատկություններով, որում իրենք գոյություն ունեն:
- *Կրոն-մշակութային վերլուծություն.* այստեղ քաղաքական մասնակցությունը դիտարկվում է որպես հասարակության մեջ հոգևոր մշակութային ուժերի գործունեության արդյունք:
- *Քաղաքական կուլտուրայի էթնո-ազգային ձևերի տեսություն,* որտեղ քաղաքական կուլտուրան դիտարկվում է որպես ազգային հոգեբանական գործոնների ամբողջություն (կարծիք, ավանդույթ, սովորույթ, տրամադրություն, արժեք), որի շրջանակներում գործում է ազգային քաղաքական համակարգը:

Մասնակցության միջոցով պայմաններ են ստեղծվում մարդու հնարավորությունների բացահայտման, ստեղծագործական ինքնահաստատման համար: Այնուհետև, մարդու՝ որպես քաղաքական սուբյեկտի ընդհանուր զարգացումը նպաստում է քաղաքական ինստիտուտների և հասարակության միջև կապերի ձևավորմանն ու ակտիվացմանը: Եվ, ի վերջո, ժողովրդավարության զարգացման միջոցով հասարակությունը բավարարում է իր անդամների պահանջմունքները՝ մասնակցելու երկրի գործերի կառավարմանը:

Արդիականացման ներկայիս գործընթացներում գոյություն ունեն քաղաքական մասնակցության երկու հիմնական մոտեցումներ. **ազատական**, այս ուղղվածության կողմնակիցները գտնում են, որ ժողովրդավարական քաղաքական մասնակցության ընդլայնումը քաղաքական իշխանության լեգիտիմության հուսալի միջոց է, մրցակից քաղաքական կուսակցությունների փոխադարձ անվտանգության պահպանման լավագույն ձև, **պահպանողական**, այս ուղղվածության կողմնակիցները քաղաքական մասնակցության մասշտաբների ընդլայնման մեջ տեսնում են ազգային միասնության և համակարգի կայուն հիմքերի խաթարման վտանգ: Նրանք գտնում են, որ քաղաքական մասնակցության մասշտաբները պետք է հասցնել նվազագույնի և թույլ տալ, որ քաղաքական որոշումները կայացնեն այն մարդիկ, ովքեր առավել տեղեկացված են և ընդունակ՝ հետևելու քաղաքական զարգացման գծին:

Քաղաքական մասնակցության վերլուծության ընթացքում կարևոր նշանակություն են ձեռք բերում այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ովքե՞ր են քաղաքականապես ակտիվ, որո՞նք են քաղաքականության հանդեպ հետաքրքրության անկման պատճառները, ի՞նչ է իրենից ներկայացնում քաղաքական արդյունավետության գիտակցումը, ինչու՞ են մարդիկ մասնակցում քաղաքական կյանքին և այլն:

Քաղաքական կյանքին մարդկանց մասնակցության ուղիների և ձևերի բազմազանությունը, որպես նրանց քաղաքական սոցիալականացման և քաղաքական ակտիվ վարքի արտահայտություն, չի սպառում քաղաքական վարքի բովանդակությունը: Քաղաքական վարքը բովանդակում է ոչ միայն մարդկանց ակտիվ գործունեությունը քաղաքական գործընթացներին անմիջական կամ ներկայացուցչական հիմունքներով, այլև այն վարքը, որն իր արտահայտությունն է գտնում գիտակցված կամ չգիտակցված ձևերով քաղաքական անգործության, անտարբերության, քաղաքական կյանքից օտարվե-

լու, հեռանալու երևույթներում:

Քաղաքական կյանքին մարդկանց չմասնակցելն ընդհանուր առմամբ չի դիտվում որպես դրական երևույթ և չի արդարացվում: Բայց դա ամենևին հիմք չի տալիս քաղաքական կյանքին չմասնակցելը բոլոր դեպքերում համարել անընդունելի և քաղաքակիրթ կյանքին անհարիր երևույթ:

Քաղաքական կյանքին չմասնակցելը թեև ոչ միշտ, բայց տարբեր կոնկրետ պայմաններում հանդես է գալիս որպես ակտիվ քաղաքական վարքի արժեք ունեցող քաղաքական մասնակցության ակտ: Դա լինում է այն բոլոր դեպքերում, երբ մարդիկ գիտակցված ձևով քաղաքական կյանքի զանազան երևույթների նկատմամբ իրենց վերաբերմունքն արտահայտելու կամ այլ նպատակներ իրականացնելու համար ընտրում են քաղաքական գործընթացներին ու ձեռնարկումներին արտաքուստ չմասնակցելու ձևով դրսևորվող վարք: Դա է պատճառը, որ քաղաքական մասնակցության և քաղաքական չմասնակցության դրսևորումներն անվերապահորեն չենք կարող հակադրել միմյանց: Այս առումով լիովին տրամաբանական և արդարացի է քաղաքական կյանքին մարդկանց չմասնակցելու փաստը դիտարկել որպես քաղաքական մասնակցության ոչ շարժունակ ձև:

Քաղաքական կյանքին չմասնակցելու փաստը բացատրող ժամանակակից գործոնների էությունը այն է, որ հասարակության մեջ չկան բավարար ակտիվ ուժեր, որոնք ընդունակ լինեն խթանելու բոլորի ակտիվությունը: Չմասնակցելու երևույթի պատճառները մասնավորապես բացատրվում են քաղաքական և սոցիալական համակարգի ոչ բավարար գործունեությամբ, որը և նպաստում է մարդկանց որոշ մասի օտարմանը քաղաքականությունից:

Քանի որ քաղաքական մասնակցության մակարդակներն ու ձևերը բազմազան են, մասնակիցների թիվը՝ տարբեր, ուստի այն հարցը, թե ինչ գործոններ են ազդում մասնակցության վրա, միանշանակ պատասխան չունի: Մասնակցության մեջ առկա են և՛ բանական դրդապատճառներ, և՛ ենթագիտակցական գործոններ:

Ամերիկյան քաղաքագիտական դպրոցը մշակել է մասնակցության գործոնների ամբողջական համակարգ: Մասնակցության վերլուծության ժամանակ նշվում է տարիքը, սեռը, հավատքը, ռասան, անդամակցությունն այս կամ այն կուսակցությանը, արհմիությանը, ընտրությունների ենթադրվող կարևորությունը, տեղեկատվության ստացումը, որը համընկնում է նախապատվությունների հետ, հասա-

ռակության տնտեսական զարգացման աստիճանը, քաղաքացիական պարտքի զգացումը, քաղաքական այլընտրանքների ընդունումը և այլն: Այս գործոնները կարելի է բաժանել երեք խմբի. *սոցիալ-տնտեսական, տարիքային և հոգեբանական:* Այսպես օրինակ, ունևոր դասը հակված է կայունության պահպանմանը ի տարբերություն աղքատ խավի, որը ձգտում է վերափոխումներ անել:

Սոցիալ-տնտեսական զարգացման և մասնակցության մակարդակի միջև գոյությունն ունեցող կապն արտահայտում է «ստանդարտ սոցիալ-տնտեսական հավաքագրման» մոդելը: Այս մոդելի համաձայն՝ սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը հանգեցնում է անհատների քաղաքացիական կողմնորոշումների բարդացմանը: Այս պայմաններում քաղաքացիները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում հասարակական գործերի նկատմամբ, որոնք որոշում են քաղաքական մասնակցությունը: Փաստորեն, քաղաքացիական կողմնորոշումների աճը որոշում է մասնակցության մասշտաբների ընդլայնումը:

Քաղաքական կյանքին չմասնակցելը որոշ առումներով առնչվում է աբսենտիզմի[2] հետ: Ակնհայտ է, որ քաղաքացիների նշանակալից մասը պարբերաբար կամ ընդհանրապես չի մասնակցում քաղաքականությանը, քաղաքական գործընթացներին:

Չմասնակցող քաղաքացիներին կարելի է դիտարկել երկու տեսանկյունից՝ *կայուն չմասնակցողներ* և *խաղաթական կյանքից ժամանակավոր օտարվածներ:*

Կայուն չմասնակցող զանգվածների շարքը համալրում են չքաղաքականացված մարդիկ: Նրանց բնորոշ է լիովին անտարբերությունը քաղաքականության նկատմամբ, ցանկության բացակայությունը՝ մասնակցելու քաղաքական գործընթացներին: Ցանկացած ժողովրդավարական երկրի համար սովորական երևույթ է աբսենտիզմը, որը բացատրվում է սոցիալական և հոգեբանական գործոններով: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ ոչ բոլոր չմասնակցողներն են ոչ քաղաքականացված: Վերջիններիս աբսենտիզմի մեջ արտահայտվում է և՛ բողոք, և՛ անտարբերություն, և՛ հավատքի կորուստ: Մարդիկ հիասթափվում են, քանի որ էական տարբերություններ չեն տես-

[2] **Աբսենտիզմ** - անգլ. բացակա, տվյալ երկրում անցկացվող ընտրություններին չմասնակցելը: Հաճախ նման դիրքորոշում ունեն իշխանությունների քաղաքական կուրսից դժգոհ կամ որևէ քաղաքական իրադարձության նկատմամբ խիստ անտարբեր մարդիկ:

նում տարբեր քաղաքական կուսակցությունների և նրանց ծրագրերի միջև: Նրանք գտնում են, որ, անկախ իրենց մասնակցությունից, քաղաքական որոշումները կայացնում է ընտրյալ փոքրամասնությունը:

Ի տարբերություն կայուն չմասնակցողների, ժամանակավորապես օտարված մարդիկ բացասաբար են տրամադրված տվյալ քաղաքական համակարգի և նրա ինստիտուտների հանդեպ: Նրանք քաղաքական բոյկոտի դիրք են բռնում:

Քաղաքագիտության մեջ ուշադրություն է դարձվում ինչպես ընտրություններին մարդկանց մասնակցությանը, այնպես էլ մարդկանց չմասնակցությանը, մասնավորապես այնպիսի երևույթի վրա, ինչպիսին աբսենտիզմն է: Այս երևույթն առաջանում է այն ժամանակ, երբ նախագահական, խորհրդարանական, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ ընտրություններում քաղաքացիները հրաժարվում են մասնակցել քվեարկությանը, ինչպես նաև ներառում է օտարումը քաղաքական կազմակերպությունների գործունեությունից, եթե նրանք հանդիսանում են այդ կազմակերպությունների անդամներ:

Աբսենտիզմը վկայում է այն մասին, որ քաղաքացիների նշանակալից մասն անտարբեր է ընտրությունների կոնկրետ արդյունքների նկատմամբ, քանի որ էական կապ չի տեսնում իր հեռանկարների և թեկնածուների ծրագրերի միջև: Ավելին, ընտրություններն ընկալում է որպես պարբերաբար կրկնվող մեծ խաղեր, որոնք չեն հետաքրքրում իրեն: Որքան զարգացած են քաղաքացիական հասարակության ինստիտուտները, այնքան մեծ են ինքնորոշման հնարավորությունները, ուստի մեծ է նաև աբսենտիզմի գոյության հավանականությունը:

Դառնալով զանգվածային երևույթ՝ աբսենտիզմը կարող է կասկածի տակ դնել ներկայացուցչական մարմինների լեգիտիմությունը և ընտրյալների հեղինակությունը: Այդ պատճառով աբսենտիզմի երևույթը հող է նախապատրաստում քաղաքական պրակտիկան քննադատաբար գնահատելու համար:

Ինչպես արդեն նշեցինք, աբսենտիզմը կարող է պայմանավորված լինել տարբեր պատճառներով՝ քաղաքացիների ապաքաղաքականացմամբ, քաղաքականության նկատմամբ անտարբերությամբ, քաղաքականությունից հիասթափությամբ, նրա նկատմամբ անվստահությամբ, քաղաքական ինստիտուտների կամ իշխանության նկատմամբ հավատի կորստով, ընտրողների քաղաքական ձեռնահասության ցածր մակարդակով, ընտրության մեջ

սխալվելու մտավախությամբ, իշխանության քաղաքականության վրա էապես ազդելու հնարավորությունների կասկածամտությամբ, քաղաքացիների համար ընտրությունների արդյունքների ցածր նշանակությամբ և այլն:

Աբսենտիզմը կամ չմասնակցությունը հանդես է գալիս իշխանության նկատմամբ բացասական կամ անտարբեր վերաբերմունքի հիմքով: Հաճախ քաղաքացիների չմասնակցությունը հենց իրենք՝ չմասնակցողները, բացատրում են իշխանության մարմինների, կառավարության, լիդերի նկատմամբ վստահությամբ, պնդում են, որ առանց իրենց մասնակցության էլ կառավարությունը կարող է նորմալ գործել: Նման մարդիկ քաղաքականության մեջ ներգրավվում կամ մասնակցում են ընտրություններին միայն իշխանության ճգնաժամի, քաղաքական կոնֆլիկտների կամ էլ անձնական լուրջ պատճառների դեպքում:

Չմասնակցության երևույթը բավականին տարածված է մեր օրերում, հատկապես ժողովրդավարական պետություններում:

Պետք է նշել, որ չմասնակցությունը գնահատվում է ոչ միանշանակ: Ոմանք դա դիտում են որպես հասարակության կայունությունը խարխլող վտանգ, պետության հիմքերին սպառնացող բացասական երևույթ, իշխանության լեգիտիմության նվազման միտում, քաղաքացիների և իշխանության բևեռացում, իսկ ոմանք էլ, հակառակը, այն դիտում են իբրև պետությունից անկախ քաղաքացիական հասարակության զարգացման արտահայտություն, ինչպես նաև դա վկայում է բնակչության ժողովրդավարական ազատության, քաղաքականության նկատմամբ սեփական վարքի որոշման հնարավորության առկայություն:

Չմասնակցությունը հաճախ դիտվում է նորմալ երևույթ ժամանակակից արևմտյան ժողովրդավարական պետությունների համար, որը մեծացնում է քաղաքական ընտրության ձեռնահասությունը ի հաշիվ նրա, որ քվեարկությանը մասնակցում են քաղաքականությունից հասկացող, այն վերլուծող մարդիկ, և, հետևաբար, քվեարկությանը չեն մասնակցում նրանք, ովքեր հեռու են քաղաքականությունից:

Նշենք, որ աբսենտիզմն ընդգրկում է ինչպես հայտնի, այնպես էլ անհայտ տարրեր: Այսպես, չմասնակցողների մեջ քիչ չեն նրանք, ովքեր այսօր ինչ-ինչ պատճառներով անտարբեր են, արտաքուստ հովանավորում են իշխանություններին, սակայն ներքուստ ունեն հակաիշխանական տրամադրություններ: Այստեղ կարևորվում է

անձի բավարարվածության հիմնախնդիրը, որն անմիջականորեն առնչվում է մասնակցության արդյունավետության հետ:

Մասնակցության արդյունավետությամբ գնահատվում է ոչ միայն կառավարման բանական բովանդակությունը, այլ նաև իշխանական համակարգի գործառնության անհատական, խմբային, զանգվածային բավարարվածության չափը, մասնակիցների սեփական եսի կայուն զգացողությունը: Պետք է նկատի ունենալ, որ հասարակության մեջ գոյություն չունի ինչ-որ եզակի, համընդհանուր բավարարվածություն: Դա միանգամայն հարաբերական է և կախված է տվյալ հասարակության սոցիալ-տնտեսական, քաղաքական, գաղափարական, իրավական, արժեքային համակարգերից:

Բավարարվածության հետ կապված՝ քաղաքական մասնակցության կառուցվածքային-գործառութային համատեքստում հարկ է հիշատակել դեպրիվացիայի երևույթի մասին:

Դեպրիվացիա[3] հասկացությունը մշակվել է Ս. Ստաուֆերի, Ռ. Մերտոնի և Վ. Ռունսիմանի կողմից: Այս հայեցակետի հեղինակներն այն բացատրում են որպես «անբավարարվածության սուբյեկտիվ զգացում իր ներկայի նկատմամբ»: Անհատը գտնվում է հարաբերական դեպրիվացիայի վիճակում այն դեպքում, երբ նա չի տիրապետում տվյալ օբյեկտին կամ ձգտում է ձեռք բերել տվյալ օբյեկտը, կամ էլ համեմատում է իր դիրքն ուրիշների դիրքի հետ, որոնք տիրապետում են տվյալ օբյեկտին: Դեպրիվացիայի համակարգում կարևոր բաղկացուցիչ է համոզվածությունն այն բանի, որ անբավարարվածության վիճակը կարող է հարթվել առկա սոցիալական և քաղաքական կարգի փոփոխությունների միջոցով: Համոզվածության աստիճանը դեպրիվացիայի հաղթահարման նախնական փուլն է :

Այնտեղ, որտեղ չմասնակցող զանգվածը բավարարված է իր կյանքից, մասնակի գործառնում է քաղաքական ապատիան: Սակայն ապատիան կարող է նշանակել նաև հակակրանք համակարգի նկատմամբ, անբավարար գիտելիքների արդյունք, նիհիլիստների համար անհրաժեշտ ներուժ: Այս պարագայում աբսենտիզմը պոտենցիալ վտանգ է ժողովրդավարության զարգացման համար: Որքան փոքր են մասնակցության հնարավորությունները կառավարման

[3] **Դեպրիվացիա** - անգլ. Deprivation հեռանալ որևէ բանից կամ մնալ ինչ-որ բանից զրկված: Այս տերմինն արտահայտում է այնպիսի վիճակ, երբ մարդն ինչ-որ բան չունի կամ ինչ-որ բան ձեռք չի բերել, սակայն ձգտել է դրան: Ըստ Oxford concise dictionary of Sociology, Ed. by Gordon Marshall, Oxford New york, Oxford University Press,1996, p.117.

գործերին, այնքան մեծ է իշխանության կենտրոնացման հավանականությունը փոքրաթիվ մարդկանց ձեռքում:

Քաղաքականությունը բարդ և բազմաբնույթ հարաբերությունների ամբողջություն է, որտեղ միայն գիտական արհեստավարժության փաստը անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է քաղաքական արհեստավարժի կերպարի ձևավորման համար:

Քաղաքական իրականության մեջ աբսենտիզմի աճն արդյունք է քաղաքական ճգնաժամերի, քաղաքական գործիչների անընդունակության՝ առաջ քաշելու այլընտրանքային տարբերակներ, ինչպես նաև հոգեբանական շատ այլ երևույթների:

Ինչպես ցույց են տալիս վերջին ժամանակների իրադարձությունները, մասնակցության ճգնաժամը կազմում է ավելի լայն ճգնաժամի՝ քաղաքացիական անհատականության ճգնաժամի բաղկացուցիչ մասը: Պետականության մասամբ քայքայումը, սոցիալական կապերի և հարաբերությունների անկումը, սոցիալական կառուցվածքի կտրուկ փոփոխություններն անխուսափելիորեն ծնում են իրար բացառող արժեքային կողմնորոշումներ: Դրանք ցայտուն արտահայտվում են գաղափարական-քաղաքական դաշտում, քանի որ հենց այստեղ են ձևավորվում անհատի և առանձին խմբերի ամենաընդհանուր պատկերացումները շրջապատող իրականության մասին:

Այնուամենայնիվ, այսօր փաստացիորեն մենք ականատես ենք ժողովրդական լայն զանգվածների քաղաքական մասնակցության ակտիվացմանը, որը բնական է և անխուսափելի զարգացող հասարակության համար: Այդ մասնակցությունը հաճախ ընդունում է բյուրոկրատիայի հետ պայքարի ձև ընդդեմ չբարելավող իրավիճակի:

Այսպիսով, *քաղաքական մասնակցությունը* դիտարկվում է որպես հասարակության անդամների ներգրավվածություն քաղաքական հարաբերություններում՝ անհատական, դասային, ազգային-էթնիկական, կրոնական կամ այլ հիմքերով, մարդկանց ներգրավվածությունը քաղաքական կյանքին, անմիջական մասնակցությունը քաղաքական որոշումների ընդունման և դրանց իրականացման գործընթացներին՝ ելնելով շահերից, հոգևոր պահանջմունքներից ու նպատակներից կամ մեր դիտարկմամբ՝ **քաղաքական մասնակցությունը քաղաքական սոցիալականացման ընթացքում յուրացված արժեքների դրսևորումն է քաղաքական վարքի մեջ:**

Հանձնարարվող գրականություն

1. **Аристотелъ,** Сочинения, М.,1983, т. 4,.

2. **Алъмонд Г., Верба С.,** Гражданская културa и стабилъностъ демократии, Политические исследования, 1992, N.4.

3. **Будон Р.,** Место беспорядка, Критика теорий социалъного изменения, М.,1998,перевод с французского, с. 66-70

4. **Ю. В. Ирхин, В. Д. Зотов, Л. В. Зотова**, Политология, М., 1999, с. 373-375

5. **Инглхарт Р.,** Културный цдвиг в зрелом постиндустриалалъном обществе. Новая постиндустриалъная волна на Западе.под. ред.В.Л.Иноземцова,М.,1999, с. 249-260.

6. **Лебон Г.,** Психология народов и масс, СП6,1995., с.156-166

7. **В. А. Мельник**, Политология, Мн., 1996, с.330

8. Oxford concise dictionary of Sociology,Ed. by Gordon Marshall, Oxford New york,Oxford University Press,1996,p.117.

Դասախոսություն 8

Քաղաքական մասնակցության չափումները

Քաղաքացիների մասնակցության հարցերն առաջին անգամ ամրագրվել են Ֆրանսիայի և Իտալիայի սահմանադրություններում 1946-1947 թթ.-ին: Այնուհետև 60-70-ական թթ.-ին այն շրջանառության մեջ է մտել և դարձել զանգվածային ժողովրդավարական շարժումների հիմնական պահանջներից մեկը:

Քաղաքական կյանքին մասնակցության անհրաժեշտությունը մտածողները տարբեր կերպ են մեկնաբանում: Այսպես, Ռուսոյի, Մարքսի հետևորդները գտնում են, որ մասնակցությունը քաղաքական կյանքին պետք է կրի համընդհանուր բնույթ:

Որոշ տեսաբաններ (Լ.Գուդմեն, Տ.Հեյդեն, Ֆ. Ֆունոն) համոզված են, որ քաղաքացիների մասնակցությունը «սիմվոլիկ» քաղաքականությանը, այսինքն քվեարկություններին, անբավարար է, և պահանջում են մարդկանց պարտադիր ներգրավում քաղաքական որոշումների ընդունման գործընթացներին: Միևնույն ժամանակ այս տեսակետի տեսական և գաղափարական ընդդիմախոսները գտնում են, որ մասնակցության միակ միջոցը, որը հասանելի է քաղաքացիներին, քվեարկությունն է և բանավեճերը:

Պետք է նշել, որ քաղաքացիների ներգրավվածությունը քաղաքական կյանքին կախված է կոնկրետ իրավիճակից, քաղաքական համակարգի բնույթից, ինչպես նաև մարդուց: Հասկանալի է, որ ընդհանուր առմամբ իրականում քաղաքացիների մեծ մասը միջոցներ և հնարավորություն չունի անընդմեջ մասնակցության համար: Մարդկանց այն խմբի համար, որը չի ցանկանում քաղաքականության մեջ կարիերա ստեղծել, քաղաքական կյանքին մասնակցությունը պահանջում է լրացուցիչ աշխատանք, գիտելիքներ, նյութական միջոցներ, մրցակցության համար անհրաժեշտ հոգեբանական պատրաստվածություն և այլն:

Անձի՝ որպես քաղաքականության սուբյեկտի գործունեությունն իրականացվում է անմիջական և միջնորդավորված ձևերով: Անմիջական մասնակցության ձևեր են ընտրությունները, հանրաքվեները: Անմիջական մասնակցությունն առկա է փոքր քաղաքական հանրույթի շրջանակներում, որտեղ որոշումները կայացվում են մեծ թվով ձայների արդյունքում: Այն բնորոշ է տեղական կառավարմանն ու ինքնա-

կառավարմանը և իրականացվում է տեղական պատգամավորական միությունների, տարածքային կառավարման մարմինների և ուղղակի մասնակցության մյուս ձևերի միջոցով: Տարբեր տեսություններում քաղաքականության մեջ անձի ներգրավման տարբեր պատճառներ են նշվում: Այսպես, Լասսուելը նշում է մարդու գիտակցության այս կամ այն վիճակը (իր հասարակական դիրքի համար վախը), Լեյնը կարևորում է մարդու՝ իր շահերի բանական և հաշվարկային գիտակցումը նոր կարգավիճակ ձեռք բերելու համար, Դոունսը գտնում է, որ մասնակցության պատճառը հասարակական պարտքի և սեփական իրավունքների կարգավորումն է, հասարակական համակարգի ինքնապահպանման վտանգը և այլն:

Խոսելով ակտիվության դրսևորման տարբեր ձևերի մասին՝ պետք է նշել, որ քաղաքական մասնակցության ձևերի ու տեսակների բազմազանությունը կախված է գործող սուբյեկտի որոշակի հատկանիշներից (սեռ, տարիք, զբաղմունքի տեսակ, կրոնական պատկանելություն, կրթություն և այլն), կառավարման ռեժիմից և հետևաբար այն միջոցներից, որոնք պետությունը տրամադրում է քաղաքացիներին իրենց շահերը և իրավունքները պաշտպանելու համար:

Քաղաքական մասնակցության ձևերն իրենց էությամբ վարքի կայուն մոդելներ են, որոնք ամբողջության մեջ կազմում են քաղաքական կուլտուրան: Որոշ աղբյուրներում այդ ձևերը բաժանվում են երկու խմբի՝ ակտիվ և պասիվ: Այդպիսի բաժանման հիմք է հանդիսանում անհատների կամ սոցիալական խմբերի մասնակցության աստիճանը քաղաքական կյանքի երևույթներին:

Մելնիկը նշում է քաղաքական մասնակցության ակտիվ ձևերի հետևյալ դասակարգումը.

- քաղաքական համակարգի, ինստիտուտների կամ նրանց ներկայացուցիչների գործողությունների նկատմամբ ձևավորված ռեակցիա,
- մասնակցություն այնպիսի գործողությունների, որոնք կապված են ներկայացուցչական իրավասությունների հետ,
- մասնակցություն քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների գործունեությանը,
- քաղաքական գործառույթների կատարում այն ինստիտուտների շրջանակներում, որոնք մտնում են քաղաքական համակարգի մեջ կամ ուղղված են նրա դեմ,
- ուղղակի մասնակցություն քաղաքական գործողություններին

(հավաքներ, քվեարկություն, ստորագրահավաք և այլն),

- ակտիվ, նաև ղեկավարող գործունեություն քաղաքական շարժումներում:

Պետք է նշել, որ անհատների քաղաքական անգործությունը նույնպես կարող է լինել գիտակցված և նպատակամղված: Դրա համար այն անվանում են քաղաքական մասնակցության իմմոբիլ (անշարժ) ձև:

Ամերիկյան քաղաքագետներ Ս.Վերբան և Լ.Պայը նշում են քաղաքական մասնակցության հետևյալ տարատեսակները. *քաղաքական վարքի միանգամայն պասիվ ձևեր, մարդկանց մասնակցությունը միայն ներկայացուցչական մարմինների ընտրություններին, ակտիվ մասնակիցների քաղաքական վարքը նախընտրական պայքարում, ակտիվ մասնակիցների քաղաքական վարքը քաղաքական ոլորտում ընդհանրապես, մասնակցությունը՝ որպես քաղաքական գործչի արհեստավարժ գործունեություն:*

Միլբերտը տարբերակում է քաղաքական մասնակցության հետևյալ ձևերը.

- *ակտիվ* (պետական և կուսակցական կազմակերպությունների ղեկավարում, թեկնածուների գործունեությունը նախընտրական պայքարում),
- *միջանկյալ* (մասնակցությունը քաղաքական հավաքներին, քաղաքական կուսակցություններին ֆինանսական հովանավորություններ, պաշտոնական դեմքերի հետ շփումը և այլն),
- *դիտողական* (քաղաքացիներին քվեարկություններին ներգրավելու փորձերը, քաղաքական հոռետես վերաբերմունք քաղաքականությանը):

Այս ձևերի բազմազանության մեջ ակնհայտ է, որ նրանք իրարից տարբերվում են մասշտաբայնությամբ: Այլ կերպ, անհատն իր շահերի պաշտպանության համար դիմում է քաղաքական միջոցների: Այս դեպքում մասնակցությունը տարածվում է կա՛մ համազգային խնդիրների, տեղական հիմնախնդիրների լուծման, կա՛մ որևէ արտադրական կոլեկտիվի խնդիրների լուծման շրջանակներում:

Բավական հետաքրքրական է անգլիացի գիտնական Ա. Մարշի դասակարգումը, ըստ որի, քաղաքական մասնակցության ձևերն են՝

- օրթոդոքսալ,
- ոչ օրթոդոքսալ,
- քաղաքական հանցագործություններ,

Օրթոդոքսալ քաղաքական մասնակցությունն ապահովում է քաղաքական համակարգի կայունությունը և գործառնությունը, ինչպես նաև նրան ներկայացվող պահանջները օրենքների տեսքով:

Ոչ օրթոդոքսալ քաղաքական մասնակցությանը վերագրվում են ոչ սանկցիավորված գործողությունները՝ կապված քաղաքական համակարգի պահանջների արտահայտման հետ: Այս ձևի մեջ մտնում են բողոքական վարքը, բոյկոտները, ոչ պաշտոնական գործադուլները և այլն:

Առանձին ձև են կազմում *քաղաքական հանցագործությունները,* որոնց մեջ մտնում են անօրինական ցույցերը, բռնությունները, սաբոտաժները, քաղաքական սպանությունները, պատերազմները և այլն:

Քաղաքական մասնակցության մեկ այլ դասակարգում է տալիս Ու. Միլբրայթը, որն առանձնացնում է *կոնվենցիոնալ* (լեգալ և օրենքով կարգավորվող), *ոչ կոնվենցիոնալ* (անօրինական և հասարակության մեծ մասի կողմից մերժված):

Կոնվենցիոնալ ձևին Միլբրայթը վերագրում է քվեարկությունը, մասնակցությունը կուսակցությունների գործունեությանը և ընտրական գործընթացներին, շփումները պաշտոնական դեմքերի հետ և այլն:

Ոչ կոնվենցիոնալ ձևերի մեջ մտնում են մասնակցությունը ցույցերին, խռովություններին, իշխանության անօրինական գործողությունների դեմ վճռական բողոքները և այլն: Մասնակցության այս ձևի մեջ մտնում են առանց բռնության ակտիվ ձևերը (ցույցեր, պիկետներ և այլն), ինչպես նաև բռնությամբ ձևերը (ահաբեկչություն, խռովություն և այլն):

Ընդհանուր առմամբ, քաղաքական մասնակցությունն արտահայտվում է երկու հիմնական ձևերով. *անմիջական* և *միջնորդավորված* կամ *ներկայացուցչական:*

Անմիջական մասնակցությունն առկա է փոքր քաղաքական հանրույթի շրջանակներում, որտեղ որոշումները կայացվում են մեծ թվով ձայների արդյունքում: Այն բնորոշ է տեղական կառավարմանն ու ինքնակառավարմանը և իրականացվում է տեղական պատգամավորական միությունների, տարածքային ինքնակառավարման մարմինների և ուղղակի մասնակցության մյուս ձևերի միջոցով:

Ներկայացուցչական մասնակցության ժամանակ զանգվածներն ընտրում են իրենց ներկայացուցիչներին քաղաքական իշխանության իրականացման համար: Այդպիսիք են՝ պատգամավորները, պատվի-

ռակությունները, հանձնաժողովները, պաշտոնատար և լիազորված անձինք և այլն: Դրանց գործունեությունը կարգավորվում է համապատասխան իրավական ակտերով, պայմանագրերով և համաձայնագրերով:

Ներկայացուցչական հիմունքներով մասնակցելու իրավասությունների և լիազորությունների շրջանակները որոշվում են տարվող քաղաքականության համապատասխան, սուբյեկտների կարգավիճակը սահմանող օրենքների և այլ իրավական ակտերի համաձայն: Սակայն ներկայացուցչական մասնակցության բացասական կողմն այն է, որ այս ձևի մասնակցությունը մեծ հնարավորություններ է ընձեռում զանգվածների կամքի խեղաթյուրման համար, քանի որ ընտրված ներկայացուցիչները կարող են հետապնդել սեփական շահեր, որոնք չեն համընկնում քաղաքացիների շահերի հետ: Այս դեպքում քաղաքացիները կարող են կորցնել հսկողությունն իրենց ներկայացուցիչների վրա, որը կնպաստի նրանց քաղաքական մասնակցության ակտիվության նվազմանը:

Միևնույն քաղաքական գործունեությունը դիտարկելով տարբեր տեսանկյուններից՝ կարող ենք նկատել, որ այն մի կապակցության մեջ հանդես է գալիս որպես ներկայացուցչական, մյուս դեպքում՝ որպես անմիջական հիմունքներով գործունեություն: Հասարակությունը, ժողովուրդները, ազգերը, սոցիալական այլ խմբեր սուբյեկտների իրենց դերն իրականացնում են թե՛ անմիջականորեն, երբ հանրաքվեների ու հարցումների միջոցով արտահայտում են իրենց քաղաքական դիրքորոշումները, թե՛ ներկայացուցչական հաստատություններ ստեղծելու միջոցով, որոնք արտահայտում ու պաշտպանում են նրանց կամքը:

Տարբեր հիմունքներով ձևավորված (ընտրված կամ նշանակված) ներկայացուցչական մարմինները կոնկրետ հանգամանքներում հաճախ գործում են թե՛ անմիջական, և թե՛ ներկայացուցչական հիմունքներով: Ունենալով որոշակի կարգավիճակ՝ նրանք իրենց իրավասությունների շրջանակներում երբեմն ձեռք են բերում հարաբերականորեն ինքնուրույն քաղաքական միավորի կարգավիճակ, որը հնարավորություն է տալիս նրանց՝ սահմանափակ շրջանակներում հանդես գալ որպես քաղաքականության անմիջական սուբյեկտ:

Քաղաքական մասնակցությունը կարելի է դասակարգել *կազմակերպված* և *տարերային* ձևերի:

Ինստիտուցիոնալացված կուսակցությունները և շարժումները

տարբերվում են նրանով, որ մասնակիցների վարքը ենթարկվում է որոշակի կանոնների, որոնք ամրագրված են ծրագրերում և կանոնադրություններում: Կազմակերպված քաղաքական խմբերի վարքն էականորեն տարբերվում է տարերային վարքից: Քաղաքական կազմակերպության գործունեության արդյունավետությունը հիմնվում է մի շարք գործոնների վրա, որոնցից կարևորագույնն անհատի նույնացումն է իր խմբի հետ: Անհատի պատկանելությունը կազմակերպված խմբին օգնում է իրեն կայուն զգալ, համամասնակից զգալ սոցիալապես նշանակալից նպատակների իրագործման գործընթացներին: Ասվածը վերաբերում է ոչ միայն ներկուսակցական հարաբերություններին, այլ նաև մի կողմից՝ կուսակցությունների, կուսակցությունների բլոկների միջև, մյուս կողմից՝ իրենց ընտրազանգվածի հետ հարաբերություններին:

Կազմակերպված քաղաքական վարքի վերլուծությունն ամբողջանում է, երբ հաշվի են առնվում միջանձնային հարաբերությունները, որոնք հիմնականում որոշվում են հարիզմատիկ լիդերով:

Ի տարբերություն կազմակերպված քաղաքական խմբերի, տարերային խմբավորումներն իրենց մասնակիցներին ներկայացնում են այլ հոգեբանական պահանջներ: Տարերային ձևերի մեջ մտնում են ինչպես անհատների չպլանավորված ելույթները, այնպես էլ անկազմակերպ զանգվածային ելույթները, բողոքի ցույցերը և այլն:

Մինչև վերջին ժամանակներս մեզ քիչ էր հետաքրքրում այնպիսի հիմնահարց, ինչպիսին ամբոխի վարքն է: Սակայն վերջին ժամանակների իրադարձությունները ստեղծեցին դրա հետազոտման անհրաժեշտությունը: Տարերային վարքի աշխուժացումը ցույց տվեց իշխանությունների անպատրաստակամությունը՝ ապահովելու քաղաքացիների անվտանգությունը: Տարերային վարքը մարդկանց զանգվածային վարքն է քաղաքական ճգնաժամի և անկայուն իրավիճակներում: Այդ ռեակցիային բնորոշ է ոչ միշտ բանական, երբեմն էլ բնազդային ուղղվածությունն ի հակակշիռ գիտակից և ծրագրավորված վարքի: Դժգոհության կամ նման խանդավառության բորբոքման պատճառները կարող են լինել շատ տարբեր, այդ թվում և ոչ քաղաքական:

Ամբոխի վարքը լուրջ ուսումնասիրված է հոգեբանության մեջ: Սկսած Լեբոնից, Ֆրեյդից, Բեխստերևից՝ հետազոտողներն ընդգծում են, որ ամբոխի մեջ մարդն իրեն անանուն է զգում, ինչը դրդում է առավել համարձակ և անպատասխանատու քայլերի: Արարքների ոչ

բանականությունը բացատրվում է փուլային զգացմունքայնությամբ, որը թույլ է տալիս յուրաքանչյուր մասնակցի՝ անտեսել իր կամքն ու բանականությունը և գործել ամբոխի օրենքներով: Սակայն պետք է հաշվի առնել, որ չնայած այդ գործողություններն ունեն տարերային բնույթ, միշտ կգտնվեն քաղաքական ուժեր, որոնք կօգտագործեն տարերայնության հանգամանքը և կստանան որոշակի քաղաքական կապիտալ: Այս իմաստով բնորոշ են տարբեր տիպի ծայրահեղական, աջ ազգայնական շարժումները, որոնց նպատակն է ազդել մասնակիցների անգիտակից և ոչ բանական վարքի դրդապատճառների վրա:

Խոսելով քաղաքական մասնակցության տարբեր ձևերի մասին՝ նշենք, որ ժամանակակից քաղաքական մասնակցության մեջ տարբերակում են երկու մոդել՝ *հավաքագրման և ինքնավար:*

Հավաքագրման մոդելի դեպքում մարդու մասնակցային վարքը որոշվում է վերնախավի դիրքորոշումներով: Այսպես, խորհրդային ժամանակներում քաղաքացու մասնակցությունը վերահսկվում էր թե՛ ուղղվածության, թե՛ ձևի, և թե՛ չափերի առումով, այսինքն իշխանություններն էին որոշում, թե ում պետք է ձայն տալ (հաշվի առնելով այն հանգամանքը, որ խորհրդային ժամանակներում միակուսակցական համակարգ էր, սա բնական է): Այլ կերպ, մասնակցության արդյունքները նախորոշված էին, և զանգվածները ոչ մի ազդեցություն չէին կարող ունենալ, նրանք պարզապես քաղաքական մանիպուլյացիաների օբյեկտ էին դառնում:

Որպես կանոն, հավաքագրման քաղաքական մասնակցությունն ուղղված է բացառապես քաղաքական համակարգի պահպանմանը: Նրա գերխնդիրն է՝ դրսևորել նվիրվածություն իշխող ընտրանուն, համերաշխ լինել համաժողովրդական միասնությանը, լուսաբանել վարվող քաղաքականությունը հովանավորող երևույթները: Հավաքագրման մասնակցությունն արտաքուստ կարող է իդեալական թվալ, քանի որ քվեարկություններին բոլորի մասնակցությունը հենց «կվազի» (կեղծ, սուտ) մասնակցություն է: Սակայն, ինչպես արդեն նշեցինք, այս պարագայում նրանք ընդամենը քաղաքականության օբյեկտ են:

Ինքնավար մոդելը, ի տարբերություն հավաքագրման մոդելի, հիմնված է ընտրության հնարավորության վրա, որը հատուկ է զարգացած քաղաքակիրթ հասարակություններին: Կուսակցությունները, նրանց լիդերները հովանավորություն են փնտրում իրենց

ընտրողների շրջանում: Այս դեպքում ընտրողների տատանումները, նրանց ընտրությունն ուղղակիորեն ազդում է քաղաքական իշխանության ձևավորման վրա:

Ինքնավար մոդելը ներառում է անհատների, ինչպես նաև մեծ ու փոքր խմբերի ազատ, կամավոր գործունեությունը, որը հետապնդում է անձնային և խմբային շահեր:

Ինքնավար և հավաքագրման մոդելների միջև տարբերությունները հարաբերական են: Դրանք հաճախ հատվում են, քանի որ գոյություն ունեցող կարծրատիպերի և մանիպուլյացիաների արդյունք են: Այս մոդելների տարրերը գոյություն ունեն յուրաքանչյուր քաղաքական համակարգում: Ամբողջատիրական և ինքնակալական ռեժիմների ժամանակ իշխում է մասնակցության հավաքագրման, իսկ ժողովրդավարական հասարակության մեջ՝ ինքնավար մոդելի տարրերը, չնայած առկա են նաև անհատի հավաքագրման վարքի տարրեր:

Ինչպե՞ս վերաբերվել մասնակցությանը:

Քաղաքական մասնակցության բանական ակտիվ մոդելը չի ենթադրում բոլորի մասնակցությունը միշտ և միանման ձևերով: Այս բնագավառի խոշոր գիտակներ Ալմոնդը և Վերբան գտնում են, որ բանական ակտիվ մոդելը ենթադրում է քաղաքական կուլտուրայի կոմբինացիա, որում քաղաքական ակտիվությունը հավասարակշռվում է պասիվությամբ և ավանդույթներով: Նման իրավիճակը բնորոշ է ցանկացած կայուն ժողովրդավարական հասարակությանը:

Ընդհանրացնելով վերն ասվածը՝ պետք է նշել, որ քաղաքական կյանքին մասնակցությունը նպաստում է անհատի մեջ քաղաքացիական հատկանիշների ձևավորմանը և պայմաններ է ստեղծում, որ անհատն իրեն զգա պետության լիարժեք քաղաքացի:

Հանձնարարվող գրականություն

1. **Вебер М.,** Избранные произведения, М.,1991.

2. **Алъмонд Г., Верба С.,** Гражданская кулътура и стабилъностъ демократии, Политические исследования,1992, N.4.

3. **Пугачев В. П., Соловев А. И.,** Введение в политологию, М.,1996

4. **Шестопал Е. Б.,** Личностъ и политика, М.,1988.

5. Мир политической науки. Книга 1 Категории политической науки/А. Ю. Мельвиль и др. М.,Просвещение, 2004

Դասախոսություն 9

Ընտրություններն իբրև զանգվածային մասնակցության ձև

Ինչպես տեսանք, քաղաքական մասնակցության ձևերը բազմազան են: Մենք միտումնավոր առանձնացնում ենք ընտրական մասնակցությունը՝ փաստելով, որ ժողովրդավարական հասարակության մեջ քաղաքական մասնակցությունը դրսևորվում է հիմնականում ընտրություններին մասնակցության տեսքով:

Պետք է նշել, որ ընտրական մասնակցությունը նշանակալից զարգացում է ապրել: Մինչև անցյալ դարասկիզբը ԱՄՆ-ում, բացառությամբ մի քանի նահանգների, կանայք զրկված էին ընտրություններին մասնակցելու իրավունքից: Միայն 19-րդ դարավերջին 20-րդ դարասկզբին ընտրական իրավունքի ոլորտում տեղի ունեցան էական փոփոխություններ: Ներկայումս քաղաքացիների մասնակցության իրավունքը սահմանափակվում է միայն տարիքային ցենզով և օրենքով սահմանված կարգով:

Քաղաքական ընտրությունների միջոցով ձևավորվում են պետական իշխանության ներկայացուցչական մարմինները, որոշվում են ընտրովի պաշտոնների թեկնածուները: Ընտրությունները քաղաքացիների կողմից հասարակության քաղաքական կյանքին մասնակցության ամենատարածված ձևերից մեկն է: Տարբեր երկրներում ընտրություններն իրականացնում են տարբեր գործառույթներ՝ կապված կոնկրետ քաղաքական իրադրության, տվյալ հասարակության քաղաքական ինստիտուտների և սոցիալ-ժողովրդագրական կառուցվածքների հետ:

Քաղաքական ընտրություններն իրավական, քաղաքական նորմերի ամբողջություն են, միջոցառումների համալիր, համաձայն որի՝ տվյալ կազմակերպության իրավասու անդամներն իրենց շարքերից առաջադրում են որոշակի թվով ներկայացուցիչներ, օժտում նրանց իշխանական լիազորություններով տվյալ հաստատությունը կառավարելու համար:

Իրական ժողովրդավարությունն անհնար է պատկերացնել առանց կենսունակ քաղաքացիական հասարակության, որը կազմում են լավ տեղեկացված, սոցիալ-քաղաքական կյանքին ակտիվ

մասնակցություն ցուցաբերող քաղաքացիները: Քաղաքական համակարգի կայունությունը մեծապես կախված է հասարակական կյանքին քաղաքացիների ակտիվ մասնակցությունից, նրանց մոտ քաղաքական կամքի և վճռականության առկայությունից, իսկ ընտրական իրավունքի իրականացումը և քվեարկությունը քաղաքացիների քաղաքական մասնակցության հիմնական ձևն են: Այլ կերպ ասած՝ քաղաքական համակարգը կայուն է, եթե հավասարակշռության մեջ է, ինչն ապահովում են մուտքի ու ելքի գործառույթները:

Ընտրություն հասկացությունը մեկնաբանվում է որպես համապատասխան մարմնի կազմավորման կամ պաշտոնատար անձին լիազորություններով օժտելու գործընթաց, որն իրականացվում է իրավազոր անձանց քվեարկության միջոցով: Ըստ ՄԱԿ-ում Միացյալ Նահանգների նախկին դեսպան Ջոն Քրքպաթրիքի՝ ժողովրդավարական ընտրությունները սոսկ սիմվոլիկ բնույթ չեն կրում, դրանք մրցակցային, պարբերական և վերջնական ընտրություններ են, որոնց միջոցով կառավարական գլխավոր որոշումներ կայացնողներն ընտրվում են քաղաքացիների կողմից և կառավարությանը քննադատելու, իրենց քննադատությունը հրապարակելու, տարբերակներ ներկայացնելու լայն ազատություն են վայելում: Իսկ որպեսզի ընտրությունները իսկապես անցկացվեն արդար, կարծում ենք անհրաժեշտ է, որ բնակչության հնարավորինս մեծ հատվածը արտահայտի իր դիրքորոշումը, հնարավորություն ունենա օգտվել ընտրական իրավունքից: ***Ընտրական իրավունք*** հասկացությունը, որպես կանոն, օգտագործվում է 2 իմաստով՝ *սուբյեկտիվ և օբյեկտիվ*: *Սուբյեկտիվ* իմաստով ընտրական իրավունքը քաղաքացուն տրված հնարավորությունն է մասնակցել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպմանը ընտրելու և ընտրվելու միջոցով: *Օբյեկտիվ* իմաստով ընտրական իրավունքը այնպիսի իրավական նորմերի համակարգ է, որը կարգավորում է ընտրովի մարմինների կազմավորման հարաբերությունները:

Մասնագիտական գրականության մեջ մտածողները, իրական կյանքում էլ մենք, ընտրական մասնակցությունը վերլուծելիս անպայման այն կապում ենք քաղաքական մշակույթի հետ: Քաղաքական մշակույթն իր մեջ կուտակում է քաղաքական վարքի, գիտակցության, արդյունքում նաև մասնակցության ավանդական տիպերը, որոնք շատ հաճախ որպես պատրաստի ընդունվում են հասարակության անդամների կողմից:

Ե. Վյատրը ընտրական մասնակցության առումով առաջարկում է հետևյալ դասակարգումը. *ակտիվ անհատների խմբեր, ձեռնահաս դիտորդներ, ձեռնահաս քննադատներ, պասիվներ, օտարվածներ:*

Ակտիվ անհատներն ընտրական մասնակցությունը դիտարկում են որպես քաղաքական կյանքի նկատմամբ իրենց հետաքրքրությունը բավարարելու կարևոր միջոց: *Ձեռնահաս դիտորդներն* այն մարդիկ են, ովքեր,գիտակցելով ընտրությունների նշանակությունը, տիրապետելով որոշակի ինֆորմացիայի, չեն մասնակցում ընտրություններին, իսկ եթե մասնակցում են ուրեմն քաղաքականությունը շոշափում է նրանց անձնական շահը: *Ձեռնահաս քննադատներն* աչքի են ընկնում իշխանության, պետության վարած քաղաքական կուրսի նկատմամբ խիստ քննադատական և բացասական վերաբերմունքով: *Պասիվ մասնակիցերն* ունեն չեզոք վերաբերմունք քաղաքականության նկատմամբ, որը կարող է լինել բացասական վերաբերմունքի հետևանք: *Օտարված մարդիկ* այն քաղաքացիներն են, ովքեր տեղեկացված չեն քաղաքականության մասին և չեն գիտակցում իրենց անտեղյակությունը:

Ընտրություններին մասնակցելը կամ հակառակ երևույթը՝ ***աբսենտիզմը***, տարբեր հասարակություններում կարելի է և պետք է հասկանալ միայն խոր ուսումնասիրելով դրանց սոցիալ-տնտեսական, հոգեբանական դրդապատճառները, երևույթները: Այնպիսի հասարակություններում, որտեղ ընտրությունները սոսկ ձևական բնույթ են կրում և արդեն նախորոք որոշված են հաղթողները, վաղ թե ուշ, քաղաքացիները կհասկանան, որ ամենևին էլ պարտադիր չէ իրենց քվեն հաղթանակ ապահովելու համար, այսինքն, միևնույն է, նրանց մասնակցությունը ոչինչ չի փոխի: Միևնույն ժամանակ գերքաղաքական և մասնակցային դեմոկրատիաներում հասարակությունը, լինելով գերբավարարված քաղաքականապես, սոցիալականապես և հոգեբանորեն, ամենևին չի անհանգստանում վաղվա օրվա մասին: Նման դեպքերում քաղաքացիները համոզված են, որ իրենց պետության մեջ քաղաքական որոշումները, և առհասարակ քաղաքական համակարգը հիմնված չէ անձերի հեղինակության վրա: Նրանք գիտեն, որ ով էլ գա իշխանության, անպայման պատասխանատվություն է կրելու իր ընդունած որոշումների համար: Նման դեմոկրատական համակարգերում իշխանության ճյուղերի իրավասությունները և լիազորությունները կարգավորվում են զսպիչների և հակակշիռների համակարգով: Քաղաքական կյանքին չմասնակցելը և մասնակցելն

ունեն իրենց դրդապատճառները, և քաղաքագետների կողմից ոչ պակաս ուշադրության է արժանացել: Ըստ Վ. Ա. Մելինիկի՝ քաղաքականությանը չմասնակցելը կարող է լինել հետևանք բավարար կուլտուրայի մակարդակ չունենալու, հիասթափության, հակակրանքի, քաղաքական բոյկոտի:

Չնայած քաղաքականությանը չմասնակցելը դրական երևույթ չէ, այնուամենայնիվ, բոլոր չմասնակցողները չեն ընդհանրացվում, այլ բաժանվում են երկու հիմնական խմբի՝ *կայուն չմասնակցողներ և ժամանակավոր օտարվածներ:* Սրանց միջև առանցքային տարբերությունը այն է, որ ժամանակավոր օտարվածները բացասական վերաբերմունք ունեն տվյալ ժամանակահատվածի քաղաքականության նկատմամբ, իսկ կայուն չմասնակցողների մոտ ամբողջովին բացակայում է քաղաքական կյանքին մասնակցելու ցանկությունը, անկախ նրանից, թե իշխանության մոտ գտնվողները ինչպիսի քաղաքականություն են իրականացնում:

Ընտրություններին չմասնակցելը, որպես քաղաքական անտարբերության մասնավոր ձև, նույնպես ունի իր սոցիալ-հոգեբանական պատճառները: Դրանցից են ապաքաղաքականացվածությունը, հիասթափությունը, անվստահությունը իշխանությունների նկատմամբ, քաղաքական որոշումների ընդունման վրա որևէ ազդեցություն ունենալու նկատմամբ կասկածը և այլն:

Հիմնավորելով քաղաքական մասնակցությունը որպես իրավական, ժողովրդավարական պետություն ստեղծելու անհրաժեշտ հիմնաքար, միաժամանակ նշենք, որ պետք է խուսափել ծայրահեղություններից, ապակայունացնող միտումներից: Արժանահիշատակ է Ստենլի Կատցի արտահայտած այն միտքը, որ քաղաքական կայունությանը վտանգ է սպառնում նաև այն դեպքում, երբ միանգամից չափից ավելի հասարակական մասնակցություն է թույլատրվում: Հեղինակը կարևորում է ոչ միայն դեմոկրատական գործընթացները, այլև դրանք ապահովելու համար անհրաժեշտ մեխանիզմները:

Այսպիսով, ընտրական մասնակցությունը՝ որպես քաղաքական գործընթացներին անհատ-քաղաքացիների մասնակցության հիմնարար և զանգվածային ձև, հանդիսանում է քաղաքական համակարգի կայունության, առողջ քաղաքացիական հասարակության ձևավորման, պետական մտածելակերպով օժտված սերունդ դաստիարակելու գրավական:

Ժամանակակից լիբերալ դեմոկրատիաներում սերնդափոխութ-

յունը սոցիալական և քաղաքական փոփոխությունը խթանող հիմնական ուժն է: Եթե հետազոտողների շրջանում կա հարաբերական կոնսենսուս այն հարցի շուրջ, որ նոր սերնդի վարքը և հայացքները խիստ տարբեր են իրենց նախնիների հայացքներից, ապա չկա այս երևույթի միասնական մեկնաբանությունը:

Որոշ արևմտյան ժողովրդավարություններում քվեարկողների թվաքանակի անկում է նկատվում և կան հիմքեր կարծելու, որ այս երևույթը հատկապես նկատելի է երիտասարդների շրջանում: Կապված այս երևույթի հետ՝ որոշ հեղինակներ նշում են «քաղաքական ցինիզմի» մասին, քաղաքականության հանդեպ հետաքրքրության բացակայության մասին կամ քաղաքացիական պատասխանատվության ցածր զգացում ունենալու մասին, մինչդեռ որոշներն էլ մատնանշում են ինստիտուցիոնալ կազմակերպությունները, որոնք բացասաբար են անդրադառնում երիտասարդ քվեարկողների մասնակցության հաճախակիության վրա: Քվեարկողներին առաջադրված գրանցման պահանջները, գաղափարախոսական վակուումը կամ քաղաքական էլիտայի համալրման մեխանիզմների հանդեպ թերահավատությունը կարող են բացասաբար անդրադառնալ երիտասարդ քվեարկողների վրա: Քաղաքականության հանդեպ անտարբերության մասին վկայում է ոչ միայն քվեարկողների քանակի անկումը, այլև կուսակցական իդենտիֆիկացիայի հետ կապված խնդիրները: Կուսակցական իդենտիֆիկացիան ավելի է ամրապընդվում քաղաքացիների մոտ, երբ նրանք առավել հասուն փուլում են գտնվում: Բայց հատկապես այս անկումը նկատելի է վերջին տասնամյակում, երբ երիտասարդները խուսափում են ավանդական կուսակցական քաղաքականությունից: Որոշ երկրներում քաղաքական կուսակցությունների երիտասարդական թևը, որ ավանդաբար հանդիսացել է հավաքագրման գլխավոր ուղին, կտրուկ կորցնում է անդամներին: Եվ ինչպես վերը նշեցինք, բացակայում է հստակ տեսակետը կապված այս երևույթների մեկնաբանման հետ: Որոշ հեղինակներ այս միտումը համարում են առհասարակ քաղաքացիական ներգրավվածության անկման դրսևորումներից մեկը: Համաձայն նրանց՝ երիտասարդները ոչ թե պարզապես հետաքրքրված չեն ընտրություններին մասնակցել, այլ առհասարակ մասնակցել քաղաքացիական ներգրավման այլ ձևերին: Ի հակադրություն այս հետազոտողների, մասնագետների մի ստվար հատված համոզված է, որ նշված երևույթները պայմանավորված են նրանով, որ երիտասարդ

սերունդն ընտրել է քաղաքականության հետ հարաբերվելու ոչ ավանդական ֆորմալ մեխանիզմները: Եվ ինչու չէ, քաղաքացիների այս սերնդին կարելի է անվանել «քննադատող» քաղաքացիներ, ովքեր թերահավատորեն են վերաբերվում քաղաքական ինստիտուտների գործառնությանը, բայց փոխարենը խորապես նվիրված են դեմոկրատական նորմերին և առավել հանդուրժող են: Այնպիսի կառուցվածքային սոցիալական փոփոխությունները, ինչպես օրինակ գլոբալացումը, քաղաքացիության երևույթի փոխակերպումը, իրենց հետքն են թողնում ամբողջ բնակչության քաղաքական վարքի և վերաբերմունքի վրա: Այնուամենայնիվ, ավագ սերնդի ներկայացուցիչների համար այս փոփոխությունները այնքան էլ ազդեցիկ չեն, քանի որ նրանց հիմնական քաղաքական կողմնորոշումները և հայացքները ձևավորվել են տասնամյակներ առաջ և որոշ իմաստով դրանք կուղեկցեն նրանց ամբողջ կյանքի ընթացքում: Ինչպես նշում է Ֆրանկլինը՝ «ապագան երիտասարդների ձեռքում է, նրանք ունեն ապագայի բանալին, որովհետև նրանք են արագ կերպով արձագանքում նոր պայմաններին»:

Մինչ քաղաքական սոցիալականացման բնագավառի հետազոտությունները այդքան էլ հաճախակի բնույթ չէին կրում, ընտրական մասնակցության ցուցանիշների ուսումնասիրությունը շեշտում են հենց քաղաքական սոցիալականացման հիմնախնդիրների ուսումնասիրության կարևորության փաստը՝ մեկնաբանելու փոփոխությունները կամ, հակառակը, կայուն իրավիճակները: Սա բխում է այն հանգամանքից, որ քվեարկությանը մասնակցության ցուցանիշները այդքան էլ կապված չեն անհատի կյանքի փուլերի հերթափոխի հետ, որքան դա նախկինում էր: Փոխարենը աբսենտիզմը որոշակի աստիճանով դարձել է երիտասարդների քաղաքական կողմնորոշման բնորոշ գծերից մեկը, մասնակիորեն շնորհիվ ապամոբիլիզացնող սոցիալականացման գործընթացի: Դա բնորոշ է մի ամբողջ տարիքային խմբի, հետևաբար էական նշանակություն ունի սոցիալականացման գործընթացի տարբերությունների և օրինաչափությունների ուսումնասիրությունը, ինչն էլ ուղղակիորեն առնչվում է քաղաքական մասնակցության գործընթացներին: Շատ տեսաբանների կարծիքով, երիտասարդների շրջանում քաղաքական մասնակցության ցածր մակարդակը ժամանակավոր երևույթ է, քանի որ ակտիվությունը աճում է, երբ անձը յուրացնում է «չափահաս դերերը», իսկ այդ դերերից են՝ ամուսնություն, մշտական աշխատանքով ապահովվածություն և

այլն: Բոլոր այս փոփոխություններն անպայման ենթադրում են կենսական պայմանների ու հանգամանքների վերադասավորություն: Այլ կերպ ասած՝ երբ անհատն ապահովված է աշխատանքով, կազմել է սեփական ընտանիքը, նա այնուհետև կարող է ուշադրությունը կենտրոնացնել արտաքին աշխարհի վրա:

Անկախ նրանից, թե ո՛ր պետության քաղաքացի է անձը, ինչպիսի քաղաքական դաստիարակության և քաղաքական ավանդույթների կրող է նա, քաղաքական մասնակցության տարբեր ձևերի վրա ներգործում են բազմաթիվ գործոններ, հատկապես եթե խոսքը վերաբերում է ընտրություններին:

Ընտրություններին մասնակցությունը ենթադրում է առաջին հերթին ընտրողների վարքի վերլուծություն մասնակցության ընթացքում: Իսկ ընտրողների վարքի վերլուծությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ քվեարկության դրդապատճառների բացահայտում: Քվեարկության մասնակցության հարցն այնքան էլ պարզ չէ, ինչպես թվում է առաջին հայացքից: Ընտրությունները ձևափոխում են սովորական հաղորդակցական գործընթացները. քաղաքական էլիտան այլևս քաղաքացուն չի կանգնեցնում կատարված փաստի առաջ, այլ ընդհակառակը, նրա հետ ձգտում է համագործակցության՝ իր քաղաքականությունը շարունակելու համար:

Արևմտյան քաղաքագիտության մեջ ընդունված է համարել, որ քաղաքացիների քաղաքական նախապատվությունների ընտրության վրա ազդում են հինգ հանգամանք. հասարակական դրությունը, եկամտի չափը, կրթությունը, բնակավայրը և կրոնը: Երբեմն այս գործոններին ավելանում է նաև գաղափարախոսական գործոնը: Դժվար չէ նկատել, որ վերը թվարկված գործոններն ուղիղ համեմատական կապի մեջ են ընտրական մասնակցության ակտիվության հետ:

Դրանք սուբյեկտիվ համարելով՝ ուզում ենք նշել, որ հասարակության մեջ ժողովրդավարական հարաբերությունների համակարգի ստեղծումը մեծապես կախված է բնակչության քաղաքական կուլտուրայից: Տվյալ դեպքում «ժողովրդավարական հարաբերությունների համակարգ» հասկացությունը նույնական է «ընտրական ակտիվ մասնակցության համակարգ» հասկացությանը: Ինքնին հասկանալի է, որ ոչ մի երկրում քաղաքական մշակույթի տեսակները (նահապետական, ենթարկման և ակտիվ) չեն գործում մաքուր ձևով, այլ հաճախ հանդես են գալիս միախառնված ձևով:

Ընտրական մասնակցության մասին կարող ենք խոսել որպես

քաղաքական-հոգեբանական երևույթի մասին այն իմաստով, որ մասնակցության համար առկա են որոշակի հասարակայնորեն ձևավորված նախապայմաններ, որոնք հանգեցնում են հետևյալներին.

- մարդիկ ցանկանում են շատ կամ քիչ չափով դիրք գրավել հասարակության մեջ, որը կապահովի նրանց առավելագույն հնարավոր ինքնուրույնությունը,
- մարդիկ շատ կամ քիչ չափով հարմարված են իրենց դիրքին և արդյունքում լավ կամ վատ են կատարում իրենց գործառույթները:

Ընտրական մասնակցության համար էական նշանակություն ունի մասնակցությունն ընդհանրապես քաղաքական կյանքին: Վերջինս անհրաժեշտ հիմք է քիչ թե շատ գիտակից ընտրություն կատարելու համար:

Ազատ և արդար ընտրությունները բոլոր բնութագրիչներից կարևորն են, որոնք առանձնացնում են ժողովրդավարությունը կառավարման մյուս ձևերից: Ազատ ընտրությունները հասկացվում են որպես ժողովրդավարություն ինչպես զանգվածային գիտակցության մեջ, այնպես էլ քաղաքագետների աշխատանքներում:

Ընտրական մասնակցության կենտրոնական և զանգվածային միջոցը քվեարկությունն է, որի օգնությամբ մարդկանց մեծամասնությունը մասնակցում է ժողովրդավարական քաղաքականությանը: Հենց քվեարկության արդյունքներն են որոշում քաղաքական վերնախավի հերթափոխը: Սակայն մասնակցության այս ձևը որոշում է անհատական պոտենցիալի բավական ցածր մակարդակ: Առաջին հերթին, իրավիճակը, հիմնախնդիրները և «քաղաքական գործող անձինք», որպես կանոն, չնչին չափով են կախված ընտրողներից: Նրանցից սպասում են միայն այո կամ ոչ: Այսինքն, նախաձեռնությունն այստեղ պատկանում է քաղաքականապես ակտիվ քաղաքացիների փոքր մասին:

Քվեարկության հետ կապված երկրորդ փաստարկն այն է, որ ընտրողները քվեարկության միջոցով չեն կարող արտահայտել թեկնածուների մասին իրենց ընկալումները: Այլ կերպ, նրանք կամ քվեարկում են կողմ՝ տարվող քաղաքականությանը, որը համապատասխանում է իրենց պահանջմունքներին, կամ դեմ, որը չի համապատասխանում: Բացի դրանից, քվեարկության մասնակցությունը լավագույն դեպքում տալիս է ընդհանրական արդյունքներ, որոնք անմիջական կապ չունեն անհատների շահերի և պահանջմունքների

հետ: Դա, բնականաբար, իջեցնում է քաղաքական մասնակցության արժեքը՝ բարձրացնելով նրա կոնֆլիկտային պոտենցիալը:

Ի հավելումն վերն ասվածի, պետք է նշել, որ ընտրողի վարքն ունի բարդ կառուցվածք, և քվեարկությունը միակը չէ այդ համակարգում: Ընտրական վարքն արտահայտվում է հետևյալ կերպ. մասնակցությունը քաղաքական, ընտրական արշավներին, անձնական առնչությունները քաղաքական գործիչների հետ, մասնակցությունը տեղական քաղաքական կյանքին:

Մասնակցությունը քաղաքական ընտրարշավներին իր բնույթով համընկնում է քվեարկության հետ: Տարբերությունը գլխավորապես կապված է այն բանի հետ, որ մասնակցությունն արշավներին պահանջում է մեծ մասամբ անհատական ակտիվություն և նախաձեռնություն, ինչպես նաև համագործակցություն այլ մարդկանց հետ:

Ժողովրդավարական մասնակցությունը լավագույնս արտահայտում է քաղաքական գործիչների հետ անձնական առնչությունները: Տվյալ պարագայում քաղաքացիներն իրենց վրա են վերցնում մասնակցելու նախաձեռնությունը և հնարավորություն ունեն որոշելու իրենց հիմնախնդիրները, քանի որ հնարավոր արդյունքն անմիջականորեն կապված է իրենց շահերի ու պահանջմունքների հետ: Ուստի անհատների ընտրելու հնարավորությունը մեծագույնս բարձրացնում է իրենց իսկ մասնակցության աստիճանը: Քաղաքական գործիչների հետ կապերը կարող են շոշափել ինչպես հասարակական կյանքի հիմնախնդիրներ, այնպես էլ համազգային կարգի, մասշտաբային տեղական խմբի հիմնախիդիրներ: Վերջապես կապերը կարող են լինել անձնական բնույթի և կապված լինել մեկ անձի շահերի հետ:

Պետք է նշել, որ քաղաքական գործիչների հետ կապերն իրացվում են ինչպես անհատական, այնպես էլ համագործակցության միջոցով: Մասնակցության երկրորդ ձևն առավել արդյունավետ է, քանի որ ենթադրում է կառավարման համակարգի հետ համագործակցություն, ինչպես նաև համագործակցություն քաղաքացիների, քաղաքական կազմակերպությունների և շահերի խմբերի, ֆորմալ այլ կառույցների հետ:

Այսպիսով, քաղաքական դեմքերի հետ անձնական հարաբերությունները ենթադրում են ոչ կոնֆլիկտային եղանակ, որն ուղղված է կառավարության հետ համագործակցության աճին:

Ընտրական մասնակցության առումով բավականին կարևորում

ենք նրա փոփոխականների հարցը, նրանց փոխազդեցության մեխանիզմները: Փոփոխականներ են այն գործոնները, որոնք արտաքին գործոնների ազդեցությամբ ենթակա են փոփոխությունների որևէ կոնկրետ ժամանակահատվածում: Ըստ Ա.Վ.Գոնչարովի և Ի.Բ.Գոպտարևայի՝ ընտրական վարքի փոփոխականներ են *կուսակցական նույնականացումը, թեմատիկ կողմնորոշումը և դեռի թեկնածու կողմնորոշումը*:

Ժողովրդավարության պայմաններում ընտրողների վարքում ամենակարևոր և որոշիչ փոփոխականը *կուսակցական նույնականացումն է,* որը նաև քաղաքական արդիականացման կարևոր բաղադրիչ է համարվում: Այն կայացած ժողովրդավարական երկրներում հիմնավորվում է դեռևս սոցիալականացման վաղ փուլում: Եվրոպայում կուսակցական նույնականացումը կապված է նախ և առաջ դասային պատկանելության հետ: Մասնակցության կուսակցական համակարգը ձևավորվում է մեր աչքի առաջ: Ընտրողները դժվարությամբ են հարմարվում գաղափարախոսական նոր մոդելներին և սովորում են ընկալել կուսակցական շինարարության տարբեր ձևերը:

Ընտրական վարքի մյուս բաղադրիչը *թեմատիկ կողմնորոշումն է,* այսինքն անհատի վերաբերմունքն ընթացիկ սոցիալական և քաղաքական կյանքի հիմնախնդիրներին, որոնք պետք է կարգավորվեն կառավարման մարմինների կողմից:

Թեմատիկ կողմնորոշումն ընտրական վարքի այն տեսանկյունն է, որը հեշտ չէ դիտարկել միջազգային համեմատական հետազոտությունների սպեկտրով: Ուսումնասիրելով ընտրողների թեմատիկ կողմնորոշումները՝ պետք է նկատի ունենալ, որ քաղաքական քննարկումների թեմաները ոչ միշտ են ծագում բնականորեն: Շատ դեպքերում քաղաքական պրոբլեմատիկան «օբյեկտիվ» բնույթ չի ունենում, այսինքն, շարքային ընտրողի գիտակցության մեջ ինքն իրեն չի ձևավորվում, հստակ ձևակերպում չի ստանում: Քաղաքական գլխավոր հիմնախնդիրների առաջքաշման և բացատրման նախաձեռնությունը պատկանում է քաղաքական վերնախավին: Հենց նրանք են ձևավորում քաղաքական նշանակությունների աշխարհը, որն էլ հետագայում ասպարեզ է դուրս բերվում որպես քաղաքական կյանքի բնական և օբյեկտիվ հիմնախնդիր: Դեռ ավելին, նույնիսկ այն դեպքում, երբ հիմնախնդիրը բավականին հագեցած է, որը չի կարելի անտեսել, այն կարելի է «սանձել» արժեքների կամ որևէ այլ

բացատրության միջոցով:

Ընտրողներին քննարկման համար առաջարկվող հիմնախնդիրները ոչ միշտ են բավականաչափ հասկանալի լինում: Ինչպես գաղափարախոսական, այնպես էլ պրագմատիկ լեզուն, որն օգտագործվում է իշխող քաղաքական վերնախավի կողմից, «միջին» ընտրողների հետ շփվելիս ընկալվում է որոշակի շեղումներով և դժվարությամբ:

Առավել դժվար է ընկալվում լիբերալ հիմնախնդրի լեզուն ընտրողների շրջանում: Որպեսզի հավասարապես գնահատենք պետական կառավարման համակարգը սոցիալ-տնտեսական և քաղաքական բարեփոխումների պայմաններում, անհրաժեշտ է տիրապետել հատուկ գիտելիքների, կարողանալ ընկալել մեծաքանակ տեղեկատվություն, վերլուծել քաղաքական կյանքի իրադարձությունները բանական հիմքով: Մեծ դժվարություն է ներկայացնում արժեքային քննարկումների ընկալումը, որը պահանջում է համբերություն, իմաստություն, դիմակայելու պատրաստակամություն և այլն:

Ընտրողի վարքը ձևավորող մյուս փոփոխականը *դեպի թեկնածուն կողմնորոշումն է:* Վարքի այս ձևը բաժանվում է երկու բաղադրամասերի՝ գործիքային և սիմվոլիկ: Գործիքայինն այն դեպքն է, երբ ընտրողը քվեարկում է այս կամ այն թեկնածուի օգտին՝ ելնելով նրա կատարած կամ կատարելիք աշխատանքի գնահատականից: Մինչդեռ սիմվոլիկ վարքը կապված է քաղաքական գործչի հարիզմայի և նրա հեղինակության արժեքային ընկալման հետ: Սիմվոլիկ մասնակցությունը կառուցվում է քաղաքական գործչի կենսագրությանն առնչվող փաստերի հիման վրա (ծագումը, ընտանեկան դրությունը, գիտական կամ մարզական նվաճումները, անձնական համակրանքը, արտաքինը, պահվածքը, խառնվածքը և այլն): Սիմվոլիկ բնույթի գնահատականները ոչ միշտ են հստակ գիտակցվում: Հաճախ դրանք գործում են ենթագիտակցական մակարդակում և հենց այստեղ է, որ կարևորվում է ընտրողների վարքի սոցիալ-հոգեբանական շարժառիթների հարցը:

Ամփոփելով ընտրական վարքի փոփոխականների վերլուծությունը՝ պետք է նշել, որ յուրաքանչյուր փոփոխական անկախ չէ: Փոփոխականները համագործակցում են միմյանց հետ: Այսպես, կուսակցական նույնականացումը կարող է հակասել այլ կուսակցության թեկնածուի նկատմամբ համակրանքին, երբ առաջին պլան են մղվում քաղաքական կյանքի որոշակի հիմնախնդիրների լուծման հետ կապ-

ված սպասումները, կամ էլ մի փոփոխական ուժեղացնում է մյուսի ազդեցությունը: Փոփոխականների հնարավոր ազդեցության վերլուծությունը մեծ նշանակություն ունի էմպիրիկ հետազոտությունների համար, երբ փորձ է արվում կանխատեսել ընտրական արշավների ընթացքը և ավարտը:

Բազմաթիվ քաղաքագիտական հետազոտություններ ցույց են տալիս, որ ընտրողի վրա ազդում են բազմազան գործոններ. սեռը, տարիքը, կրոնական պատկանելությունը, առաջնային սոցիալականացման առանձնահատկությունները, ինչպես նաև արտաքին միջավայրի գործոնները: Ըստ Ա. Գ. Տերեշչենկոյի և Ս. Լիփսեթի, չնայած այս գործոններին՝ գոյություն ունեն նաև առանձին ընտրական խմբերի վարքի ընդհանուր միտումներ: Այսպես, տղամարդիկ կանանց համեմատությամբ ավելի ակտիվ են մասնակցում ընտրություններին: Ակտիվության վրա ազդում են ընտանեկան դրությունը և անդամակցությունը որևէ կուսակցությանը: Ամուսնացած չաշխատող կանայք սովորաբար կրում են իրենց ամուսինների քաղաքական հայացքները: Երիտասարդությանը որոշ չափով ձգում է արմատականությունը, և նա իր ձայնը տալիս է այն քաղաքական ուժին, որը խոստանում է շուտափույթ փոփոխություններ:

Ակնհայտ է, որ վերը թվարկված միտումները բացարձակ չեն, քանի որ ընտրական գործընթացները հաճախ անկանխատեսելի հետևանքներ են ունենում:

Թվարկված արտաքին միջավայրի գործոնները բարդ փոխհարաբերությունների մեջ են մարդու ներքին, հոգեբանական առանձնահատկությունների հետ, այսինքն աշխարհակողմնորոշման ներքին մեխանիզմների հետ:

Իսկ ինչպե՞ս են քվեարկում Հայաստանում, ի՞նչ սոցիալ-հոգեբանական շարժառիթներ են ընկած քվեարկության հիմքում:

Այս հարցն ինքնին բարդ և բազմակողմանի հարց է, և ակնկալել միանշանակ պատասխան դժվար է, քանի որ ներկայումս Հայաստանը գտնվում է դեռևս անցումային փուլում, իսկ անցումային ժամանակաշրջան ապրող երկրին բնորոշ են իրարամերժ և հակասական գնահատականներ:

Այնուամենայնիվ, մեր քաղաքական դիտարկումները թույլ են տալիս կառուցել մի մոդել, որի համաձայն, Հայաստանում քվեարկողների մեծամասնությունը հիմնականում քվեարկում է անհատականացված դրդապատճառներով, այսինքն կարևորը ոչ թե կուսակ-

ցությունների ծրագրերն են, այլ քաղաքացիները: Նշելով տվյալ կուսակցությունը, իրականում նկատի ունեն կուսակցության լիդերին կամ լիդերին հավասար ինչ-որ կարկառուն ներկայացուցչի:

Մյուս միտումը, որ առկա է այստեղ, այսպես կոչված «գավառական» մոտեցումն է, երբ ընտրում են բարեկամին կամ հարևանին՝ առանց գաղափար ունենալու նրա ներկայացրած ծրագրի մասին:

Իրապես գոյություն ունի այն փաստը, որ մարդկանց որոշակի զանգված այս կամ այն թեկնածուի օգտին քվեարկում է անցյալի գնահատումով, այսինքն վեր են լուծում իրենց թեկնածուի անցյալի գործունեությունը, վերագնահատում և իրենց ձայնը տալիս նրա օգտին:

Ընտրողների մի փոքր մաս քվեարկում է ապագայի ակնկալիքով, այսինքն մանրազնին ուսումնասիրում է մրցակից թեկնածուների հայացքներն օրախնդիր հարցերի վերաբերյալ և ապա քվեարկում այն մարդու օգտին, որից ակնկալում են այդ խնդիրների լուծման լավագույն տարբերակներ: Յուրաքանչյուր ընտրատարածքում մեծ թիվ են կազմում «չարիքի փոքրագույնով» ընտրողները: Իրականում նրանք ոչ թե կողմ են, այլ դեմ են, չնայած որ այդ նախապատվությունը չի համապատասխանում իրենց քաղաքական համոզմունքներին: Մասնագիտական գրականության մեջ այս երևույթը կոչվում է բացասական քվեարկություն: Այս պարագայում հասկանալի է, որ թեկնածուներն իրենց քաղաքական հաշվարկները կառուցում են բարենպաստ քաղաքական իմիջի ստեղծման և որոշ ոչ բանական գործոնների վրա:

Այսպիսով, ընտրությունները քաղաքացիների կողմից հասարակության քաղաքական կյանքին մասնակցության ամենատարածված եղանակներից մեկն է: Ընտրությունները ժողովրդավարական քաղաքական համակարգի բնութագրման ժամանակ էական դեր են խաղում, ուստի ընտրություններին մասնակցության իրականացման ձևերի, եղանակների ուսումնասիրությունն անհրաժեշտ է և կարևոր արդի պայմաններում:

Հանձնարարվող գրականություն

1. **M. Hooghe**, Political Socialization and the Future of Politics, ActaPolitica, 39, (331-341), Belgium, 2004, p. 331

2. **Терещенко А. Г., Липсет С.,** О социалъных основах политического поведения избирателя,социалъно-политический журнал, 4/1996, с. 182-184

3. **Вятр Е.,** Социология политических отношений, М., 1979.

4. **Гончарев А. В., Гоптарева И. Б.,** Введение в политическую науку, М., 1996, с.162-168

5. **Katz S.,** " Shaping the political structures for Democracy " Democracy is a Disscussion. 1998.

6. **Ковлер А. И.,** Избирателъные технологии:российский зарубежный опыт, М.,1995, с.14

7. **Мелъник А. В.,** Политология, Мн.,1996, с.131

8. **H. Waas,** paper prepared for presentation at the "Politics of Participation" conference, "Generations and Socialization into Political Participation", Helsinki, 2005, p.4-6

Դասախոսություն 10

Քաղաքական մասնակցության դրդապատճառային հիմքերը

Քաղաքական մասնակցության տեսության կառուցման հետ կապված՝ առանձնակի կարևորվում են այն հարցերը, թե ի՞նչն է ստիպում անհատին՝ լինել ակտիվ կամ պասիվ հանդիսատես քաղաքական թատրոնում, ինչպիսի՞ գործոններ են բարձրացնում քաղաքական մասնակցության աստիճանը և այլն: Այստեղ, բնականաբար, առաջ է գալիս քաղաքական մասնակցության դրդապատճառների հարցը:

Դրդապատճառները կատարում են ամենից առաջ նպատակների և ծրագրերի վերբալացման գործառույթներ, որոնք հնարավորություն են տալիս մարդուն՝ ծավալել որոշակի գործունեություն:

Քաղաքական մասնակցության տեսության մեջ կարելի է հանդիպել ինչպես ակտիվ, այնպես էլ պասիվ մասնակցությունը պայմանավորող մի խումբ դրդապատճառներ: Սակայն քաղաքական մասնակցության դրդապատճառների վերլուծությունը խարսխված է հիմնային օրինաչափությունների վրա: Այսպես, Դ. Մակլելանդի և Ջ. Ատկինսոնի համընդհանուր ճանաչում ձեռք բերած դասակարգման մեջ առանձնացվում են երեք հիմնական դրդապատճառ. իշխանության դրդապատճառը, նվաճման դրդապատճառը, աֆֆիլյացիայի (ուրիշների հետ լինելու) դրդապատճառը:

Մակլելանդի հայեցակարգում խոսքը գնում է ոչ միայն քաղաքական իշխանության մասին, այլև իշխանության մասին ընդհանրապես: Տվյալ դեպքում իշխանությունն արժեք է, որին հասնելու համար այս կամ այն չափով ձգտում են մարդիկ: Մարդիկ ձգտում են իշխանության հասնել ամենատարբեր պատճառներով: Մակլելանդը պայմանականորեն առանձնացնում է պատճառների երեք խումբ, որոնց դեպքում իշխանությունը ցանկալի է: Դրանք են՝ ձգտումն իշխել ուրիշների վրա կամ սահմանափակել ուրիշների գործողությունները, բացառել ուրիշների իշխանությունն իր վրա կամ արգելել նրանց՝ խառնվել իր գործերին, հնարավորությունների ձեռքբերման ձգտումը քաղաքական նպատակներն իրականացնելու համար:

Մարդկանց վրա հսկողության դրդապատճառը իշխանության դրդապատճառի ձևափոխությունն է: Այս հանգամանքը կարևոր նշանակություն ունի, քանի որ ուղղակիորեն կապված է քաղաքական

վարքի հետ: Սոցիալապես հասուն մարդը կարողանում է հսկել իր վարքը, որը թույլ է տալիս վստահել սեփական ուժերին և ընդլայնել իր քաղաքական մասնակցության սահմանները:

Ձգտման դրդապատճառը քաղաքական վարքում արտահայտվում է դրված նպատակներին հասնելու վարպետության, կատարելության մեջ: Այս դրդապատճառը մարդուն կարող է դարձնել ինչպես կարիերիստ, այնպես էլ անշահամոլ քաղաքական գործիչ: Ըստ Մակլելանդի և Ատկինսոնի՝ ձգտման դրդապատճառը գործ ունի վարպետության, մանիպուլյացիաների հմտության, խոչընդոտների հաղթահարման, մրցակցության երևույթների հետ: Իհարկե, սա շատ ավելի խոր մեկնաբանություն է, որն առավել համապատասխանում է քաղաքական լիդերին:

Ի տարբերություն ձգտման դրդապատճառի, աֆֆիլյացիայի դրդապատճառը ենթադրում է ջերմ ընկերական հարաբերություններ: Սրանով ղեկավարվելիս անձը գերադասում է այն վարքը, որն ապահովում է ավելի զգացմունքային կոմֆորտ, քան հսկողություն ուրիշների վրա: Հասարակ քաղաքացիների համար աֆֆիլյացիայի դրդապատճառը հաճախ որոշվում է քաղաքական կազմակերպություններին պատկանելությամբ, որոնք ներշնչում են միասնության, համախմբվածության, փոխօգնության, պաշտպանվածության զգացումներ:

Մակլելանդի և Ատկինսոնի դրդապատճառային հայեցակետն ունի ընդհանրական և փոքր-ինչ սուբյեկտիվ ուղղվածություն: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ բոլոր մարդիկ, անկախ իրենց սոցիալական դերերից, ձգտում են իշխանության:

Ներկայացնենք քաղաքական մասնակցության մեկ այլ դրդապատճառային տեսություն, որը ելնում է ընդհանրական բնույթի դրդապատճառներից: Դրանք են՝ գաղափարախոսական, նորմատիվ և դերային:

Գաղափարախոսական դրդապատճառը ենթադրում է, որ անձը նպաստում է հասարակության պաշտոնական գաղափարախոսության տարածմանը՝ մասնակցելով քաղաքական կյանքին: Այս դրդապատճառն ապահովում է սեփական քաղաքական արժեքների նմանակման գործընթացը պետական արժեքներին: Նշենք, որ անձնական ու պետական կողմնորոշումների տարանջատումը պետության և քաղաքական համակարգի նկատմամբ կարող է հանգեցնել բացասական և անգամ թշնամական վերաբերմունքի:

Նորմատիվ դրդապատճառը պայմանավորում է անձի վարքը քաղաքական համակարգի կողմից թելադրված նորմերով: Այս դեպքում անհատի վարքը հիմնված է իշխանական ուժերի ճանաչման և ընդունման վրա, որոնք մշակվում են քաղաքական սոցիալականացման ընթացքում: Նորմատիվ դրդապատճառի համատեքստում քաղաքական համակարգին ենթարկվածությունը դիտվում է որպես բացառիկ ճիշտ և արժեքավոր կողմնորոշում:

Դերային դրդապատճառները նախորոշվում են անհատի սոցիալական դերով: Այս պարագայում մարդու վարքն ուղղակիորեն կապված է իր սոցիալական դրության և սեփական ինքնագնահատականի հետ: Որքան վատ է սոցիալական դրությունը, այնքան ավելի հավանական է անձի բացասական տրամադրվածությունն իշխանությունների նկատմամբ:

Ելնելով սոցիալական դրության և քաղաքական վարքի միջև ակնառու կապերից՝ պետք է անպայմանորեն առանձնացնել ներանձնային գործոններից ամենակարևորը՝ պահանջմունքները: Քաղաքականության մեջ լինում են սովորական մարդկային պահանջմունքներ, այդ թվում հետաքրքրությունը, ազատության ձգտումը, սովը բավարարելու պահանջմունքը և այլն:

Ամերիկյան հայտնի հոգեբան Ա. Մասլոուն առաջարկում է առանձնացնել հինգ հիմնական պահանջմունք: Դրանք են՝ ֆիզիոլոգիական, անվտանգության, սիրո, ինքնահաստատման և ինքնաիրացման պահանջմունքները:

Այս պահանջմունքները, ըստ Մասլոուի, աստիճանակարգային բնույթ ունեն, որում ֆիզիոլոգիական պահանջմունքները համարվում են ստորին, իսկ ինքնահաստատման և ինքնաիրացման պահանջմունքները՝ վերին աստիճանը: Ստորին պահանջմունքների բավարարման դեպքում մարդու գործողությունները որոշում են վերին պահանջմունքները: Միևնույն ժամանակ ֆիզիոլոգիական պահանջմունքները կարող են փոխակերպվել կենսամակարդակի բարձրացման, անվտանգության պահանջմունքը՝ սոցիալական խաղաղության, օրենքի և օրինականության, սիրո պահանջմունքը՝ սոցիալական նույնացման (պատկանելության զգացում որևէ սոցիալական խմբին, շարժմանը, կուսակցությանը և այլն), ինքնահաստատման պահանջմունքը՝ սոցիալական կարգավիճակի և հեղինակության բարձրացման, ինքնաիրացման պահանջմունքը՝ սեփական շահերի արտահայտման և իրականացման պահանջմունքի: Երբ հասա-

ռակության մեջ չեն բավարարվում անհատի առաջնային պահանջ-մունքները, նրա քաղաքական վարքը և մասնակցությունը բնու-թագրվում և որոշվում են սոցիալ-տնտեսական պահանջմունքների և սոցիալական-իրավական պաշտպանվածության պահանջմունքների անբավարարվածությամբ: Այսպես, Հայաստանում ակնհայտ է բնակ-չության խոր մտահոգությունը՝ կապված բավական ցածր կենսամա-կարդակի և անվտանգության հիմնախնդիրների հետ: Դրան համա-պատասխան, քաղաքացիների մասնակցությունը տեղի է ունենում հօգուտ կենսամակարդակի բարձրացման, սոցիալական պաշտ-պանության, հանցագործությունների դեմ պայքարի լոզունգներով, որոնք արտացոլում են ստորին երկու պահանջմունքների անբավա-րարվածությունը:

Ժամանակակից քաղաքագիտության մեջ արևմտյան քաղաքա-կան վարքի փոփոխությունների բացատրման առումով լայն տա-րածում ստացավ Ռ. Ինգլիարտի կոնցեպցիան, որի համաձայն, կա-յուն, տնտեսապես զարգացած երկրներում, որտեղ բավարարված են մարդկանց նյութական պահանջմունքները, տեղի է ունենում առաջընթաց դեպի պոստ–նյութական արժեքային համակարգ: Դա արտացոլվում է պահանջմունքների համակարգի փոփոխություններ-ով. առաջին պլան են գալիս կենսորակի, էկոլոգիայի բարելավման, որոշումների ընդունման գործընթացներին անձի ներգրավվածութ-յան, բյուրոկրատիայի հաղթահարման և իշխանության անդեմութ-յան, սոցիալական հարաբերությունների ներդաշնակեցման որակա-պես նոր պահանջմունքներ և այլն:

Կարծում եմ, բավական իրատեսական է Ինգլիարտի կոնցեպ-ցիան հատկապես այն տեսանկյունից, որ նախ պետք է բավարարել մարդկանց նյութական պահանջմունքները, ապա նոր միայն նրան-ցից սպասել քաղաքական ակտիվության նորովի դրսևորումներ:

Քաղաքական մասնակցության վրա նշանակալից ազդեցություն ունեն զանգվածային լրատվության միջոցները: Ինչպես իրավացիո-րեն նշում է Վ. Ա. Մելնիկը, տեղեկատվությունը հասարակական կե-ցության չեզոք բաղկացուցիչ չէ, այլ քաղաքական պայքարի կարևոր միջոց: Այն օգտագործվում է իշխող խմբերի կողմից իրենց իշխա-նության ամրապնդման համար: Այդ նպատակով նրանք փորձում են հսկել քաղաքական տեղեկատվությունն ուղղակի և անուղղակի մե-թոդներով:

Հարկ է նշել, որ տեղեկատվական հոսքի վրա ազդելու հնարա-

վորությունները տարբեր քաղաքական համակարգերում տարբեր են: Միևնույն ժամանակ տեղեկատվության բաշխման և հսկման ձևը շատ կարևոր ցուցանիշ է հենց քաղաքական համակարգի համար, որը հիմնված է ինչպես բնակչության քաղաքական մասնակցության, այնպես էլ քաղաքական վարչակարգի վրա: Այս իմաստով ժամանակակից քաղաքագիտության մեջ քաղաքական մասնակցությունը ենթադրում է, որ կարևոր տեղեկատվությունը պետք է հասանելի լինի հասարակության յուրաքանչյուր քաղաքացու համար: Արդեն իսկ տարրական տեղեկատվությունը տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ քաղաքացու մոտ ցանկություն է առաջացնում ինչ-որ ձևով ազդել, այսինքն մասնակցել քաղաքական կյանքին: Իսկ երբ քաղաքական տեղեկատվությունը խստորեն հսկվում է իշխանությունների կողմից, անհատների քաղաքական մասնակցության աստիճանը կտրուկ իջնում է: Հետևաբար, ով տիրապետում է տեղեկատվությանը, նա էլ ի վիճակի է ազդել զանգվածների քաղաքական գիտակցության, ինչպես նաև քաղաքական վարքի վրա: Ուստի, ինչպիսին տեղեկատվության ազդեցությունն է քաղաքական գիտակցության և վարքի վրա, ըստ այդմ դրսևորվում է մարդկանց քաղաքական մասնակցության ձևն ու աստիճանը: Պատահական չէ, որ զանգվածային տեղեկատվությունը՝ ռադիոն, մամուլը, հեռուստատեսությունը, իրավամբ, կազմում են «չորրորդ իշխանություն», որի կարծիքի հետ չեն կարող հաշվի չնստել կառավարողները, լիդերները: Որպես այս գործընթացի տրամաբանական արդյունք, կարելի է փաստել այն հանգամանքը, որ այժմ արդեն շատ երկրներում կան հատուկ ինստիտուտներ, որոնք զբաղվում են քաղաքացիների կարծիքների ուսումնասիրություններով:

Քաղաքականությամբ հետաքրքրվող և ակտիվ մասնակցություն ունեցող մարդիկ, որպես կանոն, փոքրամասնություն են կազմում: Մեծամասնությունը ցուցաբերում է անտարբերություն և հակակրանք, ինչը բնորոշ է շատ քաղաքական համակարգերի: Այս երևույթը բացատրվում է բազմաթիվ պատճառներով: Այսպես, շատերը քաղաքական կյանքից դուրս են մնում անձնական զարգացման ցածր մակարդակի պատճառով, երբ կորցնում են հավատը սեփական հնարավորությունների նկատմամբ և վստահ չեն, որ կարող են ազդել քաղաքական գործընթացների վրա: Մարդիկ հիասթափվում են քաղաքականությունից, քանի որ էական տարբերություններ չեն տեսնում տարբեր քաղաքական կուսակցությունների և նրանց ծրագրերի

միջև: Նրանք գտնում են, որ անկախ իրենց մասնակցությունից, քաղաքական որոշումները կայացնում է ընտրյալ փոքրամասնությունը:

Կան մարդկանց խմբեր, որոնք թշնամաբար են տրամադրված քաղաքական համակարգի և նրա ինստիտուտների նկատմամբ: Ուստի նրանք քաղաքական բոյկոտի, չմասնակցության դիրք են բռնում: Օրինակ, հեղափոխության ժամանակ շատերը հրաժարվում են նոր ձևավորվող քաղաքական ուժերի հետ համագործակցությունից՝ չընդունելով նրանց դիրքորոշումները: Սակայն բացառված չէ, որ փոփոխվող պայմաններում վերոնշյալ մարդիկ դառնան քաղաքական գործընթացի ակտիվ մասնակիցներ:

Ինչ վերաբերում է քաղաքացիների օտարմանն իշխանություններից և անհատականացմանը զանգվածային կողմնորոշումներում, որոնք հանդիսանում են հասարակական ինքնագործունեության աճի գլխավոր խոչընդոտներ, ապա այստեղ ոչինչ միանշանակ չէ, ինչ թվում է առաջին հայացքից:

Այսպիսով, քաղաքական մասնակցության դրդապատճառների ուսումնասիրությունը հստակ ցույց է տալիս, որ դրանք անձի վրա ունեն երկակի ազդեցություն: Մի կողմից, ձևավորում են քաղաքականապես ակտիվ մարդ, ով գիտակցում է իր կարևորությունը որոշումների ընդունման գործընթացներում, մյուս կողմից, կերտում են պասիվ անհատներ, ովքեր քաղաքականությունից օտարվում են բազմաթիվ և բազմազան պատճառներով:

Հանձնարարվող գրականություն

1. **Atkinson J., Feather N.**, A theory of achievement motivations N. Y., Wiley, 1966, p. 19., p. 19

2. В. Н. Жуков, Б. И. Краснов, Общая и прикладная политология, М., 1993

3. **Василика М. А.,** Политология, М., 1999, с. 390

4. **Инглхарт Р.,** Кулътурный цдвиг в зрелом постиндустриалалъном обществе. Новая постиндустриалъная волна на Западе.под.ред. В. Л. Иноземцова, М., 1999, с. 249-260

5. **Maslow A.,** Motivations and Personality, n.Y., Haroler and Row, 1954., p. 45

6. **Лихачев Б. Т.,** Воспитателъные аспекты обучения, М., 1982.

7. **Pie L.,Verba S.,** Political culture and political development, Princeton,1965.

Դասախոսություն 11

Քաղաքական մասնակցության վրա ազդող գործոնները

Քաղաքական մասնակցության, նրա վրա ազդող գործոնների հետազոտությունները կարևոր նշանակություն ունեն տվյալ հիմնահարցի հետազոտման համար: Դա բացատրվում է ներկայիս հասարակական-քաղաքական պայմանների փոփոխությամբ, ժողովրդավարության կառուցման գործընթացներով, որոնք քաղաքացիական հասարակության կերտման գործընթացի կարևորագույն բաղկացուցիչներ են: Իսկ ժողովրդավարությունն անհնար է պատկերացնել առանց քաղաքական մասնակցության:

Խոսելով քաղաքական մասնակցության վրա ազդող գործոնների մասին՝ հարկ է պարզաբանել ժողովրդավարության կապը քաղաքական մասնակցության հետ:

Մենք ապրում ենք այնպիսի ժամանակաշրջանում, երբ ժողովրդավարության և խաղաղության կոչը հնչում է ողջ աշխարհում: «Ժողովրդավարություն» բառը հիմա արդեն հայտնի է բոլորին, բայց այն հաճախ սխալ է մեկնաբանվում և օգտագործվում է այն ժամանակ, երբ ամբողջատիրական ռեժիմներն ու ռազմական բռնապետությունները հավակնում են ստանալ ժողովրդի աջակցությունը՝ քողարկվելով ժողովրդավարական պիտակներով: Տեղին է նշել Աբրահամ Լինկոլնի հայտնի միտքը. «Ժողովրդավարությունը ժողովրդական կառավարումն է, որն իրականացվում է ժողովրդի կողմից, հանուն ժողովրդի»:

Ժողովրդավարությունն ազատությունն է օրինականության շրջանակներում, որը ներառում է մարդու հիմնական իրավունքները և պարտականությունները: Ինչպես նշում է ամերիկյան ժողովրդավարության հայրերից մեկը՝ Թոմաս Ջեֆերսոնը՝ «Բոլոր մարդիկ ի ծնե ստեղծված են հավասար և Արարչի կողմից օժտված են որոշակի անբաժանելի իրավունքներով, որոնք են՝ կյանքի իրավունքը, ազատության և երջանկության իրավունքը»: Ժողովրդավարական հասարակություններում կառավարությունները չեն շնորհում այդ իրավունքները: Նրանք ստեղծված են, որպեսզի պաշտպանեն դրանք, որոնցով օժտված է յուրաքանչյուր անձ իր ծննդյան պա-

հից: Բացի իրավունքներից, քաղաքացիները ստանձնում են որոշակի պարտականություններ, որոնք ենթադրում են քաղաքացիների մասնակցություն ժողովրդավարության գործընթացներին: Քաղաքացիները պետք է տեղյակ լինեն հասարակության առջև ծառացած ամենակարևոր խնդիրների մասին թեկուզ այն բանի համար, որ գիտակցորեն գնան քվեարկության և ընտրեն արժանավորին: Թերևս այսօրինակ գիտակցությունը կարող է հիմնաքարային արժեք ունենալ քաղաքացիական հասարակության կայացման համար:

Ժողովրդավարական վարչակարգի բնորոշ հատկանիշն այն է, որ կառավարությունը ծնվում է ընտրության միջոցով: Բավարար չէ, որ ընտրություններն անցկացվեն պարբերաբար, անհրաժեշտ է, որ վարչակարգը հենվի ընտրովի կառավարության վրա, որովհետև ժողովրդավարության անհրաժեշտ պայմանը կառավարության հերթափոխությունն է ընտրությունների հետևանքով և ոչ այլ ճանապարհով:

Ժողովրդավարական հասարակության կառուցումը բարդ ու երկարատև գործընթաց է: Նրա արգասավոր արդյունքը ժողովրդավարական մշակույթն է լայն առումով, որն իր մեջ ներառում է ոչ միայն արվեստը, այլև մարդկանց միջև նորմալ փոխհարաբերությունները, վարվելակերպը՝ հիմնված փոխադարձ հարգանքի, դիմացինի իրավունքների լիակատար ճանաչման, հանդուրժողության և այլ բարիդրացիական հարաբերությունների վրա:

Քաղաքական մասնակցության բնույթի և ուղղվածության վրա էական ազդեցություն ունի հասարակության քաղաքական կուլտուրայի մակարդակը, որն իր հերթին արտացոլվում է ժողովրդավարական արժեքների և ինստիտուտների ընդունման ու ընկալման մեջ: Ասվածից կարելի է ենթադրել, որ հասարակական գիտակցության մեջ ինչքան բարձր տեղում են ժողովրդավարական արժեքները, այնքան բարձր է քաղաքական մասնակցության աստիճանը, այնքան քաղաքացիների և իշխանության միջև փոխհարաբերությունները քաղաքակիրթ բնույթ են կրում: Եվ, հակառակը, որքան ցածր է ժողովրդավարական իրավունքների և ազատությունների նշանակության աստիճանը, այնքան բնակչության զգալի մասի մոտ նկատվում է հակակրանք և օտարացում քաղաքական կյանքից:

Քաղաքական մասնակցության վրա էական ազդեցություն է գործում ինչպես երկրի, այնպես էլ առանձին քաղաքացիների տնտեսական վիճակը: Գաղտնիք չէ, որ նոր շուկայական պայմաններին և քրոնիկ ճգնաժամերին հարմարվելու ընթացքում օբյեկտիվորեն

բախվում են մարդկանց մեծամասնության շահերը: Հետևելով վերջին միտումներին՝ կապված հասարակարգի փոփոխությունների հետ՝ դժվար չէ նկատել, որ իրական կյանքում դրսևորվում է երկու պահ. մի կողմից՝ նյութական ապահովվածության ցածր մակարդակը սառեցնում է բնակչության որոշ մասի քաղաքական ակտիվությունը՝ օտարելով նրան հասարակության քաղաքական կյանքից, մյուս կողմից՝ «ջերմացնում» է բնակչության քննադատական և բողոքական տրամադրությունները:

Իրապես, որոշակի է կախվածությունը մարդկանց նյութական դրության և իշխանությանը տված իրենց գնահատականի միջև: Այսինքն, գնահատականը բարձր է բնակչության այն շերտերի մոտ, ովքեր ունեն ազատ դրամական միջոցներ,և բավական ցածր է նրանց մոտ, ովքեր չեն կարողանում հոգալ իրենց առօրյա պահանջները: Դա միանգամայն հասկանալի է, քանի որ հենց ապահովված խավը հնարավորություն ունի պաշտպանելու սեփական շահերը:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ բնակչության բարձր եկամուտներ ունեցող շերտերը շատ հաճախ ունեն համախմբվածության բարձր աստիճան: Անհրաժեշտության դեպքում նրանք պատրաստ են մասնակցել ցույցերին, գործադուլներին և այլ զանգվածային շարժումներին: Դա պատահական չէ, քանի որ մարդիկ անհամեմատ վճռականորեն են տրամադրված լինում, երբ վտանգ է սպառնում նրանց շահերին: Դրա հետ մեկտեղ, առավել ապահովված քաղաքացիների պատրաստակամությունը կարող է փոխարինվել բողոքական մասնակցությամբ միայն ծայրահեղ դեպքերում: Քաղաքական ներգրավվածության, ինչպես նաև բողոքականության մակարդակը շատ դեպքերում կապված է ոչ միայն քաղաքացիների իրական նյութական դրության, այլև նրանց ընդհանուր սոցիալական ինքնազգացողության հետ, որը ներառում է երկրի վիճակի գնահատականը, սոցիալական և մասնագիտական կարգավիճակը և այլն:

Քաղաքական մասնակցության վրա էական նշանակություն ունի սոցիալ-մասնագիտական կարգավիճակի ազդեցությունը: Մասնավորապես, տարբեր սոցիալ-մասնագիտական խմբերում քաղաքական մասնակցության ձևերի հանդեպ նկատվում է դիրքորոշումների տարբերակում, որը պայմանավորված է հասարակության կենսագործունեության կոնկրետ ոլորտներում տարբեր իրավիճակներով, ինչպես նաև դերային գործառույթներով: Չնայած նյութական դրության՝ տարբեր խմբերի սոցիալական կարգավիճակի և քաղաքական մաս-

նակցության բողոքական ձևերի միջև կախվածություն իրականում գոյություն ունի: Այնուամենայնիվ, Հայաստանում դեռևս ընդգծված ձևով դրսևորված չեն «վերև» և «ներքև» հատուկ սուբկուլտուրաները: Ուստի քաղաքական մասնակցության վրա վճռորոշ ազդեցություն ունեն սոցիալ–մշակութային և սոցիալ-հոգեբանական գործոնները:

Քաղաքական մասնակցության սոցիալական գործոնների տեսության շրջանակներում հետազոտվում են այնպիսի ազդակների փոխկապակցվածությունը, ինչպիսիք են՝ սոցիալ-տնտեսական հավասարության մակարդակը, սոցիալական մոբիլությունը, քաղաքական կայունությունը և այլն:

Ս. Լիփսեթը և Դ. Լերներն առաջարկում են քաղաքական մասնակցության երկու մոդել՝ լիբերալ և պոպուլիստական: Լիբերալ մոդելը հիմնականում վերաբերում է լիբերալ-ժողովրդավարական երկրներին, իսկ պոպուլիստական մոդելը բացատրում է զարգացող երկրների քաղաքական գործընթացները և անհատների մասնակցությունն այդ գործընթացներին:

Լիբերալ մոդելի համաձայն, դինամիկ սոցիալ-տնտեսական զարգացումը նպաստում է սոցիալական անհավասարության վերացմանը, հետևաբար, ապահովում է քաղաքական կայունություն: Այս երկու գործոնները վճռական ազդեցություն ունեն քաղաքական մասնակցության ժողովրդավարական բնույթի վրա:

Պոպուլիստական մոդելը, ըստ Լիփսեթի և Լերների, ելնում է ուղղակի մասնակցության ձևերից, այսինքն ուղղված է նյութական բարիքների և սեփականության վերաբաշխմանը: Մասնակցության այս մոդելը խոչընդոտում է տնտեսական արդիականացմանը, տնտեսության զարգացման սոցիալական պայմանների բարելավմանը, հանգեցնում է քաղաքական կայունության խախտման: Արդյունքում կուտակվում են չլուծված հիմնախնդիրներ, կրկնապատկվում են քաղաքական համակարգի նկատմամբ պահանջները, բարձրանում է քաղաքական մասնակցության աստիճանը: Սակայն նշենք, որ այս պարագայում քաղաքական մասնակցությունը ոչ միայն չի նպաստում քաղաքական համակարգի ամրացմանը, տարբեր սոցիալական խմբերի շահերի բավարարմանը, այլև ապակայունացնում է քաղաքական համակարգը:

Քաղաքական մասնակցության և անկայունության փոխկապվածությունը բավական ցայտուն է արտահայտվում զարգացող երկրներում: Այս կապը վերլուծված է Ս. Հանտինգտոնի «Քաղաքական

կարգը փոփոխվող հասարակություններում» գրքի մեջ: Ամերիկյան քաղաքագետն իր դիտարկումներն ամփոփում է երեք բանաձևերով.

$$\frac{\text{Քաղաքական մասնակցություն}}{\text{Քաղաքական ինստիտուցիոնալացում}} = \textbf{Քաղաքական անկայունություն}$$

$$\frac{\text{Սոցիալական ֆրուստրացիա}}{\text{Մոբիլություն}} = \textbf{Քաղաքական մասնակցություն}$$

$$\frac{\text{Սոցիալական հավաքագրում}}{\text{Տնտեսական զարգացում}} = \textbf{Սոցիալական ֆրուստրացիա}$$

Հանտինգտոնի կարծիքով, ժամանակակից ավտորիտարիզմի պայմաններում կայունության ապահովումը պետք է կապված լինի զանգվածների քաղաքական մասնակցության դերի սահմանափակման հետ, հակառակ դեպքում կարող է հարվածել ինստիտուտների հուսալիությանը: Պարադոքսը այն է, որ զանգվածների անբավարարվածությունն իրենց սոցիալական վիճակից, հասարակության մեջ գոյություն ունեցող մոբիլության սղությունից անխուսափելիորեն բարձրացնում է քաղաքական մասնակցության աստիճանը: Իր հերթին, սոցիալական ֆրուստրացիայի մակարդակը բարձրանում է սոցիալական հավաքագրման և տնտեսական իրավիճակի խորացմանը զուգընթաց: Այս առիթով մեջբերենք Հանտինգտոնի խոսքերը. «Ուրբանիզացիան, աճող գրագիտությունը, կրթությունը և ՁԼՄ-ը, որպես սոցիալական համախմբվածության դետերմինանտներ, նպաստում են զանգվածային սպասումների աճին, որոնք բավարարված չեն: Ուժեղ քաղաքական ինստիտուտների բացակայությամբ մասնակցության այդպիսի աճը նշանակում է անկայունություն և բռնություն»:

Այսպիսով, քաղաքական մասնակցության համար անհրաժեշտ պայմաններ են ինստիտուցիոնալացման բարձր մակարդակը, կայուն քաղաքական համակարգը, զանգվածների սոցիալական ֆրուստրացիայի ցածր մակարդակը, արդյունավետ ուղղահայաց և զուգահեռ փոխկապակցվածությունը և այլն:

Քաղաքական մասնակցության սոցիալական գործոններից բացի մեծ դեր են խաղում հոգեբանական գործոնները: Այս տեսանկյունից կարևորվում են մարդկանց արարքների հոգեբանական հետա-

զոտությունները: Քաղաքական վարքի ժամանակակից մեկնաբանությունները, ունենալով տարբեր մեթոդաբանական հիմքեր, այնուամենայնիվ հանգում են «խթան-ռեակցիա» սխեմային, որտեղ խթանը և ռեակցիան միջանկյալ գործոններ են, միջին շղթա, որը կարող է լինել դրդապատճառ, համոզմունք կամ արժեք առանձին քաղաքացու կամ խմբի համար: Դա նշանակում է, որ քաղաքական վարքի ոչ մի ձև չի կարելի ուղղակիորեն բացատրել որպես քաղաքական խթանների ազդեցության արդյունք: Այդպիսիք կարող են լինել հանուն գոյատևման դրսևորվող քաղաքական ակտիվության պարզ ձևերը: Մյուս բոլոր գործողությունները միջնորդավորված են քաղաքական գործունեությամբ, նրա արտացոլմամբ մարդու մտածողության և զգացմունքների մեջ: Ուստի հարկ է նշել գործունեության բացառիկ կարևորության մասին, առանց որի քաղաքական մասնակցության մասին խոսք անգամ չի կարող լինել:

Լ. Ս. Վիգոտսկին, Ա. Ն. Լեոնտևը և Ա. Ռ. Լուրին, հետագայում շատ ուրիշներ, արդյունավետ վերլուծեցին գործունեության տարբեր ձևեր, և այդ մոտեցումն իրենց կողմից անվանվեց գործունեութենական:

Այս մոտեցումը մերժում է մարդուն ուսումնասիրել մեկուսացված վիճակում, հետևաբար պահանջ է դրվում մարդու վարքն ուսումնասիրել քաղաքական համակարգի զարգացման ընթացքում: Գործունեութենական մոտեցման կողմնակիցները, չհրաժարվելով «վարք» կատեգորիայից, գերադասում են խոսել գործունեության մասին: Տվյալ դեպքում վարքը մեկնաբանվում է որպես գործունեության արտաքին դրսևորում՝ առանց հաշվի առնելու նրա սուբյեկտիվ բաղկացուցիչները: Սակայն դժվար է համաձայնել այս դրույթի հետ, քանի որ մարդու վարքի մասին հստակ պատկերացում տալիս են ոչ միայն քաղաքական համակարգի զարգացման գործընթացները, այլև հնարավոր ծայրահեղ լարված իրադրությունները տվյալ երկրում:

Քաղաքական գիտության մեջ «քաղաքական վարք» տերմինը ներառում է ինչպես առանձին մասնակիցների, այնպես էլ զանգվածների գործողությունները, ինչպես իշխանության սուբյեկտների կազմակերպված, այնպես էլ տարերային գործողությունները: Դեռ ավելին, դեմ քվեարկելը կամ ընտրություններին չմասնակցելը ևս մեկնաբանվում են որպես քաղաքական վարքի ձևեր: Սրա հետ կապված՝ Դ. Իստոնն իր առջև խնդիր է դնում բացահայտել մարդու արարքների և միջավայրերի միջև կապերը: Այսպես, Իստոնն առաջարկում է մոտեցում, այսպես կոչված իրադրային: Իրադրային

գործոնները, նրա կարծիքով, ներառում են ֆիզիկական միջավայրը, օրգանական միջավայրը և սոցիալական միջավայրը:

Հետազոտողի կարևոր խնդիրներից է օբյեկտիվ գործոնների (սոցիալ-տնտեսական) և ժողովրդավարական ռեժիմի միջև կախվածության բացահայտումը: Այդ առումով, ելնելով մեր իրականության դիտարկումներից, նկատենք, որ վերոնշյալ երկու պարամետրերի միջև գոյություն ունի ուղիղ կախվածություն. զարգացած ժողովրդավարական համակարգը ենթադրում է սոցիալ-տնտեսական զարգացման բարձր մակարդակ:

Այս գործոններն ունեն օբյեկտիվ բնույթ և կախված չեն այն բանից, թե ինչ են մտածում քաղաքական գործընթացի մասնակիցներն այդ առիթով:

Հանձնարարվող գրականություն

1. **Diamond L.,** Political Culture and democracy in developing countries, USA, 1993, p. 35

2. **Diamond, L**. “Universal Democracy?” Policy Review, June-Jule 2003, p1. (ինտերնետ տարբերակ)

3. **Леонтъев А. Н.,** Деятелъностъ, Сознание, Личностъ, М.,1975, с. 75-79

4. **Истон А.,** Новая революция в политической науке, Социально-политический журнал, 1993, N.8., с.17-19

5. **Huntiington S. P.,** Political Order in Changing Societes, New Haven, 1968, p.17-25.

Դասախոսություն 12

Քաղաքական մասնակցությունը՝ արդի ժողովրդավարության հրամայական

Մասնակցային ժողովրդավարության խնդիրները լուրջ մարտահրավեր են հետազոտողների, քաղաքագետների, հասարակական շարժումների ակտիվիստների համար ինչպես ինտելեկտուալ, այնպես էլ կազմակերպչական տեխնիկական առումներով:

Միայն արտաքուստ դիտարկման ժամանակ մասնակցության ժողովրդավարությունը կարող է դիտվել տեսականորեն և գործնականորեն պարզ երևույթ: Իրականության մեջ սակայն ոչ ամեն ինչն է այդքան պարզ: Առաջին հերթին պետք է նշել, որ չնայած մասնակցության ժողովրդավարության թեման արդիական դարձավ 1960-ականների Արևմտյան Եվրոպայի և հատկապես ԱՄՆ-ի երիտասարդական և ուսանողական շարժումների էական ազդեցությամբ: Միևնույն ժամանակ այն լուրջ քննարկումների առարկա դարձավ քաղաքագիտական, սոցիոլոգիական և փիլիսոփայական հետազոտությունների շրջանակներում համեմատաբար վերջերս: Բացի դրանից պետք է նշել, որ մինչև օրս էլ այն մնում է որպես գաղափարական կառույց, որը դեռ պետք է իր ձևակերպումը ստանա սոցիալական իրականության մեջ:

Գործնականում բոլոր քննարկումները ծավալվում են մասնակցության ժողովրդավարության շուրջ, որպես նորմատիվային մոդելի: Եվ չնայած այն բանին, որ պարբերաբար կառուցումները հենվում են պատմական և արդի սոցիալական իրականության որոշակի տարրերի վրա, իդեալական մոդելն ամբողջությամբ սոցիումում իր բարձրակետին չի հասել: Դրա համար սոցիալ-քաղաքական գիտությունը բախվում է շատ լուրջ դժվարությունների հետ հատկապես այն պատճառով, որ դրանք ոչ միշտ են համապատասխան և առավելևս միանշանակ կառուցում և ապակառուցում բազմաչափ սոցիալական իրականությունը:

Միաժամանակ կասկած չի հարուցում այն փաստը, որ մասնակցային ժողովրդավարությունը կարող է դառնալ արդի ժողովրդավարության բավականին առաջադեմ տարածևերից մեկը, որը կկարողանա հաղթահարել նախ և առաջ գլոբալացման և ժողովրդավա-

րական քաղաքական ինտեգրացիայի առաջարկները, ինչպես նաև ժողովրդավարական պետությունների սահմաններում գոյատևող ժողովրդավարությունների վերաճումը որակապես նոր մակարդակի:

Առայժմ ժողովրդավարական մասնակցությունը սիմվոլիկից դառնում է գործուն կոնցեպտ միայն զարգացած ժողովրդավարական երկրների համար: Օրինակ, Եվրոպական Միության երկրներն արդեն մասնակցության հարցը քննում են գործնական դաշտում: Անցումային շրջանի երկրների համար ժողովրդավարական մասնակցությունը դեռ շատ հեռու նախագիծ է: Կարելի է նշել, որ խոսքը գնում է հատուկ ժողովրդավարական մասնակցության երևույթի մասին, այլ ոչ թե քաղաքացիական մասնակցության մասին ընդհանրապես: ԱՊՀ պետությունների մի մասը (ինչպես նաև Հայաստանը) գամվել են «կեղծ ժողովրդավարական» մակարդակին (ըստ Լ. Դայմոնդի սանդղակի) և, ձևավորելով լավագույն դեպքում այսպես կոչվող «հիբրիդային» ռեժիմ, չեն կարողացել վերցնել «էլեկտորալ»(ընտրական) ժողովրդավարության ձողը:

Այլ կերպ ասած, արդիական է մնում ժողովրդավարական հասարակության ամենատարրական ձևի նվազագույն շեմի հաղթահարումը: Արդյո՞ք շուտ է խոսել առաջադեմ ժողովրդավարական մակարդակների և խնդիրների մասին: Արդյո՞ք ժողովրդավարական մասնակցության գաղափարն անհասանելի և, հետևաբար, վնասակար ուտոպիա չէ այդ երկրների համար: Այդ հարցերին հնարավոր չէ տալ միարժեք պատասխան, քանի որ այս դեպքում պատասխանը ոչ թե գիտական, այլ քաղաքական նախասիրությունների և քաղաքացիական դիրքի մակարդակում է:

Ենթադրելի է, որ ժողովրդավարական մասնակցության գաղափարներն ու մտքերը կարող են օգտակար լինել նաև մեր հասարակությունների համար ոչ միայն տեսական, գիտակցական կտրվածքով, այլ նաև գործնականում և պրակտիկայում:

Խոսքը չի գնում արհեստական առաջանցման և սոցիումի զարգացման ընթացքում որոշ բնական և անխուսափելի փուլերի շրջանցման մասին: Կայուն, ֆունկցիոնալ և արդյունավետ ցուցադրական ժողովրդավարության ստեղծման ուղին պետք է լինի սահուն, եթե նպատակն է՝ հասնել արդի, առաջադեմ, քաղաքակիրթ հասարակությանը, որն ընդունակ է բավարարել իր անդամների հիմնարար պահանջմունքները: Ակնհայտ է, որ ինչքան արագ անցնեն այդ ճանապարհը, այնքան լավ: Բայց բառացիորեն ընդօրինակել և մե-

խանիկորեն կրկնօրինակել այդ ճանապարհով անցած երկրների փորձը, արդյունավետ չէ, քանի որ այն կհանգեցնի հին, չլուծված խնդիրներին նորերի ավելացմանը: Դրա համար հետապնդող մոդեռնիզացման մեթոդն այնքան էլ հարմար չէ և, փաստորեն, պետք է փոխարինվի օրգանական մոդեռնիզացման մեթոդով: Հենվելով ժողովրդավարության մասնակցության տարրերի ներուժի վրա՝ հնարավոր է ավելի արագ հասնել իրական ներկայացվող ժողովրդավարությանը և, որ պակաս կարևոր չէ, ապահովել ժողովրդավարության կոնսոլիդացումը:

Ի՞նչ պատահեց ժողովրդավարության հետ:

Անցած դարի վերջում ժողովրդավարությունը դարձավ ոչ միայն ունիվերսալ արժեք, այլ «20-րդ դարի գլխավոր իրադարձությունը»:

Ժողովրդավարության աճող հեղինակության հետ մեկտեղ աճում է դժգոհությունը, ընդ որում, հենց նրա կողմնակիցների մեջ, այսինքն նրանց, ովքեր գտնում են, որ ոչ ժողովրդավարական կառավարման ձևերն ընդունելի չեն: Այդ երևույթը բացահայտված և վերլուծված է Ռ.Դալի կողմից, որը որակվել է որպես «ժողովրդավարության պարադոքս»:Դրա համար Ռ. Դալը մտցրեց նոր հասկացություն՝ «պոլիարխիա», որն արտացոլում է ավելի առաջադեմ և կատարելագործված ժողովրդավարության նոր ձև: Աստիճանաբար ավելանում է զանգվածային դժգոհությունը ժողովրդավարությունից, իսկ «ժողովրդավարության ճգնաժամ» տերմինն արդեն հաճախակի է օգտագործվում ստեղծված իրավիճակի և հատկապես նրա միտումների նկարագրման համար: Հաճախ փորձեր են արվում «արդի ժողովրդավարության ախտանիշների» համար (ըստ ուկրաինական քաղաքագետ Իվան Գոլոտայի) պատասխանատվությունը դնել քաղաքացիների ուսերին՝ կապելով բոլոր պրոբլեմները նրանց տգիտության, անկումային տրամադրությունների հետ՝ այդպիսով արդարացնելով ձևավորված համակարգը և ժխտելով համակարգի ճգնաժամի ինքնին գոյությունը: Այդ պարագայում քաղաքական կառավարման ժողովրդավարական ձևերը, իրոք, ճգնաժամ են ապրում և գտնվում են իրենց կառուցման ինչպես կոնցեպտուալացման, այնպես էլ նրա կիրառական ձևերի իրականացման ինտենսիվ փնտրտուքների մեջ:

Ինչպես արտահայտվել է ամերիկացի հայտնի մասնագետ Ֆիլիպ Շմիտերը, չնայած խոսքը դեռ չի գնում ժողովրդավարական լեգիտիմության ընդհանուր ճգնաժամի մասին, բայց առկա են հիվանդության լուրջ ախտանիշներ: Դրանք ներառում են ընտրական մասնակ-

ցությունից հրաժարումը կամ որևէ քաղաքական կուսակցությանը օժանդակությունը, կառավարող կուսակցությունների և պաշտոնյա անձանց հաճախակի փոփոխությունը, քաղաքագետների հեղինակության անկումը և գործադիր իշխանության առաջին դեմքերին կոռուպցիայի մեջ մեղադրելու փորձերը և այլն: Իրականում սրանք վտանգավոր հիվանդության ախտանիշներ են: Եթե մարդն իրեն չի ընկալում որպես քաղաքացի և չի ձգտում դառնալ այդպիսին, ապա ոչ մի ժողովրդավարության մասին խոսք լինել չի կարող: Մեդիակրատիան, այսինքն տեղեկատվական իշխանությունը, մասնավորապես օլիգարխ մեդիակրատիան դոզավորված տեղեկատվությունը գդալով է կերակրում դեպրեսիվ վիճակ ապրող քաղաքացիներին, որն էլ, անշուշտ, վկայությունն է ժողովրդավարության «անկումային» ձևերի:

Բնական է, որ այս բոլոր գործընթացներն այս կամ այն ձևով տարածվում են նաև հետխորհրդային տարածության մեջ: Ռուսաստանում անցկացված հետազոտություններում «ժողովրդավարության առիթով հիացմունքները փոխարինվեցին հիասթափության»: Դժվար է չհամաձայնվել ամերիկացի հայտնի մասնագետ հետխորհրդային երկրների գծով Մարկ Խովարդայի այն կարծիքին, որ «շարքային քաղաքացիների ներգրավվածության և մասնակցության ցուցանիշ է այն, որ իր բնույթով հետկոմունիստական ժողովրդավարությունը դատարկ է և ձևական»: Դա վկայում է նախ և առաջ քաղաքացիական հասարակության և նոր ինստիտուտների թուլության մասին: Կարելի է եզրակացնել, որ առանց քաղաքացիական հասարակության ամրապնդման չի կարող վերակենդանանալ ժողովրդավարությունը և նպաստել ժողովրդավարացման գործընթացներին այս երկրում, քանի որ հասարակության քաղաքացիական կազմակերպություններին, հատկապես երրորդ սեկտորի շնորհիվ հաջողվում է բարձրացնել քաղաքացիական գիտակցության, ակտիվության և մասնակցության մակարդակը, ներմուծել հասարակական և քաղաքական գործունեության համապատասխան կարողություններ:

Դեռևս քառորդ դար առաջ Էրիխ Ֆրոմը նախազգուշացնում էր, որ ժողովրդավարությունը կարող է դիմակայել ինքնակալության սպառնալիքին միայն այն դեպքում, եթե նա պասիվ, այսինքն «դիտորդների» ժողովրդավարությունից վերածվի ակտիվ, այսինքն, երբ հասարակության գործերն առանձին քաղաքացիների համար լինեն նույնքան սրտամոտ ու կարևոր, որքան իրենց անձնական գոր-

ծերը, և երբ հասարակության բարօրությունը դառնա յուրաքանչյուր քաղաքացու անձնական գործը: Մասնակցության ժողովրդավարության կարևորությունը պայմանավորված է նրանով, որ նա հնարավորություն է տալիս հաղթահարել այսպես կոչված ժողովրդավարության դեֆիցիտը, որը Դ. Բորնհեմոմն անվանել է «քաղաքական աղքատություն»: Դրա արդյունքում քաղաքացիները վանվում են քաղաքական կարևոր որոշումներ ընդունելուց, քանի որ նրանց չմասնակցելը և լռությունը մեկնաբանվում է ղեկավարող փոքրամասնության կողմից որպես համաձայնություն իրականացվող կուրսի հետ:

Ի՞նչ է նշանակում մասնակցության ժողովրդավարություն:

Մասնակցության ժողովրդավարությունը հասարակության կազմակերպման այնպիսի ձև է, երբ քաղաքացիներն ակտիվորեն ներքաշված են անմիջականորեն քաղաքականության մշակման իրենց կարևոր հետաքրքրություններին վերաբերող որոշումների ընդունման, կառավարման գործունեության և պետական ու հասարակական ինստիտուտների գործունեության վերահսկման մեջ, որի ժամանակ տեղի է ունենում իշխանական գործառույթների և իրավասությունների զգալի վերաբաշխում կենտրոնի, շրջանների և տեղական համայնքների միջև: Սա ժողովրդավարության մի մոդել է, որը ենթադրում է քաղաքացիների բարձր ակտիվություն և ուղղակի մասնակցություն:

Սկզբունքների զգալի մեծամասնությունը, որի վրա հիմնվում է մասնակցության ժողովրդավարությունը և այն արժեքները, որոնց նա հակված է, ժողովրդավարության հատուկ և դեկլարատիվ ձևեր են: Դրանք են օրինակ՝ տոլերանդությունը, հարգանքը մարդու արժանապատվության նկատմամբ, մարդու կայուն զարգացումը, հարգանքը բոլոր քաղաքացիական, սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների հանդեպ և այլն: Սակայն մի շարք սկզբունքներ ավելի ցայտուն են արտահայտվում մասնակցության ժողովրդավարության դեպքում: Այդ սկզբունքները չեն կարող մնալ տեսական մակարդակում, այլ պետք է դառնան ֆունկցիոնալ, ինչպես ասում է Ռոբերտ Պատնեմը՝ ժողովրդավարությունն այս պարագայում պետք է աշխատի»: Ամենագլխավոր սկզբունքը քաղաքացիների մասնակցությունն է որոշումների մշակման և ընդունման, քաղաքականության մշակման, ինչպես նաև իշխանության հսկման և իրականացման մեջ: Ոչ պակաս կարևոր սկզբունք է քաղաքական գործընթացներին հասարակության բոլոր շերտերի հետաքրքրությունների ներկայաց-

վածության սկզբունքը:

Այն, որ մասնակցության ժողովրդավարությունը դառնում է իրականություն, խոսում է նրա իրավական կոդիֆիկացման մասին ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակում, զորօրինակ, ԱՄՆ-ում, սկսած 1964 թ.-ից, ընդունվել են բազմաքանակ որոշումներ, որոնք ընդլայնում են քաղաքացիների մասնակցությունը կարևոր որոշումների քննարկման և ընդունման, դրանց կատարման վերահսկողության մեջ:

Հանձնարարվող գրականություն

1. **Голота И.,** “Нормативные требование к политической культуре участия” с.2-3., интернет-версия. http://fppr.prg.ua
2. **Dahl R.,** “Democracy and Its Critics” New Haven & London:Yale Univ. Press,1989,p.221
3. **Красин Ю. А.,** “Демократия перед вызовами современности”. Обновление и стабилъностъ в современном обществе (Сравнителъный анализ). Под. ред. А. А. Галкина. М., 2000, с. 333-339
4. **Фромм Э.,** Иметъ или бытъ...Интернет версия, с. 49. http:// slon. nsys.by:
5. **Schmitter, Ph**. “Democray in Europe and Europe’s democratizations.” Journal of Democracy,October 2003,p.81-83
6. **Сунгуров А.,** ”Социалъные технологии участия как важнейший фактор в становлении ноосфери”. Интернет-версия. с. 1, http:// www.strategy-spb.ru

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հասմիկ Շափաղաթյան

Քաղաքական սոցիալականացում

Դասախոսություններ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Սրբագրումը՝ Լ. Հովհաննիսյանի

Տպագրված է «Արման Ասմանգուլյան» ԱՁ-ում:
ք. Երևան, Հր. Ներսիսյան 1/125

Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Տպ. մամուլը՝ 8,125:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2016
publishing.ysu.am